ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

4 (90). 2016

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ. ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻՑ ԴԵՊԻ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

СТРАТЕГИЧЕСКИЕ ОРИЕНТИРЫ СТАНОВЛЕНИЯ СИСТЕМЫ «НАЦИЯ–АРМИЯ»: ОТ ВСЕАРМЯНСКОГО ОПОЛЧЕНИЯ К ДЕМОКРАТИЧЕСКОЙ ОБЩЕНАЦИОНАЛЬНОЙ ОБОРОНЕ РА

THE STRATEGIC GUIDELINES FOR THE DEVELOPMENT OF THE "NATION–ARMY" SYSTEM: FROM ALL-ARMENIAN HOME GUARD TO DEMOCRATIC NATIONWIDE DEFENSE OF THE RA

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ»

(ԿՈԼԵԿՏԻՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի
և Վրաստանի Վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հանդիպումը.

Բագրատաշեն, 2016 թ. նոյեմբերի 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (90). **2016**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտական-փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Ջ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապրիամով Է. Ա.
Ավետիսյան Վ. Ն.
Դավթյան Ա. Մ.
Իսախանյան Մ. Ռ.
Խաչատրյան Կ. Ա.
Խաչատրյան Տ. Վ.
Խաչատուրով Յու. Գ.
Ղահրամանյան Ա. Բ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիրոսով Լ. Ա.
Յալանուզյան Ա. Կ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Յոլչյան Ն. Ի.
Նազարյան Ա. Ս.
Շահնազարյան Թ. Ն.
Շիրինյան Մ. Ա.
Պողոսյան Բ. Պ.
Սարգսյան Վ. Ռ.
Սեդրակյան Ս. Գ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Տոնոյան Դ. Է.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ՀՀ Պաշտպանության նախարար *Վիգեն Սարգսյանի* ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016) 7

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ. ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻՑ ԴԵՊԻ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (ԿՈԼԵԿՏԻՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Հ. Ս. Քոթանջյան, «Ազգ–բանակ» ռազմավարական համակարգը ՀՀ կիբեռթվային պաշտպանական–քաղաքական–տնտեսական–սոցիալական հեռանկարում 21

Պ. Ա. Չոբանյան, «Ազգ–բանակ». Հայոց աշխարհազորը պատմության հոլովույթում 32

Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյան, Լ. Ա. Սարգսյան, Հայոց Առաքելական Եկեղեցին և նրա սպասավորները աշխարհազորի պայքարում . . 39

Ա. Կ. Յալանուզյան, «Ազգ–բանակը» որպես Հայոց աշխարհազորի նորամուծական հեռանկար. ազգի մոբիլիզացման տեղեկատվական-կազմակերպական ռազմավարության ուղենիշները 49

Ա. Հ. Գրիգորյան, Կ. Ա. Գալոյան, «Ազգ–բանակ» ռազմավարության կիբեռկազմակերպական հեռանկարը. ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի միջազգային և միջգերատեսչական համագործակցությամբ ՀՀ կիբեռկարողությունների ծավալման ռազմավարության մշակումը որպես «ազգ–բանակ» համակարգի հեռամետ զարգացման ուղենիշ 60

Ա. Գ. Դավթյան, Ա. Պ. Պետրոսյան, Մ. Ա. Փարվանյան, «Ազգ–բանակ» համակարգի ձևավորման գործում պետական նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը որպես ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման խթանիչ գործոն. ՀՀ-ում ռազմավարական-պաշտպանական պատվերի նորամուծական հեռանկարը 72

Տ. Տ. Քոչարյան, Ս. Գ. Կեզիշյան, Հայաստանի Հանրապետությունում «ազգ–բանակ» հայեցակարգի կենսագործման ռազմավարական իրավանորմատիվային կողմնորոշիչները 88

Զ. Դ. Ասատրյան, «Ազգ–բանակ» համակարգի հոգեբանամանկավարժական ապահովման հիմնախնդիրը 102

Ա. Գ. Իսրայելյան, Գ. Վ. Աղաջանյան, «Ազգ–բանակ» համակարգի ներդրման արտաքին քաղաքական չափումը 112

Ա. Վ. Աթանեսյան, Հայաստանում բանակի և զինծառայողների հեղինակության ապահովման հիմնախնդիրները «ազգ–բանակ» հայեցակարգային մոդելի մշակման համատեքստում 121

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան, Ա. Ա. Մարտիրոսյան, Ն. Ս. Մկրտչյան, Լ. Հ. Պապիկյան, Ք. Վ. Փիրոյան, Համարի բառարան 136

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Կ. Ս. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Յ. Սայադյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ռ. Ա. Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Սիմոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 4 (90)**. 2016**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. Н., Айвазян Л. Г., Айдинян Р. А., Алексанян А. Дж., Априамов Э. А., Варданян А. Г., Давтян А. М., Елчян Н. И., Исаханян М. Р., Каграманян А. Б., Маргарян В. Г., Мартиросов Л. А., Назарян А. С., Погосян Б. П., Саргсян В. Р., Седракян С. Г., Тер-Григорьянц Н. Г., Тоноян Д. Э., Хачатрян К. А., Хачатрян Т. В., Хачатуров Ю. Г., Шахназарян Т. Н., Ширинян М. А., Яланузян А. К.* (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

КОНЦЕПЦИЯ «НАЦИЯ–АРМИЯ»

Выступление Министра обороны РА *Вигена Саргсяна* на заседании Коллегии при Министре обороны (29.10.2016) . . . . . 7 (11)*

СТРАТЕГИЧЕСКИЕ ОРИЕНТИРЫ СТАНОВЛЕНИЯ СИСТЕМЫ «НАЦИЯ–АРМИЯ»: ОТ ВСЕАРМЯНСКОГО ОПОЛЧЕНИЯ К ДЕМОКРАТИЧЕСКОЙ ОБЩЕНАЦИОНАЛЬНОЙ ОБОРОНЕ РА (КОЛЛЕКТИВНАЯ МОНОГРАФИЯ)

Г. С. Котанджян. Стратегическая система «нация–армия» в цифровой оборонно-политико-экономико-социальной перспективе 21 (24)

П. А. Чобанян. «Нация–армия»: всеармянское ополчение в историческом разрезе 32

Епископ Анушаван Жамкочян, Л. А. Саргсян. Армянская Апостольская Церковь и ее служители в ополченческой борьбе 39

А. К. Яланузян. «Нация–армия» как инновационная перспектива Армянского ополчения: ориентиры информационно-организационной стратегии мобилизации нации 49

А. Г. Григорян, К. А. Галоян. Киберорганизационная перспектива стратегии «нация–армия»: разработка стратегии развертывания кибервозможностей РА посредством международного и межведомственного сотрудничества Национального исследовательского университета обороны МО РА как ориентир грядущего развития системы «нация–армия» 60

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

А. Г. Давтян, А. П. Петросян, М. А. Парванян. Разработка и реализация государственных целевых программ в деле формирования системы «нация–армия» как стимулирующий фактор комплексного научно-технического и экономического развития РА: инновационная перспектива оборонно-стратегического заказа в РА 72

Т. Т. Кочарян, С. Г. Кегишян. Нормативно-правовые стратегические ориентиры реализации в Республике Армения концепции «нация–армия» 88

З. Д. Асатрян. Задача психолого-педагогического обеспечения системы «нация–армия» 102

А. Г. Исраелян, Г. В. Агаджанян. Внешнеполитическое измерение внедрения системы «нация–армия» 112

А. В. Атанесян. Задачи обеспечения авторитета армии и военнослужащих в Армении в контексте разработки концептуальной модели «нация–армия» 121

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян, А. А. Мартиросян, Н. С. Мкртчян, Л. Г. Папикян, К. В. Пироян. Словарь номера 136 (137)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, профессор;
Н. У. Аракелян, академик НАН РА;
Л. С. Арзуманян, доктор филологических наук;
Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
С. А. Галстян, доктор филологических наук, профессор;
С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;
Г. А. Геворкян, академик НАН РА;
К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук;
А. А. Манташян, академик НАН РА;
М. М. Маргарян, доктор политических наук, профессор;
Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
Р. А. Сафрастян, академик НАН РА,
О. Я. Саядян, доктор географических наук, профессор,
А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;
Ю. С. Чилингарян, академик НАН РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (90)**. 2016**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J., Apreamov E. A., Avetisyan V. N., Ayvazyan L. G., Davtyan A. M., Idinyan R. A., Isakhanyan M. R., Kaghramanyan A. B., Khachatourov Yu. G., Khachatryan K. A., Khachatryan T. V., Margaryan V. H., Martirossov L. A., Nazaryan A. S., Poghosyan B. P., Sargsyan V. R., Sedrakyan S. G., Shahnazaryan T. N., Shirinyan M. A., Ter-Grigoryants N. G., Tonoyan D. E., Vardanyan A. G., Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*

CONTENTS

THE "NATION–ARMY" CONCEPT

Speech of the Minister of Defense of the Republic of Armenia *Vigen Sargsyan* at the meeting of the Board under the Minister of Defense (29.10.2016) . . . . . 7 (15)*

THE STRATEGIC GUIDELINES FOR THE DEVELOPMENT OF THE "NATION–ARMY" SYSTEM: FROM ALL-ARMENIAN HOME GUARD TO DEMOCRATIC NATIONWIDE DEFENSE OF THE RA (COLLECTIVE MONOGRAPH)

H. S. Kotanjian. The "Nation–Army" strategic system in digital defense-political-economic-social prospect 21 (28)

P. A. Chobanyan. The Nation–Army: all-Armenian Home Guard in the historical evolution 32

Bishop Anushavan Zhamkochyan, L. A. Sargsyan. The Armenian Apostolic Church and its churchmen in the struggle of Home Guard 39

A. K. Yalanuzyan. The "Nation–Army" as an innovative prospect of the Armenian Home Guard: the guidelines of information-organizational strategy of the nation's mobilization 49

A. H. Grigoryan, K. A. Galoyan. Cyberorganizational perspective of the "Nation–Army" strategy: the design of the strategy of deploying the RA cyber capacities through international and interagency cooperation of the National Defense Research University, MOD, RA as a guideline for the forthcoming development of the "Nation–Army" system 60

* Numbers in brackets mean the page of the text in English.

A. G. Davtyan, A. P. Petrosyan, M. A. Parvanyan. The development and implementation of national target programs in the shaping of the "Nation–Army" system as a motivating factor of comprehensive scientific-technical and economic development of the RA: the innovative perspective of strategic and defense acquisition in the RA 72

T. T. Kocharyan, S. G. Kegishyan. Normative legal strategic guidelines of implementing the "Nation–Army" concept in the Republic of Armenia 88

Z. D. Asatryan. The problem of psychological and pedagogical support of the "Nation–Army" system 102

A. G. Israyelyan, G. V. Aghajanyan. The external political dimension of introducing the "Nation–Army" system 112

A. V. Atanesyan. The problems of ensuring the prestige of the army and servicemen in Armenia in the context of designing the "Nation–Army" conceptual model 121

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan, A. A. Martirosyan, N. S. Mkrtchyan, L. H. Papikyan, Q. V. Piroyan. Volume Dictionary 136 (137)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

R. V. Aghouzoumtsian, Candidate of Psychological Sciences, Professor;
N. H. Arakelian, Full Member, NAS RA;
L. S. Arzumanyan, Doctor of Philology;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
Yu. S. Chilingarian, Full Member, NAS RA;
K. S. Danielyan, PhD in Biology, Doctor of Geography;
S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;
S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
B. N. Harutyunyan, Doctor of Medical Sciences, Professor;
V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;
H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;
R. A. Safrastyan, Full Member, NAS RA;
Hov. Y. Sayadyan, Doctor in Geography, Professor;
A. H. Simonyan, Corresponding Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ *ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ* ԵԼՈՒՅԹԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԻՍՏՈՒՄ (29.10.2016)

Կոլեգիայի հարգարժան անդամներ, պարոնայք գեներալներ, սպաներ, քաղաքացիական հատուկ ծառայողներ

Մեր երկրի համար ռազմական անվտանգությունն օրհասական, անմիջական, բայց նաև երկարատև մարտահրավեր է: Մենք չենք կատարել այդ ընտրությունը, այն մեզ պարտադրվել է: Դարերի նիրհից զարթնած՝ մենք վերագտել ենք մեր ազգային ինքնությունը և ոչ միայն հռչակել անկախությունը, այլև կարողացել ենք պաշտպանել այն դաժան և անհավասար, բայց դրանից միայն ավելի հերոսական պատերազմում: Երկրաշարժի փլատակների, տնտեսության տապալման, էներգետիկ ճգնաժամի, պատերազմի զրկանքների, սոցիալական հարաբերությունների պատռտված պաստառից սկսեց վերածնվել «Հայաստան» կոթողային կտավը:

25 տարի առաջ պատմությունը մեզ մատուցեց մի անակնկալ, որին երկար էինք սպասում, երկար էինք պատրաստվում, երազում, բայց ինքներս էլ չէինք գուշակում, որ դա այդքան արագ տեղի կունենա: Եվ մենք երազածը ստացած մանուկի ոգևորությամբ նետվեցինք առաջ՝ չնկատելով մեր երեսին փչող սառը քամու ուժգնությունը: Մեր աչքի առջև, ավելի ճիշտ՝ հենց մեր շուրջ փլվում էր գերտերությունը՝ իր հետ տանելով մեր թվացյալ բարեկեցությունն ու հանդարտությունը, կանխատեսելիությունն ու վաղվա օրվա հանդեպ վստահությունը:

Կայծակնային արագությամբ կյանքը սովորեցրեց մեզ անհնարին թվացող բաների՝ խրամատներ փորել, ինքնաշեն ռադիոկայաններով կապ հաստատել, զենք հայթայթել, ընկերներ հուղարկավորել, կտրոնով հացի հերթ կանգնել, բազմաբնակարան շենքերում փայտե վառարաններ վառել: Թվում էր, թե ողջ աշխարհն է փուլ եկել, և կյանքն այլևս երբեք չի լինի նույնը:

Հայոց բանակը, հիրավի, ժողովրդի ծոցից դուրս եկած բանակ է, 25 տարի մեր ժողովրդի անվտանգության համար պայքարած բանակ, իր հասարակությանը հաղթանակների բերկրանք և հպարտություն բերած բանակ: Այն ազգային բանակ է, քանի որ միշտ ծառայել է իր ազգին և ազգային գաղափարներին: Բայց ազգ–բանակն անհամեմատ ավելին է, քան ազգային բանակը: Քանի որ ազգային բանակը ծառայում է ազգին, իսկ ազգ–բանակը հենց ինքը՝ ազգն է: Քանի որ տարածքի, բնակչության և երկրի համեմատ

մեր Զինված ուժերն անհամաչափ մեծ են, նրանք չեն կարող տարանջատվել այդ բնակչությունից: Չի կարող մեր հասարակությունը մեկուսացվել բանակից, կամ էլ բանակը՝ փակվել, ինքնամփոփվել, հեռանալ ժողովրդից: Միայն մտածեք՝ մեր յուրաքանչյուր 40-րդ քաղաքացի՝ նորածին մանուկից մինչև ալեհեր տարեց, համազգեստավոր է: Չկա ընտանիք, որի համար բանակն անձնական պատմություն չլինի:

Ազգ–բանակը այն հասարակությունն է, որը գործում է որպես մեկ միասնություն: Դա չի նշանակում հասարակության կամ պետության ռազմականացում: Ճիշտ հակառակը, նշանակում է բանակի ժողովրդավարացում, լիարժեք ինտեգրում հասարակության, տնտեսության, մշակույթի, կրթության և գիտության, բնապահպանության, սպորտի բնագավառներ: Դա նշանակում է բանակի ստեղծածն ու ձևավորածը ծառայեցնել ողջ հասարակությանն ու պետությանը, իսկ քաղաքացիական կյանքի բոլոր ձեռքբերումներով ամրապնդել երկրի Զինված ուժերը:

Ազգ–բանակը այն բանակն է, որի հետ անքակտելի կապը ոչ սկսվում և ոչ էլ ավարտվում է ժամկետային զինծառայությամբ: Դա այն բանակն է, որն ունի կրթող, դաստիարակող, ուսուցանող ներուժ, որ փոխանցում է իր ժողովրդին:

Ազգ–բանակը այն հասարակությունն ու Զինված ուժերն է, որոնց միջև շարժն աննկատ է, որտեղ նորարար գիտությունից դեպի ռազմաարդյունաբերական համալիր մեկ քայլ է, որտեղ տնտեսությունը աճում և ամրապնդվում է իր բանակի պատվերներով, ներդրումներով, ստեղծագործ կարողություններով, ոչ թե ձկռում է այդ ամենն իր ուսերին տանելու բեռի տակ:

Ազգ–բանակը այն վստահությունն է, որ հասարակությունն ունի դեպի իր Զինված ուժերը և դեպի իր սպայական անձնակազմը:

Դա այն հասարակությունն է, որում սպան ամենահարգված և մեծարված քաղաքացին է: Բայց նաև այն սպան է, որը բանիմացության, առաջնորդության, ինքնավստահության, բայց երբեք՝ ո՛չ ինքնագոհության մարմնացում է:

Ազգ–բանակը այն դպրոցն ու զորամասն է, որ միմյանց տրամաբանական շարունակությունն են, որտեղ ուսուցիչը, ծնողն ու հրամանատարը միասին են աշխատում վաղվա սերնդի դաստիարակության ուղղությամբ:

Դա այն բանակն է, որն իր երկրում արդյունավետ կառավարման, կոռուպցիայի վերացման, բարեվարքության, արդիականացման, հաջորդ սերունդների էլիտայի կերտման անվիճելի առաջատարն է:

Ազգ–բանակը պաշտպանության այն համակարգն է, որում զորահավաքին պատրաստ է յուրաքանչյուրը՝ հստակ իմանալով իր անելիքները, խնդիրներն ու միջոցները:

Ազգ–բանակը այն երկիրն է, որտեղ չկա զինվորական և քաղաքացիական, այլ կա համազգեստով քաղաքացի, և կա քաղաքացիական հանդերձանքով հայրենիքի պաշտպան:

Մենք դեռ երկար ենք ունենալու մեր հնարավորությունների համեմատ անհամաչափ մեծ զինված ուժեր պահելու անհրաժեշտություն: Իսկ դա նշանակում է, որ անհամաչափ մեծ թվով մեր քաղաքացիներ զորացրվելու են և անցնելու են զինվորական թոշակի: Որպեսզի այդ զինվորական թոշակառուները երբևէ չհամարվեն բեռ, մենք պետք է այնպես անենք, որ ծառայության ողջ ընթացքում Հայոց բանակի սպան կարողանա կատարելագործել իր գիտելիքներն ու հմտությունները՝ իրեն պատրաստելով զինվորականից քաղաքացիական կյանքի անցնելուն և իր հետ տնտեսություն, արդյունաբերություն, գիտություն, կրթություն բերելով բանակային կարգապահության, հայրենասիրության, արհեստավարժության, բարեկրթության ավանդույթները՝ դրանով իսկ ամրապնդելով մեր պետության անառիկությունը:

Ազգ–բանակը նաև այն հասարակությունն է, որը մշտապես կանգնած է իր զինվորական հաշմանդամի, իսկ եթե տեղի է ունեցել անուղղելին, նաև՝ զոհվածի ընտանիքի կողքին:

Ազգ–բանակը այն ընտանիքն է, որի հայրը կոփում է իր զավակին ծնված օրվանից, իսկ մայրը կարոտի անխուսափելի զգացումով, բայց մեծ համոզվածությամբ ճանապարհում է իր որդուն բանակ:

Բայց դա նաև այն բանակն է, որ ամուր է պահում զինվորի, հատկապես՝ ժամկետային զինվորի կապն իր ընտանիքի հետ և չի դառնում զավակին ընտանիքից մեկուսացնող պատժիչ հաստատություն:

Ազգ–բանակը այն ռազմական ուսումնական հաստատություններն են, որոնց շրջանավարտ լինելը պատվաբեր է և հարգի, քանի որ նրանց ուսումը պահանջված է և աշխատանք երաշխավորող, դասախոսները բանիմաց են և հմուտ, կուրսանտները երջանիկ են և պրպտուն, միջավայրն էլ ընկերական է և տրամադրող:

Դա նաև այն սպան է, որի զավակը առանց երկմտելու պատասխանում է, որ իր հայրիկի կամ մայրիկի նման երազում է ևս սպա դառնալ:

Ազգ–բանակը այն գործարարն է, որը բանակին ծառայություն մատուցելը համարում է պատիվ և պատասխանատվություն: Որը հացը իր պարտավորվածից մի քանի գրամ էլ ավելի է թխում, որ զինվորը կուշտ լինի, իսկ իր արտադրանքի մեջ օգտագործում է այնպիսի սննդամթերք, որ զինվորն առողջ լինի, և հպարտությամբ կարողանա իր զավակներին համտեսելու տալ՝ բացատրելով, որ համեղ է ու օգտակար, որովհետև այն բանակի համար է:

Բայց դա նաև այն բանակն է, որը երբեք իրեն թույլ չի տա գործարքի մեջ մտնել անազնիվ մատակարարի հետ՝ զինվորի հաշվին իր ընտանիքին երջանկացնելու կեղծ և անիրականանալի երազանքով:

Ազգ–բանակը այն բանակն է, որից չեն գողանում՝ ո՛չ փամփուշտ, ո՛չ գազար, որից չեն խուսափում՝ հընթացս ձեռք բերելով աշխարհի բոլոր հնարավոր և անհնար հիվանդությունները, որից չեն ծլկում՝ պետության հաշվին ռազմաբժշկական ֆակուլտետում անվճար կրթություն ստանալուց հետո՝ հատուկ կտրվելով ինտերնատուրայի քննություններից:

Ազգ–բանակը այն հրամանատարն է, որը չի վախենում, որ իր զինվորը լինի ուժեղ, ինքնավստահ և հանդուգն: Դա այն հրամանատարն է, որ տարբերություն չի դնում իր զավակի և իր զինվորի միջև, որը չի փորձում ինքնահաստատվել իրենից կախման մեջ գտնվող շարքայինի հաշվին:

Ազգ–բանակը այն միջավայրն է, որտեղ երիտասարդ սպան իրեն զգում է մեծ ընտանիքի անբաժան մաս, որտեղ նրան ընդունում են կրտսեր, բայց հարազատ ընկերոջ կարգավիճակով, պատրաստում են դժվար խնդիրների լուծման, տովորեցնում և իրենց փորձն են փոխանցում տարիքով և կոչումով ավագ գործընկերները:

Ազգ–բանակը այն արժեհամակարգն է, որ, հենվելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բազմադարյա ամուր հիմքի վրա, բարոյականության և սկզբունքների տիրույթում է պատրաստում իր զինվորին ծառայության:

Ազգ–բանակը այն բժիշկն է, որը միշտ պատրաստ է տագնապով հայտնվել մարտի դաշտում՝ պայքարելով յուրաքանչյուր վիրավորի փրկության համար, այն ռեժիսորն է, որի ֆիլմում սպայի և զինվորի կերպարն ամենադրականն է, դա այն երգահանն է, որի «Պատիվ ունեմ» երգը հուզում է յուրաքանչյուրին՝ անկախ մասնագիտությունից, դա այն մարզիկն է, որ, օլիմպիական խաղերում հաղթելով, պարգևատրման արարողության ժամանակ հագնում է զոհված ազատամարտիկի դիմանկարով շապիկը, դա այն մանուկն է, որը զինվորի համար ծանրոց է ուղարկում զորամաս՝ իր կուտակած դրամների հաշվին:

Ազգ–բանակը այն բանակն է, որն իր ներդրումն ունի միջազգային անվտանգության պահպանման գործում, և որը շիտակ ու վստահ է խոսում իր մեծ և փոքր գործընկերների հետ:

Ազգ–բանակի կերտման ուղին հեշտ չէ: Այն պահանջում է քրտնաջան աշխատանք, անվերապահ նվիրում, բարձր ինքնագիտակցություն, զոհողություն: Ուրեմն ո՞վքեր, եթե ոչ զինվորականները, կարող են և պետք է անեն առաջին քայլն այս ուղղությամբ:

Ամենամեծ պարադոքսը կայանում է նրանում, որ մենք չենք կարող ընտրել կամ չընտրել ազգ–բանակ հայեցակարգը: Մենք միայն կարող ենք որդեգրել այն հենց այսօր և նորովի տեսլականով ինքնավստահ քայլերով մոտենանք այդ գաղափարի իրականացմանը: Վստահ եմ, որ համատեղ կիրականացնենք այդ գաղափարը:

Դրա համար կա ամեն ինչ՝ ճիշտ մարդիկ, կայացած պետական կառավարման համակարգ, անհրաժեշտ ռեսուրսներ, հասարակական պահանջ: Ամենագլխավորը, ունենք ազգ–բանակ տիրույթում բանակի դիրքերը հուսալի պահելու և այդ ուղղությամբ արագ քայլեր ձեռնարկելու հարցում պետության ղեկավարի, Զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարի վստահությունն ու ակնկալիքը:

Եվ ուրեմն՝ առա՛ջ, դեպի նոր հաղթանակներ:

КОНЦЕПЦИЯ «НАЦИЯ–АРМИЯ»

ВЫСТУПЛЕНИЕ МИНИСТРА ОБОРОНЫ РА *ВИГЕНА САРГСЯНА* НА ЗАСЕДАНИИ КОЛЛЕГИИ ПРИ МИНИСТРЕ ОБОРОНЫ (29.10.2016)

Уважаемые члены коллегии, господа генералы, офицеры, служащие специальной государственной службы

Для нашей страны военная безопасность является роковым, непосредственным, но и продолжительным вызовом. Это не наш выбор, он навязан нам. Пробудившись от вековечной дремы, мы вновь обрели нашу национальную идентичность и не только провозгласили независимость, но и сумели защитить ее в суровой и неравной, но от того лишь более героической войне. Из клочьев полотен, сотканных из произведенных землетрясением руин, развала экономики, энергетического кризиса, лишений войны, социальных отношений, начало восстанавливаться грандиозное полотно «Армения».

25 лет тому назад история преподнесла нам сюрприз, которого мы столь долго ждали, к которому долго готовились, мечтали, но и сами не могли предполагать, что это столь быстро свершится. И мы с восторгом младенца, получившего то, о чем мечтал, бросились вперед, не замечая силы холодного ветра, дующего нам в лицо. У нас на глазах, правильнее сказать – именно вокруг нас, разваливалась сверхдержава, унося с собой наши мнимые благосостояние и покой, предсказуемость и уверенность в завтрашнем дне.

С молниеносной быстротой жизнь приучила нас к кажущимся невероятными вещам – рыть окопы, устанавливать связь на самодельных радиостанциях, добывать оружие, хоронить товарищей, становиться в очереди за хлебом по талонам, в многоквартирных домах разжигать дровяные печи. Казалось, весь мир опрокинулся и жизнь никогда более не будет прежней.

Армянская армия воистину является армией, вышедшей из лона народа, армией, в течение 25 лет боровшейся за безопасность нашего народа, армией, подарившей своему обществу сладость побед и гордость. Это – национальная армия, поскольку всегда служила своей нации и национальным идеям. Однако нация–армия является чем-то, несравненно большим, чем национальная армия. Поскольку национальная армия служит нации, а нация–армия является собственно нацией. Поскольку наши Вооруженные силы непропорционально велики по сравнению с территорией, населением и страной, они не могут быть отделены от населения. Наше общество не может быть изо-

лировано от армии, или же армия – быть закрытой, замкнутой, далекой от народа. Подумать только: каждый наш 40-ой гражданин – от новорожденного младенца до седовласого старца – носит форму. Нет такой семьи, для которой армия не представляла бы личной истории.

Нация–армия – это то общество, которое действует как единое целое. Это не означает милитаризации общества или государства. Совсем наоборот – означает демократизацию армии, ее полноценную интеграцию с обществом, в сферах экономики, культуры, образования и науки, экологии, спорта. Это означает созданное и сформированное армией поставить на службу всему обществу и государству, а всеми достижениями гражданской жизни укреплять Вооруженные силы государства.

Нация–армия – это та армия, нерушимая связь с которой не начинается со срочной службы и не кончается с ней. Это та армия, которая обладает передаваемым своему народу образовательным, воспитующим, обучающим потенциалом.

Нация–армия – это те общество и Вооруженные силы, обмен между которыми не заметен, где от инновационной науки до военно-промышленного комплекса – один шаг, где экономика подымается и крепнет за счет заказов, внедрений, креативных возможностей своей армии, а не сгибается под ее ношей.

Нация–армия – это то доверие, которое общество питает к своим Вооруженным силам и к своему офицерскому составу.

Это то общество, в котором офицер является наиболее уважаемым и почитаемым гражданином. Но и тот офицер, который является олицетворением компетентности, лидерства, самоуверенности, но никогда – самоудовлетворенности.

Нация–армия – это те школа и воинская часть, которые являются логическим продолжением друг друга, где учитель, родитель и командир вместе работают над воспитанием завтрашнего поколения.

Это та армия, которая в своей стране является безоговорочным лидером в деле эффективного управления, ликвидации коррупции, благовоспитанности, модернизации, формирования элиты будущих поколений.

Нация–армия – это та система обороны, в которой к мобилизации готов каждый, четко зная свои действия, задачи и средства.

Нация–армия – это та страна, в которой нет военных и гражданских, а существует гражданин в форме и существует защитник родины в гражданской одежде.

Нам еще долго придется содержать Вооруженные силы, несоразмерно великие по сравнению с нашими возможностями. А это означает,

что несоразмерно большое число наших граждан будет демобилизовываться и выходить на пенсию. Чтобы эти военные пенсионеры никогда не считались обузой, мы должны сделать так, чтобы офицер Армянской армии в течение всей своей службы мог совершенствовать свои знания и навыки, готовя себя к переходу от военной к гражданской жизни и привнося с собой в экономику, промышленность, науку, образование традиции армейской дисциплины, патриотизма, профессионализма, высокообразованности, тем самым укрепляя неприступность нашего государства.

Нация–армия – это также то общество, которое всегда находится рядом со своим военным инвалидом, а если случилось непоправимое, то и рядом с семьей погибшего.

Нация–армия – это та семья, в которой отец закаляет своего сына со дня его рождения, а мать с неизбежным чувством тоски, но с великой убежденностью провожает сына в армию.

Но это и та армия, которая не дает ослабнуть связи воина, в особенности – воина-срочника, со своей семьей и не превращается в карательное заведение, изолирующее сына от своей семьи.

Нация–армия – это те военно-учебные заведения, быть выпусниками которых престижно и почетно, поскольку учеба в них востребована и гарантирует работу, лекторы компетентны и опытны, курсанты счастливы и пытливы, а среда – дружественна и благоприятна.

Это также тот офицер, сын которого не задумываясь отвечает, что мечтает стать офицером – как отец или мать.

Нация–армия – это тот предприниматель, который считает почетным и ответственным оказание услуг армии. Который печет хлеб на несколько граммов тяжелее, чем обязался, чтобы воин был сыт, а в своих изделиях использует такие продукты, чтобы воин был здоров, и с гордостью может угостить ими своих детей, объяснив, что это – вкусно и полезно, поскольку предназначено для армии.

Но это также та армия, которая никогда не позволит себе вступить в сделку с нечестным поставщиком – с лживой и несбыточной мечтой осчастливить свою семью за счет воина.

Нация–армия – это та армия у которой не крадут ни патронов, ни моркови, которой не избегают, по ходу приобретая все возможные и невозможные болезни на свете, от которой не отлынивают, специально срезаясь на экзаменах интернатуры после того, как получают за счет государства бесплатное образование на военно-медицинском факультете.

Нация–армия – это тот командир, который не боится того, чтобы его воин был сильным, уверенным в себе и дерзким. Это тот командир, который не делает различий между своим сыном и своим воином, который не пытается самоутвердиться за счет рядового, находящегося в зависимости от него.

Нация–армия – это та среда, в которой молодой офицер чувствует себя неотъемлемой частью большой семьи, в которой старшие по возрасту и званию коллеги принимают его в качестве младшего, но родного друга, готовят к решению трудных задач, обучают и делятся своим опытом.

Нация–армия – это та система ценностей, которая, опираясь на многовековую твердую основу Святой Армянской Апостольской церкви, готовит своего воина к службе в атмосфере моральности и принципиальности.

Нация–армия – это тот врач, который всегда готов по тревоге появиться на поле битвы, борясь за спасение каждого раненого, тот режиссер, в фильме которого образы офицера и солдата являются самыми положительными, это тот композитор, песня «Честь имею» которого волнует каждого – вне зависимости от его специальности, это тот спортсмен, который, победив на Олимпийских играх, на церемонию награждения надевает майку с портретом погибшего борца за свободу, это тот малыш, который посылает воину в часть посылку на свои накопленные деньги.

Нация–армия – это та армия, которая вносит свою лепту в дело сохранения международной безопасности и которая прямо и уверенно разговаривает со своими большими и малыми коллегами.

Путь созидания нации–армии не легок. Он требует кропотливой работы, беззаветной преданности, высокого самосознания, жертвенности. А значит – кто, если не военные, могут и должны совершить первый шаг в этом направлении?

Наибольший пародокс заключается в том, что мы не можем выбрать или не выбрать концепцию нация–армия. Мы только можем принять ее именно сегодня и с новым видением уверенными шагами подойти к реализации этой идеи. Уверен, что вместе мы осуществим эту идею.

Для этого есть все, что нужно: правильные люди, состоявшаяся система государственного управления, необходимые ресурсы, общественная потребность. И самое главное – есть доверие и ожидания руководителя государства, Верховного главнокомандующего Вооруженными силами в вопросе надежного обеспечения позиции армии в сфере нации–армии и совершения быстрых шагов в этом направлении.

А значит – вперед, к новым победам!

THE “NATION–ARMY” CONCEPT

SPEECH OF THE MINISTER OF DEFENSE OF THE REPUBLIC OF ARMENIA *VIGEN SARGSYAN* AT THE MEETING OF THE BOARD UNDER THE MINISTER OF DEFENSE (29.10.2016)

Dear Members of the Board, Generals, Officers, and Special Civilian Servicemen,

Our nation's military security is a critical, immediate, but also long-term challenge. It is not us who have made this choice, but we were rather compelled to make it. Awakened from a centuries-long slumber, we have rediscovered our national identity and not only declared independence, but also succeeded in defending it in a cruel and unequal, but all the more heroic, war. The monumental canvas "Armenia" was reborn from a tissue torn by earthquake ruins, economic collapse, energy crisis, and degradation of social relationships.

25 years ago, history delivered us a surprise which we had been waiting and preparing long for and which we had been dreaming of, without anticipating that it might come true so quickly. Like a child whose dream had come true, we rushed forward, failing to notice the power of the cold headwinds blowing into our face. The superpower collapsed before our eyes, literally, around us, taking with it our perceived well-being, tranquility, predictability and confidence in tomorrow.

With lightning speed life got us accustomed to things we had deemed impossible, such as digging trenches, communicating via self-made transceivers, obtaining weapons, burying friends, waiting in line for bread for a food coupon, and burning firewood in apartment buildings. It seemed as though the entire world was crumbling down, and that life could never be the same again.

The Armenian Army is genuinely from the bosom of its people, one which has fought for our people's security for 25 years, one which has made its nation feel proud and the joy of victories. It is a national army, since it has always served the nation and the national ideas.

Nevertheless, a Nation–Army is far more than a national army. While a national army serves the nation, the Nation–Army itself is the nation. Taking into account the fact that our Armed Forces are incomparably large in relation to our land and population, they cannot be separated from one another. Our society cannot isolate itself from our army, neither can our

army close off, shut and distance itself from the people. Just think about it, every fortieth citizen, from newborn infants to the elderly, wears uniform. There is not a single family for whom the army does not entail a personal story.

The Nation–Army is the society, which acts in unity. This does not imply militarization of the society or state. To the contrary, it implies the democratization of the army, its complete integration into the society and the spheres of economy, culture, education, science, environmental protection and sports. This implies using what the army has created and shaped to serve the purposes of the society and state, and strengthening the Armed Forces via the achievements in the civilian life.

The Nation–Army is the army, the indissoluble connection to which neither starts nor terminates with the compulsory military service. It is the army, which has got the educating, cultivating and training potential and passes this capacity to its people.

The Nation–Army is the society and the Armed Forces, between which transition is seamless; where only one step separates scientific innovations and the military industrial complex, where the economy grows and becomes stronger through procurements, investments and creative contributions from the army, rather than straining itself to carry the entire burden on its shoulders.

The Nation–Army is the society's confidence towards its Armed Forces and officers.

It is the society, where the officer is the most highly respected and venerated citizen. It is also the officer who is an embodiment of knowledge, leadership, and confidence, but never presumptuousness.

The Nation–Army is the school and the military unit, which are logical continuations of each other, where the teacher, the parent and the commander work together to raise future generations.

It is the army which is an undisputed leader in effective management, elimination of corruption, integrity, modernization, and cultivation of the elites of future generations in the country.

The Nation–Army is the system of defense in which everyone is ready for mobilization and well aware of his or her duties, tasks and resources.

The Nation–Army is the country where there is no military and civilian, but rather citizens wearing uniform and defenders of homeland in civilian clothing.

We shall still long feel the urge to maintain Armed Forces overly large in relation to our capabilities. This implies that a disproportionately large

number of our citizens will be demobilized and eligible for military pensions. For those pensioners to never be a burden, we must take steps to enable Armenian officers to enhance their knowledge and skills during service, in order to prepare them for the transition to the civilian life, instilling the traditions of military discipline, patriotism, professionalism and good courtesy in economy, industry, science and education, thus reinforcing the impregnability of our state.

The Nation–Army is the society which always stands beside the staff with service-related disabilities, and, if the irretrievable has happened, also by the families of those fallen.

The Nation–Army is the family where the father trains and makes his son stronger from the very day of his birth, while the mother sends her son off to the army with a strong feeling of longing but also with determination.

At the same time, it is also the army which supports a serviceman's (especially a conscript's) close contacts with his family and doesn't represent a penal institution meant to isolate the sons from their families.

The Nation–Army is the military educational institutions, to be the graduate of which is honorable and appreciated, as the education they offer is demanded and guaranteeing jobs, the faculty are competent and skilled, students are happy and inquisitive, and the environment is friendly and favorable.

It is also the officer whose offspring answers without hesitation that dreams about becoming an officer like his/her father or mother.

The Nation–Army is the businessman who considers as honor and responsibility to deliver a service to the army, who bakes the bread with more grams than prescribed in order the soldier to be full, and uses such ingredients in his products in order the soldier to be healthy, and he himself might proudly give it to his children to taste, explaining that it is delicious and wholesome, because it is for the army.

At the same time, it is also the army which will never afford to do business with a dishonest supplier guided by fake and unfeasible desires to benefit his family at the soldier's expense.

The Nation–Army is the army where people do not steal, be it bullets or carrots, which people do not dodge by somehow catching all possible and impossible diseases, or by simply evading after receiving free medical education at the state's expense to deliberately fail the final exams.

The Nation–Army is the army where the commander is not anxious about his soldier being brave, confident or defiant. It is the commander who

does not differentiate between his son and his soldier, and does not attempt to assert himself at the expense of a private serviceman.

The Nation–Army is the environment where the young officer sees himself as an inseparable part of a big family, where he is accepted as junior, but a dear companion, where mates – senior both by age and rank – prepare him to tackle difficult challenges, train and share their experience.

The Nation–Army is the system of values which, resting upon the strong foundation of the centuries-old Armenian Apostolic Church, trains its soldiers for service within the norms of morality and ethic.

The Nation–Army is the doctor who is always on hand to rush to the battlefield and fight for the life of every wounded. It is the director in whose films officers and soldiers are always the most positive characters. It is the composer, whose rendition of the song "It is my honor" would bring anyone to tears, regardless of his or her profession. It is the athlete who records a victory at the Olympics and dons a shirt with the image of a fallen freedom-fighter at the awarding ceremony. It is the child who sends packages to the military unit sacrificing the coins he has saved up.

The Nation–Army is the army, which contributes to the provision of the international security, speaks up straightforwardly and confidently to its senior and junior partners.

The path towards building the Nation–Army is not an easy one. It requires hard work, absolute devotion, a high level of self-awareness, and sacrifice. Then who else, if not the military, should take the first step in this direction?

The greatest paradox is that we cannot choose between adopting or not the Nation–Army concept. We can choose to adopt it today with a new vision, and confidently make for the implementation of that idea with a new vision. I am confident that together we will be able to accomplish this.

For that goal we have everything, namely, the right people, a well-established system of government, necessary resources and the public demand. Most importantly, we have the confidence and expectation of the Head of State and Commander-in-Chief of the Armed Forces of the Republic of Armenia to secure the position of the army within the Nation–Army domain and take up swift measures in that direction.

Thus, forward to new victories!

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ.

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻՑ ԴԵՊԻ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

(ԿՈԼԵԿՏԻՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գեներալ-լեյտենանտ Հայկ Ս. Քոթանջյան

СТРАТЕГИЧЕСКИЕ ОРИЕНТИРЫ СТАНОВЛЕНИЯ СИСТЕМЫ «НАЦИЯ–АРМИЯ»: ОТ ВСЕАРМЯНСКОГО ОПОЛЧЕНИЯ К ДЕМОКРАТИЧЕСКОЙ ОБЩЕНАЦИОНАЛЬНОЙ ОБОРОНЕ РА

(КОЛЛЕКТИВНАЯ МОНОГРАФИЯ)

Научный руководитель: доктор политических наук, профессор, генерал-лейтенант Гайк С. Котанджян

THE STRATEGIC GUIDELINES FOR THE DEVELOPMENT OF THE “NATION–ARMY” SYSTEM: FROM ALL-ARMENIAN HOME GUARD TO DEMOCRATIC NATIONWIDE DEFENSE OF THE RA

(COLLECTIVE MONOGRAPH)

Academic Supervisor: D. Sc. (Political Science), Full Professor, LTG Hayk S. Kotanjian

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ ԿԻԲԵՌԹՎԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ–ՏՆՏԵՍԱԿԱՆ–ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ

Հ. Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ, գեներալ-լեյտենանտ, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր (ՀՀ), ԱՄՆ-ի ՊԱՀ-ի հրավիրված առաջատար պրոֆեսոր, հակաահաբեկչության գծով գիտնական-փորձագետ (ԱՄՆ), Հարվարդի համալսարանի Ազգային անվտանգության ծրագրի հրավիրված հետազոտող, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր պետության գերխնդիրն է, նրա հիմնական գործառույթն է ապահովել ազգային անվտանգությունը[1], որը իրական և հնարավոր սպառնալիքներից անհատի, ընտանիքի, հասարակության և պետության կենսագործունեության բոլոր ոլորտներում նրանց կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության գումարային բնութագրիչն է[2]: Ընդսմին ազգային անվտանգության ապահովման ոլորտում գերակայությունները որոշում է յուրաքանչյուր պետություն՝ ըստ մարտահրավերների ու սպառնալիքների սպեկտրի և ազգային անվտանգության սուբյեկտների անվտանգ ու կայուն զարգացման վրա դրանց բացասական ազդեցության աստիճանի:

Քանի որ Հարավային Կովկասի տարածաշրջանը մտնում է Մեծ Մերձավոր Արևելքի մեջ, որը բնութագրվում է քաղաքական ու ռազմաքաղաքական զարգացումների բարձր աստիճանի մրրկայնությամբ, էթնոդավանական հողի վրա ծագած, մասնավորապես՝ սուննիների և շիաների միջև, հակամարտությունների սրմամբ, մի տարածաշրջանի մեջ, որում «Իսլամական պետության դահիճները քրիստոնյաների, հրեաների, եզդիների և ահաբեկչական ջիհադի մեջ չներգրավված մահմեդականների նկատմամբ այսօր իրագործում են ցեղասպանություն»[3], ապա Ղարաբաղյան հակամարտության չլուծվածության և Ադրբեջանի կողմից իր հարձակողական զինանոցը անվերահսկելիորեն մեծացնելու պայմաններում օրինական հանրաքվեի միջոցով ստեղծված լեգիտիմ Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանական զին-

ված ագրեսիայի վերսկսումը կարող է հայ ժողովրդի համար վերածվել ողբերգության՝ նոր ցեղասպանության:

Ելնելով այս կանխադրույթներից՝ Հայաստանի Հանրապետությունն իր ազգային անվտանգության գլխավոր գերակայությունն է համարում դրա ռազմական և ռազմաքաղաքական բաղադրիչի ապահովումը: Մարդկային և նյութական ռեսուրսների սահմանափակության հաշվառմամբ անհրաժեշտություն է ծագում դրանք օպտիմալ կերպով մոբիլիզացնելու և գրագետ պլանավորմամբ օգտագործելու՝ առաջատար միջազգային մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառմամբ: Այս առումով առաջին պլան է մղվում ազգային մեծ մտավոր ներուժի հիմքի վրա արգասաբեր ռեսուրսախնայող թվային տեխնոլոգիաների կիրառման և պահանջված մասնագիտություններով արդյունավետ պրոֆեսիոնալ կրթության կազմակերպման հարցը:

Թվապես բազմակի անգամ գերազանցող թշնամու ներխուժումների շրջանում ինքնապաշտպանության համար աշխարհազորի ձևով հայ ժողովրդի ինքնակազմակերպման բազմադարյան ավանդույթների հաշվառմամբ որպես Հայաստանի Հանրապետության և հայ հասարակության անվտանգ ու կայուն զարգացման ապահովման նպատակով հասարակության համախմբման նման մոդել, գիտափորձաքննական դիտարկման է արժանի «Ազգ–բանակ» հայեցակարգը՝ արդի ժամանակաշրջանի իրողությունների և դրանց զարգացման հեռանկարների լույսով: Հայ հասարակության ժողովրդավարականության զարգացման պայմաններում տվյալ հայեցակարգը պետք է իմաստավորվի ոչ որպես հասարակության համատարած ռազմականացում, այլ՝ Հայության պաշտպանական ինքնակազմակերպման հարուստ ավանդույթների և, օրինակ, Իսրայելում[4], Շվեյցարիայում[5], Դանիայում[6] «ժողովրդական բանակների» ձևավորման փորձի հաշվառմամբ: Ընդսմին «լիարժեք ինտեգրում հասարակության, տնտեսության, մշակույթի, կրթության և գիտության, բնապահպանության, սպորտի բնագավառներ»[7]: Դա նշանակում է, որ «բանակի ստեղծածն ու ձևավորածը ծառայեցնել ողջ հասարակությանն ու պետությանը, իսկ քաղաքացիական կյանքի բոլոր ձեռքբերումներով ամրապնդել երկրի Զինված ուժերը»[8]:

Սույն, ըստ էության համակարգված մոտեցման դեպքում «Ազգ–բանակ» հայեցակարգը պետք է դիտվի որպես ի շահ պաշտպանական անվտանգության երաշխավորված ապահովման հասարակության կազմակերպման ու կառավարման արդիականացման համակարգաստեղծ գաղափար, արդիականացման, որը ժամանակակից թվային և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ հիմնվում է ժամանակակից հասարակությունների զարգացման առաջնային դիրքեր մղված ինքնապաշտպանության և աշխարհազորի ստեղծման ավանդույթների վրա: Առաջարկվող իմաստավորմամբ ՀՀ-ում «Ազգ–բանակ» մոդելի օգտագործումը օբյեկտիվ կերպով հիմնավորվում է պետության և հասարակության կենսականորեն կարևոր ենթակառուցվածքի թվայնացմամբ, թվային և տեղե-

կատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների ընդլայնվող ներդրմամբ, մասնավորապես՝ «էլեկտրոնային կառավարման»[9] ստեղծմամբ, գիտելիքի և պրակտիկայի այնպիսի բնագավառների ձևավորմամբ, ինչպիսիք են «կիբեռթվային էկոնոմիկան», «կիբեռթվային դիվանագիտությունը», «կիբեռթվային ժողովրդավարությունը»[10], և այլն:

ՀՀ պաշտպանության համակարգում թվային տեխնոլոգիաների կիրառումը և պաշտպանական պատվերի ձևավորման ասպարեզում համապատասխան ռազմավարական նախաձեռնությունները հնարավորություն կտան ոչ միայն մեծացնելու առկա մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, այլև ապահովելու հանրապետությունում դեռ պահպանված գիտական և որակյալ կադրային ներուժի զարգացումը՝ գիտատեխնիկական կադրերի նոր սերունդների պատրաստման գործում ժառանգորդության պահպանմամբ, կազմակերպելու բարձր տեխնոլոգիական սարքավորանքի թողարկումը՝ արտադրության տվյալ բնագավառն սպասարկող այլ արդյունաբերական ճյուղերի զարգացման խթանմամբ և, որպես բազմապատիկության էֆեկտի արդյունք՝ ապահովելով ՀՀ ամբողջ տնտեսության վերելքը: Տվյալ գործընթացը մեծացնում է պետության կենսագործունեության բոլոր ոլորտների համար Հայաստանի ղեկավարության ռազմավարական օղակի կադրերի այնպիսի նոր սերունդների պատրաստման կարևորությունը, որոնք զինված լինեն քաղաքական-անվտանգային և ռազմաքաղաքական գիտելիքների միասնական համակարգով և ՀՀ արտաքին ու ներքին անվտանգության սիներգիկ ապահովման նկատմամբ ցուցաբերեն համակարգայնորեն համաձայնեցված մոտեցումներ:

Նման պայմաններում աճում է միջգերատեսչական ռազմավարական անվտանգային կրթության այնպիսի միասնական համակարգի կազմակերպման նշանակությունը, որի դեպքում ուսուցանվողներին փոխանցվում են առաջատար համաշխարհային ուղեղային կենտրոնների հետ համագործակցությամբ և հայրենական մշակումներով մշտապես թարմացվող գիտելիքներ: Այդպիսի գիտակրթական կենտրոնի օրինակ է մեր՝ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը, որն իր գիտական ուսումնասիրությունների հետ մեկտեղ ակտիվ կեպով համագործակցում է քաղաքագիտական-անվտանգային գիտության ու կրթության այնպիսի Ուլիմպոսների հետ, ինչպիսիք են ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանը և Հարվարդի համալսարանը, ՌԴ ԱԳՆ-ի Միջազգային հարաբերությունների մոսկովյան պետական ինստիտուտը (համալսարան), Չինաստանի Միջազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, բրիտանական «Չաթեմ Հաուզը», Իսրայելի Երուսաղեմի համալսարանը, Ֆրանսիայի Լիոնի «Ժան Մուլին» համալսարանի Միջազգային անվտանգային և պաշտպանական հետազոտությունների կենտրոնը և այլն: Հենց այդ գործունեության շրջանակներում են ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի մասնագետները կատարել

«Ազգ–բանակ» համակարգի համապարփակ ռազմավարության մշակման համար ուղենիշների գիտական արտածում:

Սույն հետազոտական նախագիծն ընդգրկում է հետազոտվող պրոբլեմի առավել կարևոր կողմերը. ինքնապաշտպանության պատմական ակունքներից, ավանդույթներից՝ համաժողովրդական աշխարհազորներից և դրանց հոգևոր-կրոնական համատեքստից, մինչև պաշտպանական պատվերի մակրոտնտեսության, կիբեռանվտանգության և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման ռազմավարության, սոցիալական տեխնոլոգիաների և զինծառայողների ու նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության իրավանորմատիվ ապահովման, ժամանակակից թվային և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաներով պաշտպանության սպառազինության անընդհատ կատարելագործման, զինվորա-քաղաքացիական հարաբերությունների սոցիալական զարգացման միտումների քաղաքական-սոցիոլոգիական գնահատումների ու կանխատեսումների, պաշտպանության համակարգի բարեփոխման զինվորական հոգեբանության ու մանկավարժության, պաշտպանության համակարգի ժողովրդավարացման, արտաքին պաշտպանական-անվտանգային քաղաքականության ու դիվանագիտության ոլորտներում «Ազգ–բանակ» համակարգի կայացման ապահովումը:

«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի սույն համարում ներկայացված ««Ազգ–բանակի» կայացման ռազմավարական ուղենիշները. հայոց աշխարհազորից դեպի ՀՀ թվային ժողովրդավարական պաշտպանություն» կոլեկտիվ մենագրությունը մտածված է որպես ՀՀ-ում «Ազգ–բանակ» ամբողջական համակարգի մշակման համար գիտական հիմք:

СТРАТЕГИЧЕСКАЯ СИСТЕМА «НАЦИЯ–АРМИЯ» В ЦИФРОВОЙ ОБОРОННО-ПОЛИТИКО-ЭКОНОМИКО-СОЦИАЛЬНОЙ ПЕРСПЕКТИВЕ

Г. С. КОТАНДЖЯН, генерал-лейтенант, доктор политических наук (РФ), профессор (РА), ведущий приглашенный профессор, ученый эксперт по контртерроризму (Национальный университет обороны, США), приглашенный исследователь Программы национальной безопасности Гарвардского университета, избранный действительный член Академии военных наук РФ, Начальник НИУО МО РА

Как известно, «сверхзадачей любого государства, его основной функцией является обеспечение национальной безопасности»[1], представляющей собой интегральную характеристику защищенности жизненно важных интересов личности, семьи, общества и государства от реальных и потенциальных угроз во всех сферах их жизнедеятельности[2]. При этом приоритеты в сфере обеспечения национальной безопасно-

сти определяются каждым государством в соответствии со спектром вызовов и угроз и степенью их отрицательного воздействия на процесс безопасного и устойчивого развития субъектов национальной безопасности.

Поскольку регион Южного Кавказа входит в Большой Ближний Восток, характеризуемый высокой турбулентностью политических и военно-политических процессов, обострением конфликтов на этноконфессиональной почве, в частности, между суннитами и шиитами, в регион, в котором «сегодня палачи Исламского Государства осуществляют геноцид в отношении христиан, евреев, иезидов и невовлеченных в террористический джихад мусульман»[3], то в условиях неразрешенности Карабахского конфликта и неконтролируемого наращивания Азербайджаном своего наступательного арсенала возобновление азербайджанской военной агрессии против созданной путем легального референдума легитимной Республики Арцах может обернуться трагедией для армянского народа – новым геноцидом.

Исходя из этих посылок, Республика Армения считает главным приоритетом своей национальной безопасности обеспечение ее военной и военно-политической составляющей. С учетом ограниченности людских и материальных ресурсов возникает необходимость в их оптимальной мобилизации и грамотно запланированном использовании с применением передовых международных методов и технологий. В этом аспекте на первый план выдвигается вопрос использования ресурсосберегающих продуктивных цифровых технологий на основе высокого национального интеллектуального потенциала и организации эффективного процесса профессионального образования по востребованным специальностям.

В качестве подобной модели консолидации общества в целях обеспечения безопасного и устойчивого развития Республики Армения и армянского общества – с учетом многовековых традиций самоорганизации армянского народа в виде ополчений для самообороны в периоды нашествия во много раз численно превосходящих врагов – достойна научно-экспертного рассмотрения концепция «нация–армия», в свете реалий современности и перспектив их развития. В условиях продвижения демократии армянского общества данная концепция должна быть осмыслена не в контексте тотальной милитаризации общества, а с учетом богатых традиций оборонной самоорганизации Армянства – наряду с осмыслением опыта формирования «народной армии», как, например, в Израиле[4], Швейцарии[5], Дании[6], «всецело интегрированной с обществом, со сферами экономики, культуры, образования и науки, экологии, спорта»[7]. Это означает, что все,

«созданное и сформированное армией должно служить всему обществу и государству, а всеми достижениями гражданской жизни должны укрепляться Вооруженные силы государства»[8].

При данном, по сути системном подходе концепция «нация–армия» должна рассматриваться как системообразующая идея модернизации организации и управления обществом в интересах гарантированного обеспечения оборонной безопасности, на основе традиций создания ополчения и самообороны продвинутой на передовые позиции развития современных обществ благодаря использованию современных цифровых и информационно-коммуникационных технологий. Использование в РА модели «нация–армия» в предлагаемом осмыслении объективно обосновывается процессом диджитализации критической инфраструктуры государства и общества, расширяющимся внедрением цифровых и информационно-коммуникационных технологий, в частности, созданием «электронного правительства»[9], формированием таких областей знаний и практики, как «цифровая экономика», «цифровая дипломатия», «цифровая демократия»[10] и др.

Применение в системе обороны РА цифровых технологий и соответствующие стратегические инициативы в формировании оборонного заказа позволят не только повысить эффективность использования наличествующих людских, материальных и финансовых ресурсов, но и обеспечить развитие в республике еще сохранившегося научного и высококвалифицированного кадрового потенциала с соблюдением преемственности в подготовке новых поколений научно-технических кадров, организовать производство высокотехнологического оборудования со стимулированием развития обслуживающих данную область производства других отраслей промышленности и в итоге эффекта мультипликации – подъема всей экономики РА. Данный процесс повышает актуальность подготовки для всех сфер жизнедеятельности государства новых поколений кадров стратегического звена руководства Арменией, вооруженных единой системой политико-безопасностных и военно-политических знаний, проявляющих системно-согласованные подходы к синергическому обеспечению внутренней и внешней безопасности РА.

В этих условиях возрастает значение организации единой системы межведомственного стратегического безопасностного образования с передачей обучаемым знаний, постоянно обновляемых в результате сотрудничества с ведущими мировыми мозговыми центрами и отечественных разработок. Примером такого научно-образовательного центра является наш Национальный исследовательский университет обороны МО РА, который, наряду с собственными научными изыска-

ниями, активно сотрудничает с такими Олимпами в сфере политолого-безопасностной науки и образования, какими являются Национальный университет обороны США и Гарвардский университет, Московский государственный институт международных отношений (университет) МИД РФ, Институт международных стратегических исследований Китая, британский «Чатам Хаус», Иерусалимский университет Израиля, Центр международных безопасностных и оборонных исследований лионского университета «Жан Мулин» Франции и т. д. Именно в рамках этой деятельности специалистами НИУО МО РА была осуществлена научная выработка ориентиров для разработки всеобъемлющей стратегии создания системы «нация–армия».

Данный исследовательский проект охватывает наиболее важные аспекты исследуемой проблемы – от исторических истоков, традиций самообороны – всенародного ополчения и их духовно-религиозного контекста до обеспечения становления системы «нация–армия» в сферах макроэкономики оборонного заказа, кибербезопасности и стратегии развития информационно-коммуникационных технологий, социальных технологий и правонормативного обеспечения социальной защиты военнослужащих и их семей, непрерывной модернизации процесса вооружения обороны современными цифровыми и информационно-коммуникационными технологиями, политико-социологических оценок тенденций и прогнозов социального развития военно-гражданских отношений, военной психологии и педагогики реформ системы обороны, демократизации управления обороной, внешней оборонно-безопасностной политики и дипломатии.

Представленная в настоящем номере военно-научного журнала «Айкакан банак» коллективная монография «Стратегические ориентиры становления системы «нация–армия»: от всеармянского ополчения к демократической общенациональной обороне РА» задумана как научное подспорье для разработки в РА целостной системы «нация–армия».

THE “NATION–ARMY” STRATEGIC SYSTEM IN DIGITAL DEFENSE-POLITICAL-ECONOMIC-SOCIAL PROSPECT

HAYK S. KOTANJIAN, LTG; Doctor of Political Science (RF); Professor (RA); Distinguished Visiting Member of Faculty (National Defense University); Counterterrorism Fellow (US); Visiting Scholar, National Security Program, Harvard University; Full Elected Member of the Academy of Military Sciences (RF); Head of the National Defense Research University, MoD, RA

As is well known, “the most important task of a state and its main function is to ensure the national security”[1] that is the integral characteristic of protecting the vital interests of the individual, family, society, and state from real and potential threats in all spheres of their life[2]. At the same time, the priorities in providing the national security are determined by each state separately, according to the range of challenges and threats and the degree of their negative impact on secure and sustainable development process of national security entities.

Since the South Caucasus is included in the Greater Middle East, which is characterized by high turbulence of political and military-political processes, aggravation of conflicts on ethnic and religious grounds, particularly, between Sunnis and Shiites, a region, where “today genocide of Christians, Jews, Yazidis, and Muslims, not engaged in the terroristic *jihad*, is perpetrated by the torturers of the Islamic State”[3], and under the unresolved Karabakh conflict and uncontrolled increase of offensive arsenal by Azerbaijan, the resumption of Azerbaijani military aggression against the legitimate Republic of Artsakh established through a law-governed referendum may turn into a tragedy for the Armenian people – a new genocide.

Based on these assumptions, the Republic of Armenia (RA) considers the ensuring of its military and military-political component as the main national security priority. Given the limited human and material resources, a need emerges for their optimal mobilization and well-planned use with the application of advanced international methods and technologies. In this regard, the issue of using resource-saving and productive digital technologies based on the nation’s high intellectual potential and organization of an effective process of professional education in high-demand specializations comes to the fore.

As such a model for consolidating the society aimed at ensuring the secure and sustainable development of the RA and the Armenian society – taking into account the centuries-old traditions of the Armenian people’s self-organization in the form of home guard for self-defense in times of the

invasions of vastly outnumbering enemies – the "Nation–Army" concept is worthy of academic and expert review in the light of present realities and prospects of their development. In conditions of democracy promotion in the Armenian society, this concept should not be understood in the context of total militarization of the society, but rather considering the rich traditions of Armenians' defensive self-organization, along with the comprehension of experience in forming "people's armies", as, for example, in Israel[4], Switzerland[5], Denmark[6], that are "fully integrated with the society, with the spheres of economy, culture, education and science, ecology, and sport"[7]. This means that everything "created and formed by the army must serve the whole society and the state, and all civil-life achievements must strengthen the Armed Forces of the state" [8].

Under this, in fact, systematic approach, the "Nation–Army" concept should be considered as a backbone idea for modernizing the organization and management of the society in the interest of guaranteeing the defense security, based on the traditions of setting up home guard and self-defense, advanced to the forefront of modern societies' development through the use of modern digital and information-communication technologies (ICT). The application of the "Nation–Army" model in Armenia, within the proposed comprehension, is objectively justified by the digitalization process of the state's critical infrastructure and society, along with the expanding introduction of digital and information-communication technologies, particularly, the establishment of the *e-government*[9] and the formation of such fields of knowledge and practice as *digital economy, digital diplomacy, digital democracy*[10]*,* etc.

The application of digital technologies in the RA defense system and the relevant strategic initiatives in placing a defense acquisition will not only improve the efficiency of available human, material and financial resources, but will also ensure the development of the still preserved scientific and highly-skilled human capacity in the republic, ensuring the continuity in the training of new generations of scientific and technical personnel, organize the production of high-tech equipment with the promotion of development of other industries serving this area of production, and as a result of the multiplier effect – promote the growth of the entire economy of the RA. This process enhances the relevance of training of new generations of strategic-level personnel for all spheres of state's life aimed at governing Armenia, equipped with a unified system of political and security, as well as military-political knowledge and manifesting systematically shared approaches to synergistic provision of internal and external security of the RA.

Under these terms, the importance of organizing a unified system of interagency strategic defense education increases – through transferring

constantly updated knowledge to students as a result of cooperation with the world's leading think tanks and domestic research and development institutions. An example of such an academic and educational center is our National Defense Research University of the Ministry of Defense (NDRU, MoD, RA), which along with its own research, actively cooperates with such Olympia in political and security studies and education as the US National Defense University, Harvard University, Moscow State Institute of International Relations (MGIMO University) of the Ministry of Foreign Affairs of the Russian Federation, the China Institute for International Strategic Studies, the British Chatham House, Israel's University of Jerusalem, Lyon University Center for International Security and Defense Studies "Jean Moulin" of France, etc. It is in this framework that the NDRU experts have academically carried out the elaboration of guidelines for the development of a comprehensive strategy to create a system of "Nation–Army".

This research project covers the most important aspects of the research issue: from the historical origins and self-defense traditions – a nationwide home guard and their spiritual and religious context – to ensuring the development of the "Nation–Army" system in the spheres of macroeconomics of defense acquisition, cybersecurity and the strategy of developing ICT, social technologies and normative legal provision of social protection of the military and their families, continuous upgrading in equipping the defense system with modern digital and information-communication technologies, political and sociological assessments of trends and projections of social development of civil-military relations, military psychology and pedagogy of defense system reforms, democratization of defense management, foreign defense security policy and diplomacy.

This collective monograph entitled "The Strategic Guidelines for the Development of the "Nation–Army" System: from All-Armenian Home Guard to Democratic Nationwide Defense of the RA" presented in this issue of defense-academic journal *Haikakan Banak* (*Armenian Army*) is conceived as an academic support for the development of an integrated "Nation–Army" system in the RA.

---

[1] Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար, ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի ներածական խոսքը»: «ՀԲ», 2006, հմ. 2:

[2] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015:

[3] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* Հայաստանի անկախության 25-ամյակը. հայկական պետականության պահպանման և կայուն զարգացման ապահովման նպատակով Ղարաբաղում պատերազմի զսպման ռազմավարության նկատմամբ նորամուծական մոտեցումներ: «ՀԲ», 2016, հմ. 3:

[4] Տես, օրինակ, *Yoav Ben-Horin and Barry Posen*. Israel's Strategic Doctrine (R-2845-NA). The Rand Corporation, September 1981 (http://www.rand.org/content/dam/rand/pubs/reports/2007/R2845.pdf):

[5] Տես, օրինակ, *Peter Forster.* Swiss Army Doctrine: Security Through Cooperation. «World Security Network», 21 October 2004 (http://www.worldsecuritynetwork.com/Europe/peter-forster-1/Swiss-Army-Doctrine-Security-Through-Cooperation):

[6] Տես, օրինակ, *Silva Kiili.* Motivation through personal values: the Estonian Defence League, the Estonian Defence Forces and the Danish Home Guard, July 2015 (http://www.icds.ee/fileadmin/media/icds.ee/failid/Silva_Kiili_-_Motivation_through_ personal_values.pdf):

[7] Տես սույն համարում հրապարակվող՝ «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում», էջ 8:

[8] Նույն տեղում:

[9] Տես «Էլեկտրոնային կառավարման ռազմավարական ծրագիր»: ՀՀ կառավարության 2014 թ. ապրիլի 10-ի նիստի հմ. 14 արձանագրային որոշման հավելված (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/04/14-44_1ardz.pdf):

[10] Տես «DD: Digital Diplomacy–League Table of Ministries of Foreign Affairs». «GLOBAL DIPLOMATIC FORUM» (http://www.gdforum.org/ddcareer-in-international-affairs-1/); *David Winston.* Digital Democracy and the New Age of Reason. «MIT Communications Forum» (http://web.mit.edu/comm-forum/papers/winston.html):

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ». ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

Պ. Ա. ՉՈԲԱՆՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀԻ-ի ԱՈՀԻ-ի ավագ գիտնական-վերլուծաբան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող



Բանակն անպարտելի է, երբ ժողովուրդը նրա հետ է, սատարում է բանակին և այդպիսով ապահովում իր անվտանգությունը: Բանակը պետականության առաջնային և հիմնական բաղադրիչն ու խորհրդանիշն է: Զինված ուժերը կազմակերպական առումով ուղեկցել են հայ ժողովրդին նրա պատմության ամբողջ ընթացքում: Հայկական բանակի տարեգրության մեջ արձանագրված են հիմնականում պաշտպանական մարտեր, որտեղ օտար նվաճողների դեմ միասնաբար են հանդես եկել կանոնավոր բանակն ու բնակչության լայն խավերը:

ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐ

Կանոնավոր բանակի, զորատեսակների մասին տեղեկություններ պահպանվել են դեռ Հայոց պետականության Երվանդունի և Արտաշեսյան հարստությունների ժամանակաշրջանների վերաբերյալ հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում և հայկական պատմական ավանդություններում*: Ք. ա. 69 թ. Լուկուլլոսի հրամանատարությամբ հռոմեական բանակի արշավանքի կասեցման և Հայաստանից նրա արտաքսման գործում կարևոր դեր է ունեցել հայ բնակչության ակտիվ մասնակցությունը Տիգրան Մեծի կանոնավոր բանակի գործողություններին, մասնավորապես՝ Արածանիի ճակատամարտի ժամանակ:

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐ

Վաղ միջնադարյան հայոց Արշակունյաց հարստության ժամանակաշրջանում Հայաստանն ունեցել է իր կանոնավոր բանակը, որի հավաքագրման սկզբունքներն ու չափերը արձանագրվել են մեզ հասած «Զորանամակ»

---

* Պատմական հիշողության արձանագրմամբ Մովսես Խորենացին գրում է. «Անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին: Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը, բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի թե՛ ինքը և թե իր ժամանակը: Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն՝ հաջող աղեղնավորներ, լախտերով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը պատվեցին վահաններով և երկաթե զգեստներով: ... Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլն ու շողքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու» (*Մովսես Խորենացի,* Հայոց պատմություն: Ե., 1991, էջ 137–139):

անվանումով փաստաթղթում: Դեռ Արտաշես Առաջինի ռազմական բարեփոխման ժամանակներից չորս զորավարությունների բաժանված և ըստ «Զորանամակի» ավելի քան 120 հազար թվաքանակով հայկական բանակը, տեղաբաշխված լինելով սահմանամերձ գոտիներում, պարտավոր էր արագ արձագանքել արտաքին սպառնալիքներին: Կանոնավոր բանակին օժանդակելու նպատակով Հայրենիքին սպառնացող վտանգի ժամանակ բնակչությունը ինքնակամ ձևավորել և երկրի պաշտպանության համար հավաքագրել է աշխարհազոր: Նման փաստեր արձանագրված են նաև հետագայում՝ Սասանյան Պարսկաստանի և Արաբական խալիֆայության նվաճողական արշավանքներին դիմագրավելու համար մղված մարտերի ժամանակ:



Շարակնոց (1482 թ.), «Ավարայրի ճակատամարտը».
Մատենադարան, ձեռագիր հմ. 1620

Համաժողովրդական պայքարի դրվագներից էր 451 թ. Ավարայրի ճակատամարտը Սասանյանների դավանական քաղաքականությամբ պայմանավորված սպառնալիքի դեմ[1]: Արաբական խալիֆայության դեմ հայերի ազատագրական պատերազմի ժամանակ 851 թ. Հովնան Խութեցու գլխավորած ապստամբները Խութ գավառում հաղթել են խալիֆայի կանոնավոր զորքին և սպանել զորապետ Յուսուփին[2]:

Ի տարբերություն հարևան Վրաստանից, Հայաստանը լայնորեն չի օգտագործել վարձու բանակ և հիմնականում ապավինել է պաշտպանական իր ուժերին[3]: Սկզբնաղբյուրներում հայկական իշխանությունների կողմից վարձու բանակի օգտագործման վերաբերյալ հաղորդումների սակավությու-

[1] Տես «Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին»: Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասյան: Ե., 1957:

[2] Տես *Թովմա Արծրունի և Անանուն,* Պատմություն Արծրունյաց տան: Ե., 1985, էջ 294–297:

[3] Տես «Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного содружества. Исследование и документы». Е., 1968, с. 72:

նը վկայություն է այն հանգամանքի, որ հայկական բանակի հիմնական գործառույթները եղել են երկրի անվտանգության ապահովումը, ինչը և պայմանավորել է դեռևս միջնադարում ազգի և սեփական բանակի սերտ կապն ու շահերի միասնությունը, որի վկայություն է նաև այն, որ հայկական բանակում ծառայության դիմաց վճար չի եղել:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐ

Արաբական տիրապետության դեմ Հայաստանի բոլոր նահանգներում մղված համաժողովրդական ազատագրական պայքարի շնորհիվ վերականգնվեց հայոց պետականությունը, որի երաշխավորը անընդմեջ համալրվող հայկական բանակն էր: Բագրատունիների գլխավորած հայկական բանակի կազմում ընդգրկված էին ոչ միայն ազատները, ինչը բնութագրական էր ավատատիրական հասարակարգի համար, այլև շինականներն ու քաղաքային բնակչության լայն խավերը: Իր հայրենիքում օտար լծի դեմ պայքարը միավորել էր ամբողջ բնակչությանը, համատեղել նրանց շահերը:

Արևելքից սելջուկ թյուրքերի արշավանքի սպառնալիքների, Բյուզանդիայի հետ դավանական մերձավորության և բյուզանդամետ ուժերի ճնշման ներքո Բագրատունյաց թագավորության վերացումը հանգեցրեց Հայաստանում պետականության կորստին: Իր տիրապետությունն ամրապնդելու նպատակով Բյուզանդիայի առաջին ձեռնարկումը միտված էր հայկական բանակի վերացմանը: Մտցվեց զինվորական դրամական հարկ, որն ազատում էր բյուզանդական բանակում ծառայելու պարտավորությունից: Ազգային զինվորական դասի թուլացման հետևանքով անպաշտպան մնացած երկիրը անկարող եղավ հաջողության հասնել սելջուկյան արշավանքների դեմ պայքարում, և ընդհանուր հուսալքության պայմաններում սկիզբ առավ մայր հայրենիքից արտագաղթը:

ԲԱՆԱԿԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ, ԽԱՉԱԿԻՐՆԵՐԻ ԵՎ ՄՈՆՂՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Հայության ներհոսքը Կիլիկիա մեծ չափեր ընդունեց սելջուկ թյուրքերի արշավանքներից հետո: Բուն Հայաստանից դեպի արևմուտք սկիզբ առած գաղթերը կատարվում էին առանձին իշխանների կողմից իրենց տիրույթները լքելու և ավելի անվտանգ տարածաշրջան փոխադրվելու ձևով:

Կիլիկիայում մշտական բանակի կազմակերպումն սկսվեց արդեն Ռուբինյան առաջին իշխանների օրոք: Պատերազմի ժամանակ կիլիկյան հայկական բանակի թվակազմը հասնում էր 60 հազարի: Բանակի կազմավորման համար օգտագործվում էր ինչպես բյուզանդական, այնպես էլ խաչակրաց արշավանքների հետևանքով առաջացած խաչակրաց իշխանապետությունների փորձը: Հայերեն էին թարգմանվում Բյուզանդիայի և խաչակրաց պետությունների պետաիրավական և զինվորական օրենսդրական ակտերը (Անտիոքի ասիզներ, Երուսաղեմի ասիզներ), որոնց հաշվառմամբ ստեղծվում էին Հայկական պետականության շահերն արտացոլող իրավական ակտեր: Այդպիսիք էին Ներսես Լամբրոնացու «Զինվորական օրենսգիրքը»,

Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը», Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» և այլն, որոնց հիման վրա պետք է կանոնակարգվեր Կիլիկյան Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը:

Կիլիկիայում հայկական բանակը Բյուզանդիայի նվաճողական արշավանքի դեմ ծանր մարտերում կարողացավ պահպանել պետության ինքնիշխանությունը, իսկ այնուհետև մոնղոլների հետ զինակցությամբ մասնակցել տարբեր տարածաշրջանային ռազմարշավների, այդ թվում նաև 1258 թ. Բաղդադի գրավմանը:

ՍՅՈՒՆԻՔ

1722 թ. աֆղանները գրավեցին Սպահանը, ինչը Ռուսաստանի և Օսմանյան պետության համար հարմար առիթ դարձավ Իրանի արևմտյան և այսրկովկասյան տարածքները նվաճելու նպատակով արշավանքներ ձեռնարկելու համար: Ռուսական բանակի առաջխաղացման վերաբերյալ լուրերը Արևելյան Հայաստանում վերածնեցին քրիստոնյա պետության օժանդակությամբ պետականությունը վերականգնելու հույսերը: Ազատագրական պայքարի վճռականությունը այն ատաղձն էր, որը երեսուն համախոհներով Դավիթ Բեկի Վրաստանից Սյունիք ժամանումից հետո հնարավորություն ընձեռեց կազմավորելու բանակ, ազատագրելու Սյունիքը, դիմագրավելու օսմանյան նվաճողներին և հաստատելու իշխանապետություն:

Բնակչությունը սատար է կանգնել ազատագրական պայքարի ելած զորամասերին, սերտորեն համագործակցել նրանց հետ, պատսպարվել ամրոցներում, ապահովել մատակարարումները, ինչի շնորհիվ թշնամու նկատմամբ ձեռք են բերվել հայկական զորքի հաղթանակները[4]:

ԱՐՑԱԽ

Արցախում հարյուրապետների գլխավորությամբ 1722 թ. հաշվված ամիսների ընթացքում 12.000-անոց բանակի կազմավորումը, իսկ այնուհետև սղնախների կազմակերպումը հայկական զինական ներուժի առկայության վկայությունն են: Հայ բնակչության և ազատագրական շարժման առաջնորդների հավաքագրած զինված ուժերի միջև գործողությունների ներդաշնակությունը վկայող փաստ է օսմանյան զորախմբի ոչնչացումը Արցախում 1725 թ. փետրվարին: Օսմանյան զորքին առանց դիմադրության թույլատրվեց մուտք գործել Վարանդա, որտեղ նա գիշերային օթևանի տրամադրման պատրվակով բաշխվեց 33 հայկական գյուղերի տներում, ապա հատուկ ազդանշանով յուրաքանչյուր ընտանիք ոչնչացրեց իր մոտ տեղաբաշխված օսմանցի զինվորներին ու զորավարներին[5]:

[4] Տես նույն տեղում, էջ 100:

[5] Տես «Армяно-русские отношения в первой трети XVIII века». Сборник документов, т. 2, ч. 2. Е., 1967, док. 310, 312, 315, 318:

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

18-րդ դարի երկրորդ կեսին Հայոց պետականության վերականգնման հրամայականի գիտակցմամբ ստեղծվեցին տարբեր նախագծեր, որոնց հիմնական առանցքային պահանջը դեռևս պահպանված մելիքական զորամասերի հիմքի վրա հայկական բանակի վերականգնումն էր և համազգային ազատագրական պայքարի շուրջ ազգի համախմբումը: Այդ ուղղության ջատագով տեսաբաններն ու պայքարի առաջամարտիկների դերում հանդես եկող՝ հնդկահայ գաղթօջախի ներկայացուցիչներ Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը և ուրիշներ իրենց քաղաքական-հրապարակախոսական աշխատություններով փորձում էին հայ ժողովրդի մեջ վերածնել հանուն ազգային արժանապատվության, տնտեսական ու քաղաքական իրավազրկության վերացման և քաղաքակրթական վերելքի պայքարելու վճռականությունը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԵՍՆԱՄՅԱԿԻՆ

Թուրք-պարսկական լծից Հայաստանի ազատագրման և հայոց պետականության վերականգնման հիմնահարցը պայմանավորելով 1804–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմներում Ռուսաստանի հաղթանակի հետ՝ Ներսես Աշտարակեցու և հայազգի այլ գործիչների կոչով հայ բնակչությունը բազմապիսի ռազմական ու տնտեսական օժանդակություն է ցուցաբերել ռուսական բանակին: Հատկապես նշանակալի էր հայ բնակչությունից հավաքագրված և իրենց դրոշների ներքո հանդես եկող կամավորների ջոկատների ու խմբերի ներդրումը: Դրանք, առավել լավատեղյակ լինելով տեղական պայմաններին, իրենց զգալի նպաստն են բերել ռուսական բանակի հաջողություններին: Մեծ համբավ էր ստացել մասնավորապես Գրիգոր Մանուչարյանի գլխավորությամբ գործող կամավորական ջոկատը:

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ, ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐ

1-ին կամավորական ջոկատի հրամանատար Անդրանիկը (կենտրոնում) զինակիցների հետ. 1914 թ.

Հայ բնակչության առանձնակի հոգատարությանն ու մեծարանքին են արժանացել 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին տասնամյակներին Արևմտյան Հայաստանում Օսմանյան բռնությունների դեմ ընդվզած և բնակչության շահերի պաշտպանության ու անվտանգության ապահովման նպատակով զենքի դիմած հայ երիտասարդներով համալրված ջոկատների մարտիկները: Բնակչությունն ամենուր աջակցել է նրանց և ոգևորել ու հավատացել արդարացի

պայքարի հաջողությանը: Հայդուկային պայքարի փուլից կանոնավոր բանակի անցման եզակի դրսևորում էր գեներալ Անդրանիկի մղած պայքարի պատմությունը, որը դարձել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի խորհրդանիշը[6]:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԶՈՐ

Ժողովուրդ-բանակ-հայրենիք եռամիասնությունն իր բացառիկ դրսևորումն ու դերակատարումն է ունեցել նաև 1918 թ. հայոց անկախ պետականության վերականգնման գործում: Հայաստանի համար ծանրագույն պայմաններում Սարդարապատի հերոսամարտում ձեռք բերված հայոց հաղթանակը հնարավորություն ընձեռեց Ցեղասպանություն իրականացրած Օսմանյան կայսրությանը պարտադրելու համակերպվել Հայաստանի Հանրապետությունը ճանաչելու փաստի հետ: Հայկական բանակային զորամասերի հետ Սարդարապատի դաշտում թուրքական կանոնավոր բանակի դեմ մարտնչում էր Երևանից ու հարակից բնակավայրերից ինքնաբուխ և ինքնակամ կերպով ռազմադաշտ մեկնած հայկական աշխարհազորը[7]: Ճակատամարտում թուրքական բանակի պարտությունն ու նահանջը ոչ միայն խափանեցին նրա առաջխաղացումը դեպի Երևան ու հետագա ծրագրերի իրականացումը, այլև հաղթաթուղթ դարձան նորահռչակ Հայաստանի կայացման գործում[8]:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐ ԽՍՀՄ ԶՈՒ-Ի ԿԱԶՄՈՒՄ

Պետականության կորստից, կանոնավոր ազգային բանակի կազմալուծումից, իսկ այնուհետև Հայաստանում Օսմանյան և Սեֆյան Իրանի տիրապետության հաստատումից հետո հայ բնակչությունը օտար բանակի ներկայացուցիչներին իրավացիորեն դիտել է որպես զավթիչների ու կողոպտիչների, ինչը բնական ատելություն էր ձևավորել օտար տիրապետության և օտարազգի զինվորականի կերպարի հանդեպ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո ԽՍՀՄ անվտանգությամբ էր պայմանավորվում նաև նրա կազմում Խորհրդային Հայաստանի անվտանգությունը: Այդ է պատճառը, որ 1941 թ. Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա մեծ սպառնալիք էր նաև Խորհրդային Հայաստանի համար, քանի որ Գերմանիայի դաշնակից Թուրքիան ևս պատրաստ էր արշավելու և ավարտին հասցնելու Հայոց ցեղասպանությունը: Խորհրդային Հայաստանից և ԽՍՀՄ այլ հանրապետություններից բանակ զորակոչվեց մոտ 600 000 հայ զինվորական: Կազմավորվեցին ազգային դիվիզիաներ, որոնք ռազմաճակատի տարբեր հատվածներում մարտնչում էին այն գիտակցությամբ, որ այդպի-

[6] Առավել հանգամանորեն տես *Հ. Ռ. Սիմոնյան,* Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I-V: Ե., 2003–2013:

[7] Տես *Հ. Գ. Թուրշյան,* Սարդարապատի հերոսամարտը: Ե., 1969, *նաև՝ Ա. Բ. Մելիքյան,* 1918 թ. մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում: «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, հմ. 2–3:

[8] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7: Ե., 1967, էջ 42–44:

սով ապահովում են Հայաստանի ազգային անվտանգությունը[9]: Այդ հանգամանքով պայմանավորված՝ խորհրդային զինվորականի համազգեստը, որը կրում էր նաև հայ զինվորականը, ոչ միայն ատելի չէր հայ բնակչությանը, այլև օտարազգի խորհրդային զինվորականը ևս դիտվում էր որպես Հայաստանի անվտանգության երաշխավոր, ուստի և արժանանում բնակչության հոգատար վերաբերմունքին:

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ, ԿԱՄԱՎՈՐՆԵՐ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ[10]

ԽՍՀՄ փլուզումը և Արցախյան պատերազմը, Հայաստանի անկախ հանրապետության հռչակումը և իր ազգային բանակի կազմավորումը պատմական շրջադարձային իրողություններ էին, որոնք պայմանավորեցին ազգային նոր անվտանգային համակարգի ձևավորման հրամայականը: Համակարգի հիմնական բաղադրիչի՝ ժողովրդական բանակի կերպարի խաթարումը սպառնալիք է ազգային պետականության համար: Այդ սպառնալիքների թվում են նաև ընդդեմ բանակային ծառայության ծավալվող և Հայաստանում տարածում գտնող աղանդավորական շարժումները:

Կամավորական ջոկատի հրամանատար Հայաստանի և Արցախի հանրապետությունների ազգային հերոս Մոնթե Մելքոնյանը (կենտրոնում) զինակիցների հետ

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

1. Դարերի ընթացքում հայ ժողովրդի անվտանգության գրավականն է եղել ինքնապաշտպանության նպատակով համաժողովրդական պայքարի ձևավորման գործընթացը:

2. Կանոնավոր բանակային զորամասերի հետ օտար արշավանքներին դիմագրավելու է ելել աշխարհազորը՝ դրսևորելով գոյապայքարի իր կամքն ու վճռականությունը:

3. 2016 թ. Չորսօրյա պատերազմի ժամանակ երկու հայկական հանրապետությունների կանոնավոր բանակներին հավատ ու սատարում դրսևորած կամավորական շարժումը հայկական աշխարհազորի հոգևոր ընկալման կենսունակության վկայությունն է:

[9] Տես *Կլիմենտ Հարությունյան,* Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.): Ե, 2016:

[10] Առավել հանգամանորեն տես «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994. Հանրագիտարան»: Ե., 2004:

ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Տեր ԱՆՈՒՇԱՎԱՆ եպիսկոպոս ԺԱՄԿՈՉՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան,
Լ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի վարիչ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին իր հիմնադրման օրից ստանձնել է հայապահպանի դերը: Նրա պատմության ամբողջ ընթացքում այդ ծրագիրն իրագործվել է երկու հիմնական ուղղություններով. լեզվի, մշակույթի պահպանման ու փոխանցման ապահովում և ծանր պահերին ժողովրդի ֆիզիկական պաշտպանության հոգացողություն՝ աշխարհիկ իշխանությունների հետ համագործակցությամբ:

Մշակութային ամենանշանավոր երևույթը՝ տառերի ստեղծումը, կատարվել է Հայ եկեղեցու մեջ՝ Ս. Սահակ Պարթև կաթողիկոսի և Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետի անմիջական ղեկավարությամբ և մասնակցությամբ: Ճարտարապետությունը, մանրանկարչությունը, փորագրությունը և առհասարակ արվեստի գրեթե բոլոր բնագավառները զարգացրել, պահպանել, կիրառել է Եկեղեցին: Հայ գիտական մտքի ձևավորողներն էլ են եղել մեծ մասամբ հոգևորականներ՝ սկսած թարգմանիչներից մինչև խորհրդային կարգերի օրոք ապրած գործիչները:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Դեռ վաղ միջնադարում Հայ եկեղեցին հայրենիքի պաշտպանությունը համարել է սրբազան գործ, ինչի վառ ապացույցն է Փավստոս Բուզանդի այն վկայությունը, որ Դ դարում հայոց հայրապետ Ս. Վրթանեսը կանոն է սահմանել, համաձայն որի ս. Պատարագի ժամանակ սրբերի անունների հիշատակումից անմիջապես հետո Տիրոջ ս. Սեղանի առջև հիշատակվեն նաև նրանք, ովքեր իրենց հայրենիքի փրկության համար ընկել են ռազմի դաշտում[1]:

Ինչպես քաջ հայտնի է, Վարդանանց պատերազմի կազմակերպիչներից և մասնակիցներից են նահատակված հոգևորականներ Հովսեփ Վայոցձորե-

[1] Տես *Փավստոս Բուզանդ,* Հայոց պատմություն: Թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի: Ե., 1987, էջ 47:

ցին և Ղևոնդ Երեցը: Հոգևորականները պատերազմների ժամանակ զբաղվում էին ոչ միայն հոգևոր սպասավորությամբ, այլև ակտիվ կերպով մասնակցում էին մարտերին: Ներսեհապատի ճակատամարտի ժամանակ էլ Վահան Մամիկոնյանի և հայոց զորքի հետ էր Հովհան Մանդակունի կաթողիկոսը: Ճակատամարտից առաջ կաթողիկոսը ոգևորության ճառ է ասում, իսկ ամբողջ մարտի ընթացքում աղոթում և քաջալերում զորքին: Հայ հոգևորականների մարտական ոգին սնվում էր առաջին հերթին այն սրբազնացված պատմությունից, որը կապված էր Ս. Վարդանի և Ավարայրի պատերազմի հետ, և որը իբրև օրինակելի սխրանք տոնում էր ու տոնում է Հայ Առաքելական Եկեղեցին:

Ձենքը ձեռքին հանուն հայրենիքի և հավատքի նահատակված հոգևորականների շարքը կարելի է բազմապատկել, սակայն, կարծում ենք, բերված փաստերն էլ բավարար են՝ ցույց տալու, որ հոգևորականների լավագույն մասը օրհասական պահերին միշտ եղել է ժողովրդի հետ՝ քաջալերել, աղոթել և զոհվել է:

Անուրանալի է նաև Ս. Սահակ Պարթևի, Ս. Հովհան Օձնեցու, Ներսես Աշտարակեցու, Խրիմյան Հայրիկի և շատ այլ Ամենայն Հայոց կաթողիկոսների, բարձրաստիճան հոգևորականների, քահանաների, աբեղաների և սարկավագների դիվանագիտական նպաստը հայրենիքի և հայ ժողովրդի պաշտպանության, հոգևոր, մշակութային ժառանգության ստեղծման, ուսումնասիրության, պահպանման և փոխանցման գործին:

Ինչպես հաղորդում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին, Զաքարե իշխանը տեսնում էր, որ վրաց զորամիավորումներից յուրաքանչյուրն ուներ քահանաներ, որոնք ամենուրեք պատարագներ էին մատուցում, իսկ ինքը «ճանապարհին» (զորքի տեղաշարժման ուղիներին) եկեղեցիներ չուներ: Այն բանից հետո, երբ հայոց մեծամեծ իշխանների թիվը պարսից և արաբական բռնությունների հետևանքով նվազեց, հայերը երկար ժամանակ ճանապարհներով շարժվելիս եկեղեցական ծեսեր չէին կատարում: Վրացիները հայերին նախատում էին ճանապարհներին եկեղեցի չունենալու, անհաղորդ մնալու և Աստծո նահատակների տոները յուրաքանչյուր օրվա վերջում չտոնելու համար: Զաքարե ամիրսպասալարը ճանապարհի եկեղեցիների մասին հարցնում է Մխիթար Գոշին և այլ վարդապետների: Նրանք պատասխանում են, որ մեծազոր արքա Տրդատ Գ Մեծի օրոք կային վրանն ու սեղանը, որ շրջեցնում էին արքունական բանակում, և սուրբ Վարդանանց ժամանակ էլ բանակում կատարում էին մկրտություն ու հաղորդություն: Զաքարեն խնդրում է, որ վարդապետներն իրեն էլ հրաման տան, որ նա ևս իր հետ քահանաներ ու պատարագի վրան շրջեցնի: Մխիթար Գոշ վարդապետը պատասխանում է, որ այդ հրամանը կարող են տալ միայն հայոց կաթողիկոսն ու հայոց թագավոր Լևոն Բ Մեծագործը: Զաքարեն դիմում է նրանց և դրական պատասխան ստանում, իսկ Հովհաննես կաթողիկոսը նրանց ուղարկում է գմբեթազարդ եկեղեցաձև վրան, մարմարյա սեղան, պատարագների այլ սպասք և Մինաս անունով եպիսկոպոսին՝ դպիրներով

ու սարկավագներով հանդերձ[2]: Այս ամենը վկայում է, որ զորքին, բանակին հնում էլ կցված են եղել եկեղեցու հատուկ ծառայություններ, որոնք հոգացել են մարտիկների հոգևոր կարիքները:

Հայտնի է նաև, որ հայոց եկեղեցին կարևոր դեր կատարեց 15–18-րդ դարերի ազգային-ազատագրական շարժումների ժամանակ:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԵՐԻՆ

19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին գրեթե բոլոր հայ մտավորականները, եթե հոգևորական էլ չեն եղել, ապա մեծ մասամբ ավարտել են Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Հանրահայտ Ներսիսյան դպրոցը, որը նույնպես տվել է մեծ թվով հայ ականավոր դեմքեր, հիմնադրել է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը:

Սակայն հոգևորականները միայն գիտական և մշակութային գործունեությամբ չեն հայտնի, այլև՝ որպես մարտիկներ և նահատակներ հանուն հայրենիքի ազատության:

19-րդ դ. երկրորդ կեսի–20-րդ դ. առաջին տասնամյակների հայ ազգային զարթոնքը էապես կապված է մեծանուն հայ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հետ: Մկրտիչ Խրիմյանը Վան-Վասպուրականում ծավալեց վիթխարի կրթալուսավորչական և քարոզչական գործունեություն: Ձինակից ունենալով Մկրտիչ Փորթուգալյանին՝ նա պատրաստեց ազգանվեր մաքառողների նոր սերունդ՝ էապես նպաստելով Վանում Արմենական կուսակցության ձևավորմանը: Մինչև մահ այդ երկու նվիրյալները հոգևոր-գաղափարախոսական ոլորտում մարտնչեցին հայ ժողովրդի անկախության և ազատության համար[3]:

1855 թ. Խրիմյանը հիմնեց «Արծուի Վասպուրական» ամսագիրը Կ. Պոլսում, երկու տարի անց այն տեղափոխեց Վան՝ Վարագավանք, որտեղ հիմնեց նաև տպարան և 1857 թ. բացեց նոր տիպի դպրոց՝ ժառանգավորաց վարժարանը: «Արծուի Վասպուրական» հանդեսը պատմում էր ժողովրդի վիճակի մասին, ընթերցողի հետ խոսում էր հայրենական սրբությունների մասին, դատապարտում էր պանդխտությունը: Հանդեսի լեզուն լացուկոծը չէր, այլ հայության վիճակի նկատմամբ անհանդուրժողությունը և ընդվզման տրամադրությունների տարածումը[4]:

Կ. Պոլսի պատրիարք ընտրվելուց հետո Խրիմյանը դավադրությունների ճնշման տակ հրաժարվեց պատրիարքությունից և վերադարձավ Վան: Այստեղ նա ընտրվեց սահմանադրական առաջնորդ: 1877–1878 թթ. ռուս-

[2] Տես *Կիրակոս Գանձակեցի,* Պատմություն Հայոց: Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք Օհանջանյանի: Ե., 1961, էջ 166–170:

[3] Տես *Ա. Կարապետյան,* Մկրտիչ Խրիմյանն ու Մկրտիչ Փորթուգալյանը որպես ազգային զարթոնքի հոգևոր հայրեր: «Էջմիածին», 1997, հմ. ԺԱ-ԺԲ:

[4] Տես նույն տեղում:

թուրքական պատերազմից հետո, երբ Վանում սով էր սկսվել, Խրիմյանը նշանակվեց Սովելոց հանձնաժողովի նախագահ: Երկու տարվա ընթացքում նա կատարեց վիթխարի գործ՝ սովից փրկելով հազարավոր հայերի: Սովը լիովին հաղթահարելու համար Վարագավանքում հիմնեց Երկրագործական վարժարան, որտեղ ուսումնասիրում էին նոր գյուղատնտեսական տեխնիկան՝ հետագայում գյուղերում օգտագործելու համար: Խրիմյանի ազգանվեր գործունեությունը կասեցնելու համար 1885 թ. նրան Վանից աքսորում են[5]:

Ամենայն Հայոց Կաթողիկոս (1893 – 1907 թթ.) Մկրտիչ Ա Վանեցի

Խրիմյանի հայրենանվեր գործունեության համար ժողովուրդը նրան ընծայել է Հայրիկ մականունը: Մինչև կյանքի վերջին օրերը նա պայքարել է հանուն հայ ժողովրդի՝ պատրաստելով ազգանվեր ու հայրենասեր սերունդ՝ հայրենիքի նվիրյալների:

Ամենայն Հայոց Կաթողիկոս դարձած Խրիմյան Հայրիկը մաքառում էր նաև ցարական Ռուսաստանի կառավարության որոշմամբ եկեղեցական կալվածքների բռնագրավման և ազգային դպրոցների փակման դեմ:

Խրիմյան Հայրիկը և Մկրտիչ Փորթուգալյանը Վասպուրականի հեղափոխական սերնդի կնքահայրերն են, «Առանց զենքի չկա հայոց փրկություն» կարգախոսի հեղինակները: Նրանց ծավալուն և արդյունավետ գործունեությունը ձևավորեց ազգային զարթոնքի այն մթնոլորտը, որը ծնունդ տվեց մի շարք հայրենանվեր գործիչների[6]:

Կիլիկիայում Հնչակյան կուսակցության հեղափոխական գործունեությանն անմիջականորեն մասնակցել է Ներսես եպիսկոպոս Դանիելյանը: Սերտ հարաբերություններ է ունեցել հեղափոխական գործիչներ և հայդուկներ Աղասիի, Մշեցի Մխոյի (Շահեն), Տաշ-օլուգցի Կարապետի (Ճելլատ), Հրաչյայի, Մլեհի, Վահանի հետ և հաճախ ամենավտանգավոր պահերին պատսպարել ու պաշտպանել է նրանց[7]: Նա եղել է 1896 թ. Զեյթունի ապստամբության գործնական ղեկավարներից մեկը: Կյանքը վտանգի ենթարկելով՝ անօրինակ ջանքեր է գործադրել Զեյթունի օրհասական վիճակի մասին Կ. Պոլսի պատրիարքարանին և օտար հյուպատոսարաններին տեղեկացնելու համար՝ կապող օղակի դեր կատարելով արտաքին աշխարհի և պաշարման մեջ գտնվող կիլիկյան բնակավայրերի միջև: Ներսես վարդապետը ինքնապաշտպանական պայքարի կողմնակից էր: 1896 թ. հուլիսի 1-ին ձերբակալվել է իբրև Զեյթունի ապստամբության կազմակերպիչներից մեկը:

[5] Տես նույն տեղում:

[6] Տես նույն տեղում:

[7] Տես *Վարդի Քէշիշեան,* Ներսէս եպս Դանիէլեան նահատակ հոգեւորականը: *Ներսէս եպս. Դանիէլեան,* Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Բ հրատարակութիւն: Հալէպ, 2010, էջ 10–11:

Ձերբակալվելուց հետո տարվել է Հալեպ և, յոթ ամիս մնալով Հալեպի կենտրոնական բանտում, ընդհանուր ներման շնորհիվ ազատ է արձակվել, սակայն շուտով կրկին ամբաստանվել է և աքսորվել Դամասկոս: Պատրիարք Մաղաքիա Օրմանյանի երաշխավորությամբ 1898 թ. տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ապրել է ամբողջ տասը տարի, ինչը ազատատենչ հոգևորականի համար իրականում հավասարազոր էր աքսորի:

1905 թ. սուլթան Համիդի դեմ կատարված մահափորձից հետո Վեհապետը սրբազանի հետ ձերբակալվել է և երեք օր խիստ հարցաքննություններից հետո ազատ արձակվել[8]:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն օրհնում է
հայ կամավորականներին. էջմիածին, 1915 թ.

Ադանայի արյունալի կոտորածների և Հաճնի պաշարման ժամանակ Ներսես վարդապետը հանդես է եկել որպես ինքնապաշտպանական կռիվների կազմակերպիչ և հիմնական մղիչ ուժ: Նրա անմիջական ջանքերի շնորհիվ անխուսափելի մահից փրկվել են Հաճնի 25 հազար հայեր, որոնց հետ նրա հրահանգով պաշտպանվել են նաև տեղի 700-800 մահմեդականներ:

Դրանցից անմիջապես հետո նա ձերբակալվել և տարվել է Մարաշ, որտեղ Պատերազմական ատյանը նրան դատապարտել է կախաղանի: Շուրջ երեք ու կես ամսվա բանտարկությունից հետո անպարտ ազատ է արձակվել մեղադրական փաստեր չլինելու և Հաճնի իր պաշտպանյալ մահմեդականների հեռագրերի ու վկայությունների հիման վրա: Նահատակվել է 1915 թ. ապրիլին[9]:

Ականավոր հայագետ, հայ արվեստի, ազգագրության հմուտ գիտակ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, 1913–1914 թթ. գործակցելով Զորավար Անդրանիկի հետ, թուրքերից և քրդերից պաշտպանվելու համար ստեղծել է կամավորական ջոկատներ[10]:

[8] Տես նույն տեղում, էջ 11–15:

[9] Տես նույն տեղում, էջ 16:

[10] Տես *Ստեփան Կերտող,* Հայ Առաքելական եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին: էջմիածին, 2003, էջ 182–186:

Դեռ 1914 թ. օգոստոսի 11-ին Երևանի թեմի կոնսիստորիան Խորեն եպիսկոպոսի ստորագրած հմ. 4230 գրությամբ դիմեց Էջմիածնի սինոդին: Դրանում մասնավորապես ասվում էր. «Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանները մեծաքանակ զորքեր են ուղարկվում, որոնց մեջ մեծ թիվ են կազմում հայերը: Գնդեր կան՝ համարյա ամբողջովին կազմված հայ զինվորներից: Թեմի քահանաներից ոմանք ցանկություն են հայտնում գնալ հայ զորքի հետ՝ նրանց հոգևոր կարիքները հոգալու համար»[11]: Սինոդը 1914 թ. օգոստոսի 27-ին դիմել է գլխավոր շտաբ, ինչպես նաև Կովկասի զինվորական օկրուգի շտաբ՝ հետևյալ պահանջով. «Գործող բանակի զինվորական մասեր ընդունել հայ քահանաներին, որպեսզի նրանք գոհացնեն բանակ կոչված հայ լուսավորչական հավատի զինվորների հոգևոր պետքերը»:

75-ամյա քահանա Տեր Գրիգորը իր կամավոր զինակիցներով մտնում է Վան. 1915 թ.

Առաջին երեցը, որ դարձավ զինվորական քահանա, Սարիղամիշի Տեր Տաճատ քահանա Տեր-Վարդանյանն էր: Պատերազմի դաշտ մեկնելու համար կաթողիկոսին էին դիմում նաև բազմաթիվ այլ հոգևորականներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Արիստակես վարդապետ Զուլոյանը, Ընձակ վարդապետը, Համադանի և Սուլթանաբադի առաջնորդական փոխանորդ Խորեն վարդապետ Լազարյանը և ուրիշներ: Ձավախքում կամավորների հավաքագրմամբ զբաղվում էր տեղի փոխանորդ Իսահակ վարդապետ Տեր-Միքայելյանը, որը 1915 թ. հոկտեմբերին կազմակերպեց 20 հոգուց բաղկացած հեծյալ կամավորական ջոկատ[12]:

Խրիմյան Հայրիկի՝ «Առանց զենքի չկա հայոց փրկություն» կարգախոսը յուրովի ներկայացրեց Սարդարապատի վճռորոշ ճակատամարտում հայ ժողովրդի մեկ այլ նվիրյալ՝ հռչակավոր հայագետ, հայագիտության մի քանի բնագավառների հիմնադիր Գարեգին Հովսեփյանը: Այդ ժամանակ նա եպիսկոպոս էր և Ճեմարանի տեսուչ, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս: Կարսի հանձնումից առաջ՝ 1918 թ. գարնանը, Գարեգին եպիսկոպոս

[11] Տես նույն տեղում, էջ 190–191:

[12] Տես նույն տեղում, էջ 191–192:

Հովսեփյանը, Կարսի կայազորի պետի ինքնասպանությունից հետո, որպես բանագնաց սպիտակ դրոշով գնում է թուրքական զորամասի հրամանատարի մոտ՝ խնդրելով խնայել Կարսում ապաստանած ժողովրդին: Հրաշքով փրկվելով մահից՝ հիվանդ Հովսեփյանը գաղթականների հետ մի կերպ կարողանում է հասնել Էջմիածին[13]:



Հայկական բանակի օրհնումը Սարդարապատի ճակատամարտից առաջ
1918 թ. մայիս

Ալեքսանդրապոլից հետո գրավելով Սարդարապատ կայարանը՝ թշնամին սպառնում էր ջնջել այն փոքրիկ հողակտորը, որտեղ ապաստանել էր հայությունը: Այդ օրհասական պահին թշնամու դեմ կանգնած էին մենակ ժողովուրդը և ցածր ու միջին զինվորական հրամանատարությունը: Ըստ գեներալներ Սիլիկյանի և Նազարբեկովի հրամանի՝ զորքը պետք է քաշվեր Սևան և Կոտայք՝ պարտիզանական կռիվներ մղելու համար: Հայ զորքի մնացած փոքր մասին և աշխարհազորայիններին ու ժողովրդին խրախուսելու և ինքնապաշտպանական կռվի հանելու գործում մեծ դեր ունեցան Ճեմարանի տեսուչ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Էրզրումի առաջնորդ Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը, վարդապետներ Եզնիկը և Թադեոսը, Գրամփա գյուղի քահանա Տեր Հովհաննես Տեր-Մկրտչյանը և այլ հոգևորականներ: Գարեգին և Զավեն եպիսկոպոսները մայիսի 22-ի առավոտյան ձիերով մեկնեցին Էջմիածնի մոտակա Զեյվա և Քյոփառլու գյուղերը: Գարեգին եպիսկոպոսը կրակոտ ճառով ոգևորեց զորքին և ժողովրդին. «Հաղթել կամ ընտրել հայրենի սրբազան հողի վրա մեռնելու միակ պատիվը»: 5-րդ գունդը նա վերանվանում է Մահապարտների գունդ և հորդորում կռվել անվախ ու աննահանջ: Երկու եպիսկոպոսները, ձեռաց խաչերը բարձր պահած, կանգնելով զորքի գլուխ, հրամանատար գնդապետ Պողոս-Բեկ Փիրումյանի հետ նրան առաջնորդեցին դեպի մահ իմացյալ[14]:

[13] Տես *Լ. Չուգասզյան,* Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա Հովսեփյան (1867–1952): «Նշանավոր ճեմարանականներ», պրակ Ա: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 139:

[14] Տես *Հ. Գ. Թուրշյան,* Սարդարապատի հերոսամարտը: Ե., 1969, էջ 141–142, *Մ. Լ.*

Ըստ հերոսամարտի ականատեսների՝ էջմիածնի մոտակա Սամաղար գյուղի քահանա Տեր Հովհաննեսը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Դանիել վարդապետը և այլ հոգևորականներ, որոնք աշխարհազորային շարժման կազմակերպիչներն էին, իրենց հետ երեք արշին բյազ էին վերցրել, որ որտեղ ընկնեն, այնտեղ էլ իրենց պատանքը կարեն[15]:

Էրզրումի առաջնորդ Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը մասնակցել էր մարտերին Էրզրումից ու Երզնկայից մինչև Սարդարապատ[16]: Սարդարապատի հերոսամարտում Եզնիկ և Թադեոս վարդապետները հերոսության անձնական օրինակ էին ցույց տալիս զորքին: Աղթամարի միաբանության անդամ, քաջարի մարտիկ և հայտնի նշանառու Եզնիկ վարդապետը Վանի ինքնապաշտպանության հերոսներից էր: Վանի հերոսամարտի ժամանակ նա քաղաքամիջի հատվածում հայերի գրաված մինարեի գլուխ բարձրացած՝ դիպուկ կրակոցներով ոչնչացրեց թշնամու թնդանոթաձիգներին:

Եզնիկ և Թադեոս վարդապետների կոչով ոտքի ելան նաև միաբանները, որոնք իրենց հետ վերցրին սպիտակ պատանքներ՝ զոհվելու դեպքում տեղում թաղվելու համար, ինչը հատուկ էր նաև իրենց կյանքն ազգին ու հայրենիքին նվիրած ֆիդայիներին: Վարդապետներն իրենց առաջնորդությամբ Սարդարապատ կռվի բերեցին 500 պատանքավոր-հոգևորականի՝ կռվելու մահապարտների գնդի աջ թևում[17]: Կաթողիկոսն օրհնեց կազմավորված և ռազմաճակատ մեկնող հայկական չորս կամավորական ջոկատները և հրամայեց «վրեժխնդիր լինել թուրքերից[18]»:

Գեներալ Սիլիկյանն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին նույնպես առաջարկել էր տեղափոխվել Սևան: Կաթողիկոսը մերժել էր՝ ասելով, որ եթե զորքը հրաժարվում է պաշտպանել այս սուրբ վայրը, ապա ինքը սուրը ձեռքին մենակ կկռվի և կընկնի Մայր Տաճարի գավթում, բայց Մայր Աթոռից չի հեռանա[19]: Կաթողիկոսի հրամանով 8 օր շարունակ Արագածի երկու լանջերից մինչև Արաքս ու Սարդարապատից մինչև Սևան ղողանջում էին բոլոր եկեղեցիների զանգերը՝ ոտքի հանելով ամբողջ ժողովրդին[20]:

Կարապետյան, Հայ Առաքելական Եկեղեցու դերը Հայաստանի Առաջին Հանրապետության ազգային բանակի կազմավորման և ամրապնդման գործում: «ՀԲ», 2001, հմ. 1–2:

[15] Տես *Ա. Բ. Մելիքյան,* 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում: «Լրաբեր Հասարակական Գիտությունների», 2012, հմ. 2–3:

[16] Տես *Հ. Գ. Թուրշյան,* Նշ. աշխ., էջ 142:

[17] Տես նույն տեղում, էջ 143, 156:

[18] Տես *Ստեփան Կերտող,* Նշ. աշխ., էջ 188: Հեղինակը նշում է ռազմաճակատ մեկնելու ցանկություն հայտնած քահանաների անունները Հայ եկեղեցու տարբեր թեմերից (տես նույն տեղում, էջ 192–193):

[19] Տես *Հ. Գ. Թուրշյան,* Նշ. աշխ., էջ 139–140, *նաև՝ Գ. Բ. Ղարիբջանյան,* Մայիսյան հերոսամարտի արձագանքները: «ՀԲ», 1998, հմ. 2:

[20] Տես *Հ. Գ. Թուրշյան,* Նշ. աշխ., էջ 143:

Բաշ-Ապարանի ինչպես պաշտպանության, այնպես էլ ճակատամարտի կազմակերպիչներից էր Ապարանի շրջանի հոգևոր հովիվ քահանա Տեր Հովհաննես Տեր-Մկրտչյանը, իսկ պաշտպանության գիծը պահող աշխարհազորայիններից առաջինը հասել են 100 դովրեցի տղամարդիկ՝ գյուղի քահանա Տեր Գևորգի գլխավորությամբ[21]:

Սարդարապատի հերոսամարտից հետո էլ Հայ Առաքելական Եկեղեցին մնաց զինվորների կողքին և մեծ դեր կատարեց Առաջին Հանրապետության բանակի կազմավորման գործում[22]:

Հայ եկեղեցին իր մասնակցությունն ունեցավ նաև երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ ֆաշիստական Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա: Հայտնի է, որ եկեղեցին պատերազմի առաջին իսկ օրերից մասնակցում էր՝ ռազմաճակատին և թիկունքին նյութական աջակցություն ցուցաբերելով: Բացի այդ, Գևորգ Չորեքչյանի կոչով հանգանակությամբ հավաքվեց գումար, որով գնվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը և ուղարկվեց ռազմաճակատ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Արցախյան պատերազմի տարիներին ևս Հայ Առաքելական Եկեղեցին մեծապես մասնակցեց ազատագրական պայքարին: Արցախին սատարելու նպատակով Հայոց եկեղեցին Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ ակտիվ գործունեություն ծավալեց արտերկրում, դիմեց միջազգային հեղինակավոր կրոնական կազմակերպություններին՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին, Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանսին, տարբեր պետությունների ղեկավարների՝ խնդրելով տնտեսական աջակցություն ցույց տալ շրջափակման մեջ գտնվող Արցախին ու Հայաստանին[23]:

Արցախյան մարտադաշտերում 1991–1994 թվականներին իրենց անունը փառքով պսակեցին շատ հոգևորականներ Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի գլխավորությամբ: Նրանց մի զգալի մասը պարգևատրվեց ԼՂՀ շքանշաններով ու մեդալներով: Նռնակաձիգ Ռաֆայել սարկավագ Խաչատրյանը մասնակցեց բազում մարտերի և զոհվեց Ծամձորի ազատագրման ժամանակ, Արմեն դպիր Մովսիսյանը նույնպես զոհվեց սահմանագծին, Մահապարտների գնդի կազմում կռվում էր Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանը, Շահումյանի և 26-ի ամրակետում գործել է Գրիգոր քահանա Մարկոսյանը, Գանձասարի պաշտպանությանը մասնակցել է Տեր Կորյուն քահանա Կարապետյանը:

[21] Տես *Տիգրան Հայազն,* Ապարանի հերոսամարտը: Ե., 2005, էջ 4:

[22] Տես *Մ. Լ. Կարապետյան,* Նշ. աշխ.:

[23] Տես *Է. Մինասյան,* Հայ Առաքելական եկեղեցին անկախության վերականգնման և հանրապետության կայացման ժամանակաշրջանում: «Տարեգիրք» (ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ), պրակ Գ: Ե., 2008, էջ 346:

Արցախի ազատագրման մարտերին մասնակցել են նաև հայր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, Վիլեն սարկավագ Գրիգորյանը, Տեր Անդրեաս քահանա Թավադյանը, Վահան աբեղա Դավթյանը և շատ ուրիշներ[24]:

1997 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի և ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի համատեղ նախաձեռնությամբ ՀՀ Զինված ուժերում հիմք դրվեց հոգևոր ծառայությանը[25]: Զորակոչվեցին 8 հոգևորականներ՝ քահանաներ ու սարկավագներ, և նշանակվեցին տարբեր սահմանամերձ զորամասերում: 2000 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ հայրապետի և Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ներկայությամբ ստորագրվեց ՀՀ Զինված ուժերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հոգևոր ծառայության կանոնադրությունը[26]:

Դրվագ Արցախյան ազատամարտից.
Տեր Գրիգոր քահանա Մարկոսյանը օրհնում է
հայ կամավորականներին. 1992 թ.

Կարելի է ասել, որ փաստորեն վերականգնվեց Առաջին Հանրապետության օրոք ձևավորված ավանդույթը: Այս ամենի շնորհիվ այժմ գրեթե չկա մի զորամաս կամ որևէ զինվորական հաստատություն, որտեղ չլիներ սպասավորող հոգևորական, որը ոչ միայն իրականացներ իր հոգևոր ծառայությունը՝ հոգալով զինծառայողների հոգևոր պետքերը, այլև հարկ եղած դեպքում պատրաստ լիներ մի ձեռքում խաչ և մյուսում զենք բռնելով՝ պաշտպանել հայրենի հողը և հարազատ ժողովրդին: Այս ամենի ապացույցը եղավ այն, որ 2016 թ. ապրիլյան մարտերի ժամանակ առաջին գծում զինվորների և հրամանատարության կողքին էին ԶՈՒ-ի Հոգևոր ծառայության հոգևորականներ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այլ միաբաններ:

Հայոց եկեղեցին և հոգևորականությունը հազարամյակներ շարունակ իրենց ծանրակշիռ ներդրումն են ունեցել և ներկայումս էլ ունեն մեր պատմության, մշակույթի, ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում: Հոգևորականության՝ որպես ժողովրդի մասի առաքելություններից մեկն է պետության և պետականության պահպանումը, շենացումը ու հզորացումը: Ժառանգելով և զարգացնելով նախորդ հարյուրամյակների մեծումեծ արարումները՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր հոգևորականությամբ զինվորագրվել է հայրենիքի պաշտպանության սուրբ գործին:

[24] Տես *Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյան, Մ. Ա. Հարությունյան,* Արցախի թեմը և Ադրբեջան–Ղարաբաղ հակամարտությունը: «ՀԲ», 2001, հմ. 1–2, *նաև՝ Է. Մինասյան,* Նշ. աշխ., էջ 346:

[25] Տես *Արշեն աբեղա Սանոսյան,* Բանակային քահանաների հաստատությունը ՀՀ զինված ուժերում: «ՀԲ», 2001, հմ. 1–2:

[26] Տես նույն տեղում:

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ. ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻՑ ԴԵՊԻ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը
ընդունում է ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի զեկույցը,
որի ժամանակ քննարկվել է «Ազգ – բանակ»,
կամ «Ժողովրդական բանակ», հայեցակարգը

Երևան, 2016 թ. նոյեմբերի 8

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը
և Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը
սպառազինության և պաշտպանական տեխնոլոգիաների
«ԱրմՀայՏեք-2016» առաջին միջազգային ցուցահանդեսում

Երևան, 2016 թ. հոկտեմբերի 15

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի
և ՀՀ մշակույթի գործիչների այցելությունը ՊԲ զորամաս

Մարտակերտ, 2016 թ. դեկտեմբերի 10

ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

Վարդան Մամիկոնյան
(5-րդ դար)

Արամ Մանուկյան
(1879 – 1919)

Անդրանիկ Օզանյան
(1865 – 1927)

Վազգեն Սարգսյան
(1959 – 1999)



Մոնթե Մելքոնյան
(1957 – 1993)



Լեոնիդ Ազգալդյան
(1942 – 1992)

Արմենակ ՈՒրֆանյան
(1990 – 2016)

Քյարամ Սլոյան
(1996 – 2016)

Ռոբերտ Աբաջյան
(1996 – 2016)

Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի
և ազատամարտիկների համատեղ աղոթքը
Շուշի քաղաքի ազատագրման կապակցությամբ

Շուշի, Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի, 1992 թ. մայիսի 9

Դրվագ ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների երդման արարողությունից
«Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում

2016 թ. փետրվարի 7

«ԱԶԳ–ԲԱՆԱԿԸ» ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԻ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

ԱԶԳԻ ՄՈԲԻԼԻԶԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտահետազոտական կենտրոնի պետի–գլխավոր խմբագրի տեղակալ

ԱԶԳԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ «ԱԶԳ–ԲԱՆԱԿԻ»՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Արդի դարաշրջանում ավանդական ազգային պետությունների զինված ուժերը «ոչ լիովին են համապատասխանում նրանց կարիքներին»[1]: Գոյություն ունի «ավելի կարևոր տեսակների ուժային ազդեցություն»՝ պայմանավորված, օրինակ, ուժեղ պետական հաստատությունների ստեղծմամբ: Ներկայումս «պետութենաշինության արվեստը ազգային հզորության ապահովման առանցքային բաղադրիչն է», առնվազն նույնքան կարևոր, որքան «ավանդական ռազմական հզորությունն է»[2]: Ըստ այդմ արդի պատերազմներում հարվածներ են հասցվում ոչ միայն ԶՈՒ-ին և տնտեսությանը, այլև պետական կառավարման համակարգին, հասարակական գիտակցությանը, բարոյականությանը: Զինված պայքարը մղվում է ոչ միայն ավանդական պատերազմի ձևով՝ ռազմական ուժի գործադրմամբ, այլև ֆինանսական, դիվանագիտական, հոգեբանական, տեղեկատվական, կիբեռ- և այլ ոլորտներում՝ բոլոր հնարավոր միջոցների կիրառմամբ: Ակնհայտ է, որ ազգային պետության դեմ մղվող այդպիսի պատերազմներում թիրախ է դառնում ամբողջ ազգը[3]:

Այս իմաստով արդի դարաշրջանի պատերազմները «տոտալ»՝ «համընդհանուր», պատերազմներ են, որոնց ազդեցությունից զերծ չի մնում հասարակական կյանքի և ոչ մի ոլորտ: Դրանք սկզբունքորեն տարբերվում են 1940-ական թվականների սկզբին ֆաշիստական Գերմանիայի ղեկավարների հռչակած «համընդհանուր պատերազմից», որի էությունն այն էր, որ պետության բնակչության այն մասը, որն ունակ էր զենք վերցնելու, մեկնում էր ճակատ, իսկ մյուսները կանգնում էին հաստոցների մոտ, որպեսզի արտա-

[1] Տես *Ֆ. Фукуяма*. Сильное государство. М., 2006, сс. 199–200:

[2] Տես նույն տեղում:

[3] Տես *М. Калашников*. Крещение огнём, т. 1: «Вторжение из будущего». М., 2007 (http://www.k2x2.info/politika/_kreshenie_ognem_tom_i_vtorzhenie_iz_budushego/p2.php):

դրեն միայն այն, ինչ անհրաժեշտ է ռազմաճակատին: Եվ քանի որ ամբողջ ժողովուրդը աշխատում էր ռազմաճակատի համար, ուստի համարվում էր օրինական թիրախ ու ենթարկվում զանգվածային ռմբակոծությունների[4]:

«Ավանդական համընդհանուր պատերազմի» իդեալական զինվորը ֆիզիկապես առողջ, ուժեղ, երիտասարդն է, իսկ մյուսները «կիսազինվոր» են[5]: Ի տարբերություն դրանից, այսօրվա համընդհանուր պատերազմի զինվոր կարող է լինել յուրաքանչյուր ոք, որին հասանելի է հակառակորդի վրա ազդելու որևէ միջոց, կամ որի վրա կարող է ազդել հակառակորդը[6]:

Ամերիկացի սոցիոլոգ է. Թոֆլերի տեսության մեջ 20-րդ դարի «ավանդական համընդհանուր պատերազմները» համապատասխանում են Երկրորդ ալիքի (արդյունաբերական հասարակության) պատերազմներին, իսկ ներկայիս համընդհանուր պատերազմները՝ Երրորդ ալիքի (տեղեկատվական հասարակության) պատերազմներին, ընդսմին ակնհայտ է, որ տեղեկատվական հասարակության մեջ կարևորվում են մարդու ոչ այնքան ֆիզիկական, որքան մտավոր ունակությունները, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու և տեխնիկան կառավարելու ունակությունները[7]:

Ավանդական համընդհանուր պատերազմներում, որպես կանոն, հնարավոր էր տարբերակել «ռազմաճակատն» ու «թիկունքը», «կոմբատանտներին» ու «ոչ կոմբատանտներին», «մոբիլիզացման ժամանակաշրջանն» ու «վերականգնման ու խաղաղ շինարարության ժամանակաշրջանը»[8]: Այսօր դրանց միջև սահմանները վերանում են կամ դառնում խիստ պայմանական:

Եթե ավանդական զինված հակամարտություններում ազգային պետությունները պատերազմում էին ազգային պետությունների դեմ, ապա ոչ ավանդական հակամարտություններում ազգային պետության հակառակորդ կարող են լինել նաև ոչ պետական կազմավորումները[9]: Եթե ավանդական պատերազմներում ընդհանուր առմամբ գործում են մարդասիրական իրավունքով ամրագրված պատերազմի օրենքները, ապա ոչ ավանդական պատերազմներում դրանց պահպանումն ավելի շատ բացառություն է, քան օրինաչափություն: Եթե ավանդական պատերազմներում դիմակայության հիմնական ասպարեզը «ֆիզիկական» մարտադաշտն է, ապա ոչ ավանդական պատերազմներում՝ տեղեկատվական-հոգեբանական գործողությունների դաշտը[10]: Եթե նախորդ սերունդների պատերազմներում ընդհանուր հզորությունը

[4] Տես «Тотальная война». «Большой толковый социологический словарь», т. 2. М., 2001, с. 355:

[5] Տես *Մ. Կպլաշնիկով*, Նշ. աշխ.:

[6] Տես նույն տեղում:

[7] Տես *Элвин Тоффлер*. Война и антивойна. М., 2005, сс. 69–136:

[8] Տես *Մ. Կպլաշնիկով*, Նշ. աշխ.:

[9] Տես *Рачья Арзуманян*. Сложное мышление и сеть: парадигма нелинейности и среда безопасности 21 века. Е., 2011, с. 219:

[10] Տես նույն տեղում:

հավասար էր սպառազինության ու ռազմական տեխնիկայի միավորների հզորությունների գումարին, ապա ներկայումս, երբ դրանք ներառված են միասնական թվային տեղեկութային ցանցի մեջ, հավաքական հզորությունն էապես գերազանցում է հզորությունների գումարը: Այսինքն՝ եթե ավանդական պատերազմներում հաղթանակը ձեռք է բերվում հիմնականում զինվորականների և քաղաքացիական իշխանությունների ջանքերով, ապա ոչ ավանդական պատերազմներում՝ «ամբողջ ազգի համադասված ջանքերով»[11], քանի որ «ժամանակակից պատերազմն իր մեջ ներքաշում է ամբողջ ազգին՝ յուրաքանչյուրին դարձնելով զինվոր»[12]:

Այսպիսով՝ արդի դարաշրջանի ոչ ավանդական պատերազմներում պետությունը կարող է հաղթանակ տանել միայն ամբողջ ազգի համադասված գործողությունների շնորհիվ: Նման գործողությունների ունակ ազգի ստեղծումը հենց «ազգ–բանակ» հայեցակարգի նպատակն է, ուստի կարող ենք եզրակացնել, որ ազգի վերածումը «ազգ–բանակի» պայմանավորված է արդի մարտահրավերների ու սպառնալիքների բնույթով և ներկայիս հրամայականն է:

«ԱԶԳ–ԲԱՆԱԿԻ» ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված անվտանգային միջավայրն այնպիսին է, որ նրան կարող է սպառնալ ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական պատերազմների վտանգը: Բավական է նշել միայն 2016 թ. ապրիլին Ադրբեջանի սանձազերծած Չորսօրյա պատերազմը (որում որոշ հետազոտողների կարծիքով կային հիբրիդային, այսինքն՝ ոչ ավանդական, պատերազմի տարրեր[13]), Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում «քաղաքական, կրոնական և կրոնադավանական պայքարի սրումը, այդ թվում՝ Իրաքում, Սիրիայում, Եմենում և Լիբիայում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմները, Իրաքի և Սիրիայի որոշ տարածքներում իր բնույթով ահաբեկչական «Իրաքի և Լևանտի Իսլամական Պետության» ստեղծումը, թուրք-քրդական դիմակայության, սուննի–շիա և սուննիների միջավայրում հակասությունների սրումը»[14] և այլն: Ուստի ՀՀ ազգային անվտանգության քաղաքականությունը, Իսրայելի փորձի հաշվառմամբ, պետք է խարսխվի երկու գործոնների վերաբերյալ համապարփակ ազգային համաձայնության վրա. առաջինը հայերի նկատմամբ ցեղասպանության իրագործման բացառումն է, երկրորդը՝ հայ ժողովրդի ու պետականության գոյության դեմ ուղղված սպառնալիքներին դիմակայելու համար բոլոր հայերի համազգային համախմբման անհրաժեշտության գիտակցումը[15]:

[11] Տես նույն տեղում:

[12] Տես *Մ. Կալաշնիկով*, Նշ. աշխ.:

[13] Տես *Ա. Կ. Հովհաննիսյան*, Հիբրիդային պատերազմների որոշարկման և դասակարգման որոշ հարցեր: «ՀԲ», 2016, հմ. 2:

[14] Տես *Ս. Մ. Օհանյան*, ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման էությունը և նպատակները: «ՀԲ», 2015, հմ. 3:

[15] Տես *Հ. Ս. Քոթանջյան*, Խորհրդարանական հանրապետության անվտանգային-պաշտ-

Հետևաբար՝ օրվա հրամայականն է՝ նշված մարտահրավերներին դիմակայելու համար հայ ժողովրդի վերածումը «ազգ–բանակի»: ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի խոսքով՝ «մենք չենք կարող ընտրել կամ չընտրել «ազգ–բանակի» հայեցակարգը: Մենք միայն կարող ենք որդեգրել այն հենց այսօր և նորովի տեսլականով»[16]:

«Ազգ–բանակի» հայկական տեսլականի հիմքում դրված արժեքային համակարգի հետ համընկնում է «երկրապահ» հասկացության (որն առաջացել է Արցախյան պատերազմում հայկական աշխարհազորայինների անվանումից) մեջ ամփոփված այն արժեքային համակարգը, որը 1990-ական թվականների վերջին – 2000-ական թվականների սկզբին մշակել են մի խումբ ճանաչված հայ մտավորականներ՝ արձակագիր, հրապարակախոս, խմբագիր, զինվորական Վրեժ Իսրայելյանի ղեկավարությամբ[*]: Մեր կարծիքով, այդ արժեքային համակարգը կարելի է օգտագործել հայկական «ազգ–բանակի» կայացման գաղափարադաստիարակչական ապահովման խնդիրների լուծման համար[**]:

պանական համակարգը. Իսրայելի և Վրաստանի դասերի ռազմավարական քաղաքագիտական իմաստավորում: «ՀԲ», 2016, հմ. 2:

[16] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում»: «ԹԵՐԹ.am», 29.10.2016 (http://www.tert.am/am/news/2016/10/29/vigen-sargsyan/2177197):

[*] Այդ մտավորականներից են՝ բանաստեղծ *Ղուկաս Սիրունյանը*, գրողներ *Գրիգոր Զահիկյանը*, *Նորայր Ենգիբարյանը*, *Հակոբ Հակոբյանը*: Հոդվածի հեղինակը նույնպես բախտ է ունեցել նշված ժամանակահատվածում աշխատելու Վ. Իսրայելյանի ղեկավարությամբ՝ թղթակցելով «Հայ զինվոր» և «Երկրապահ» թերթերին:

[**] Այդ արժեքային համակարգի հիմքում ընկած են հետևյալ մտքերը. ա) երկրապահը «երկիր պահող, այսինքն՝ հող, ազգ ու պատիվ պահող, այն հայն է, որ զենքն առած մարտի է նետվում ոչ երբեք զորակոչով կամ ինչ-որ մեկի հորդորով», այլ՝ հայրենիքի կանչով. «նա բնազդով է զգում իր երկրին սպառնացող վտանգը», բ) «երկրապահը հասարակության բոլոր խավերից ոգեկոչված անհատների միասնությունն է. նա զինվոր է, քաղաքագետ է, արվեստագետ է և գիտնական, գործազուրկ է և գործատեր, ուսյալ է և անգրագետ, աղքատ է և հարուստ, նա սերում է բոլոր հայերի ընտանիքներից»: Երկրապահը միայն առաջին Արցախյան պատերազմի վետերանը չէ (հիշյալ մտավորականներն ընդլայնել են այդ հասկացության իմաստը). երկրապահ է հայրենիքի պաշտպանության համար նշանակալի ավանդ ներդրելու ձգտում ունեցող և այն իրագործող յուրաքանչյուր ոք:

«Երկրապահ» հասկացությունը ենթադրում է գաղափարներ, որոնց արդյունավետ տարածման նպատակով հիշյալ մտավորականները ստեղծել են նաև ասույթներ (աֆորիզմներ), որոնք կարելի է օգտագործել «ազգ–բանակ» գաղափարի քարոզչության համար. «Ամենակատարյալ գաղափարախոսությունը ազատագրված հողն է», «Երկրապահը կռվում է զենքով, հաղթում է ոգով, սրբանում է արյամբ», «Երկրապահը նա է, ով տալիս է ամեն ինչ և չի ակնկալում ոչինչ», «Հողը՝ հայրենիք, երկիրը՝ տուն, ազգը՝ երկրապահ», «Միայն ժողովրդի կողմից պաշտպանվող հայրենիքն է անպարտելի», «Հաղթում է նա, ով հավատում է», «Երկրապահը կոչում չէ, ճակատագիր է», «Երկրապահը մեր անունը չէ, արյունն է», «Հայրենիք բառը մենք արյունով գրեցինք, դուք կարդացեք հոգով», «Բանակը ճանապարհ է դեպի հայրենիք» և այլն (տես «Երկրապահ», Երկրապահ կամավորականների միության տարեգիրք: Ե., 2002):

ԱԶԳԻ ՄՈԲԻԼԻԶԱՑՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ «ԱԶԳ–ԲԱՆԱԿԻ» ԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ՀՀ Պաշտպանության նախարարի ներկայացրած «ազգ–բանակի» հայկական տեսլականից ակնհայտ է դառնում, որ այդպիսի պաշտպանական համակարգի ստեղծումը պահանջում է ոչ միայն պետական կառավարման բոլոր ոլորտներում սկզբունքների և գործելաոճի արմատական վերանայում, ոչ միայն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում վիթխարի կազմակերպական աշխատանք, այլև, որ թերևս ամենակարևորն ու ամենադժվարն է, սոցիալական հարաբերությունների բնույթի արմատական փոփոխություն՝ նպատակաուղղված այդ հարաբերությունների կառուցմանը արդարության, փոխօգնության, սիրո, անձնազոհության, անշահախնդրության, միասնականության, այսինքն, ի վերջո՝ զարգացած ժողովրդավարության հիմքի վրա: Սա մի հասարակական իդեալ է, որին կերազեր հասնել ցանկացած ժողովուրդ, սակայն որի իրագործումը շատ դժվար է, մասնավորապես այն պատճառով, որ մեր հասարակության մեջ դրան խանգարում են մի շարք գործոններ.

– Հայաստանից շարունակվող արտագաղթը և դրանով պայմանավորված՝ մարդկային ռեսուրսի կտրուկ նվազումը,
– հասարակության սոցիալական բևեռացումը,
– անհատապաշտական, օգտապաշտական արժեհամակարգի տարածումը, ինչն սպառնում է ցանկացած կառույցի, առաջին հերթին՝ զինվորական կոլեկտիվների արդյունավետ գործառմանը,
– հոգևոր արժեքների, Հայ Առաքելական Եկեղեցու դերի կարևորության մերժումը, ինչը նպաստում է նյութապաշտության տարածմանը, բարքերի այլասերմանը, ինչպես նաև անարդյունավետ է դարձնում Եկեղեցու՝ հասարակության համախմբմանն ուղղված ջանքերը,
– սպառողական վարքը, ինչն առաջին հերթին ազդում է զինծառայության նկատմամբ զորակոչիկների և զինծառայողների վերաբերմունքի վրա՝ նպատակ դարձնելով զինծառայությունից նյութական օգուտի քաղումը[17]:

Այդուհանդերձ, «ազգ–բանակ» իդեալին ձգտումը ոչ թե ինչ-որ մեկի քմահաճույքն է, այլ, ինչպես վերը նշվեց, արդի մարտահրավերներով ու սպառնալիքներով պայմանավորված հրամայական: Ուստի փորձենք քննարկել դրա իրագործման ուղիները:

Գոյություն ունեն այսպես կոչված սոցիալական տեխնոլոգիաներ[*], որոնց գործարկմամբ աշխարհի զարգացած տերությունները ամրապնդում են

[17] Տես *Ա. Վ. Աթանեսյան, Ա. Ե. Մկրտիչյան, Ա. Ռ. Ավետիսյան, Ա. Ռ. Սահակյան, Վ. Հ. Մարգարյան, Մ. Ա. Մախալկինա*, Բանակ և հասարակություն. ժամանակակից հիմնախնդիրներ (ուսումնական ձեռնարկ): Ե., 2013, էջ 31–37:

[*] Կան սոցիալական տեխնոլոգիաների տարբեր սահմանումներ: Օրինակ՝ դա այն նպատակների (գաղափարների), արժեքների, աշխատանքային հնարների, գործիքների և

իրենց ժողովուրդների միասնականությունը, ինչպես նաև թուլացնում հակառակորդ ժողովուրդներին: Այսպես. 1970-ական թթ. ԱՄՆ-ում որոշ ռասայական և էթնիկ խմբերի միջև առաջացել էին սոցիալական հակամարտություններ, որոնք չեզոքացնելու կամ մեղմելու նպատակով հաջողությամբ կիրառվեցին մի շարք սոցիալական տեխնոլոգիաներ[18]: Այդ տեխնոլոգիաները, որոնց հիմքում դրված էին կառավարման, քաղաքականության և բիզնեսի ոլորտներում կատարված հայտնագործություններն ու ստեղծված տեսությունները, մեր կարծիքով կարող են կիրառվել նաև «ազգ–բանակ» համակարգի ձևավորման համար: Խոսքը, մասնավորապես, հետևյալի մասին է.

– մարկետինգային տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն են ընձեռում կառավարելու մարդկանց վարքը ապրանքների (ծառայությունների) ընտրության, գնման և սպառման ժամանակ,
– անձնակազմի կառավարման տեխնոլոգիաները, որոնցով կարելի է վերահսկել վարքը աշխատանքային հարաբերությունների ոլորտում,
– հասարակայնության հետ կապերի կամ փիար տեխնոլոգիաներ[*], որոնց շնորհիվ կարելի է ստեղծել առանձին ընկերությունների և քաղաքական հաստատությունների դրական կերպարը,
– հաղորդակցային տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն են ընձեռում կառավարելու մարդկանց վարքը՝ զանգվածային հաղորդակցության միջոցներով տարածելով նշանների և կերպարների որոշակի խմբեր:

Ըստ էության, «ազգ–բանակի» ստեղծումը «կազմակերպված կոլեկտիվ ջանք է՝ ուղղված սոցիալական փոփոխությունների իրագործմանը»[19]: Ըստ էության սա հենց սոցիալական կամ հասարակական շարժման սահմանումն է, ուստի կարելի է ասել, որ «ազգ–բանակ» համակարգը կարող է ստեղծվել որպես սոցիալական շարժման[**] արդյունք: Սոցիոլոգիայում «սոցիալական

տեխնիկայի ամբողջությունն է, որոնք սոցիալական հաստատությունները (եկեղեցի, դպրոց, համալսարան, գրադարան, թատրոն, ԶԼՄ-ներ և այլն) օգտագործում են սոցիալական հանրույթ ձևավորելու համար: Մեկ այլ սահմանմամբ՝ դրանք սոցիալական գիտելիքների կիրառումներն են հասարակությունը կառավարելու նպատակով (տես *А. Гапоненко*. Современные американские социальные технологии и возможности их практического применения Россией. «Изборский клуб», 10.02.2010 (https://izborsk-club.ru/380)):

[18] Տես նույն տեղում:

[*] Փիար (անգլ. *PR–public relations*)՝ կազմակերպության (անհատի) և հասարակայնության միջև տեղեկատվական հոսքերի կառավարում՝ տվյալ կազմակերպության (անհատի) նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու նպատակով:

[19] Տես *Э. Э. Шульц*. Теория социальных движений: проблемы теории и практики, «Вестник Северного (Арктического) федерального университета». Серия: «Гуманитарные и социальные науки», 2014, № 4 (http://cyberleninka.ru/article/n/teoriya-sotsialnyh-dvizheniy-problemy-teorii-i-praktiki):

[**] Շարժման կարգախոսներ ընտրել՝ «Հողը՝ հայրենիք, երկիրը՝ տուն, ազգը՝ երկրապահ», «Բանակը ճանապարհ է դեպի հայրենիք»: Շարժման նպատակը պետք է լինի բանակին աջակցումը և յուրաքանչյուր մասնակցի մարտունակության մակարդակի բարձրացումը:

շարժում» ասելով հասկանում են, որպես կանոն, իշխանությանն ընդդիմադիր շարժումները[20]: Հայկական «ազգ–բանակի» ստեղծումը, հակառակը, պետք է լինի իշխանության նախաձեռնած սոցիալական շարժման արգասիք: Նման շարժման խնդիրը «առկա ռեսուրսների օգտագործումն ու մոբիլիզացումն[*] է»[21]: Մեր դեպքում նպատակահարմար է մոբիլիզացնել չորս տեսակի ռեսուրս.

1) մշակութային (հասկացութային գործիքներ, մասնագիտական գիտելիք),
2) հասարակական-կազմակերպական (երեք հիմնական տեսակի՝ ենթակառուցվածք, սոցիալական ցանցեր (մարդկանց միջև հարաբերությունների համակարգ), կազմակերպություններ),
3) մարդկային,
4) նյութական (ֆինանսական և ֆիզիկական կապիտալ, գրասենյակային տարածքներ և կահավորանք և այլն)[22]:

«Ազգ–բանակի» դեպքում մշակութային ռեսուրս են, օրինակ, «երկրապահ» արժեքային համակարգը, ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգն իր հասկացություններով, սկզբունքներով ու մեթոդներով հանդերձ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գիտելիքը, որն այն ունեցող քաղաքացուն հնարավորություն կտա մասնակցելու ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովմանը և այլն: Հասարակական-կազմակերպական ռեսուրս են, օրինակ, ռազմահայրենասիրական նպատակներ հետապնդող հասարակական կազմակերպությունները, համացանցում բանակին աջակցության նպատակի շուրջ միավորված օգտատերերի հանրույթները և այլն: Մարդկային ռեսուրս են, օրինակ, ռազմաճակատ կամավոր մեկնել կամ սոցիալապես անապահով զինծառայողների ընտանիքներին օգնել ցանկացողները: Նյութական ռեսուրս են հայրենիքի պաշտպանության նպատակի համար հանգանակված դրամական միջոցները, սնունդը, հագուստը և այլն:

Շարժումը կարող է ճյուղավորվել ըստ ոլորտների՝ բանակին նյութապես աջակցողներ, ֆիզիկապես աջակցողներ, մտավոր արտադրանքով աջակցողներ և այլն: Զուգահեռաբար պաշտպանության նախարարությունը պետք է հանրությանը ներկայացնի այն կարիքները, որոնց բավարարումը կարող է նպաստել ԶՈՒ-ի մարտունակության աճմանը, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա կողմնորոշվել, թե ինչպես օգտակար լինել բանակին:

[20] Տես, օրինակ, *П. Штомпка*. Социология социальных изменений. Современное состояние теорий социальных движений. М., 1996 (http://polbu.ru/sztompka_sociology/ch107_all.html):

[*] «Ռեսուրսների մոբիլիզացման» տեսության համաձայն՝ մոբիլիզացումը «մի գործընթաց է, որի ընթացքում խմբի անդամների անհատական ռեսուրսները փոխանցվում են այդ խմբի տնօրինությանը, կուտակվում են և ուղղվում ընդհանուր նպատակների իրագործմանը կամ խմբային շահերի պաշտպանությանը» (տես *И. А. Климов*. Социальная мобилизация: к истории понятия, «Человек. Сообщество. Управление», 2004, N1 (http://chsu.kubsu.ru/arhiv/2004_1/2004-1_Klimov.pdf)):

[21] Տես *Է. Է. Շուլց*, Նշ. աշխ.:

[22] Տես նույն տեղում:

Զանգվածային մոբիլիզացման տեսության համաձայն՝ առանցքային պրոբլեմը անհատներին շարժման մեջ ներգրավման, այսինքն՝ նրանց մեջ շարժմանը մասնակցելու շարժառիթների ձևավորման, պրոբլեմն է[23]: Կա վարկած, որ որևէ կազմակերպության կոլեկտիվի մոբիլիզացմանը նպաստում է դրա անդամների միջև փոխադարձ համակրանքի այն զգացումը, որն առաջանում է «մոբիլիզացման մթնոլորտում», ընդսմին դրա ձևավորմանը նպաստում է կազմակերպության ղեկավարության և աշխատողների միջև «սոցիալական փոխանակման»* դրական հարաբերությունների զարգացումը[24]:

Մոբիլիզացման մթնոլորտի հիմնական բաղադրիչներն են՝

– ղեկավարի, ապա՝ գործընկերների նկատմամբ վստահությունը,
– կոլեկտիվի յուրաքանչյուր անդամին կազմակերպության բարոյական և նյութական աջակցությունը,
– ղեկավարների որոշումներում և միջանձնային հարաբերություններում արդարության սկզբունքի պահպանումը,
– ղեկավարների և գործընկերների կողմից անհատական ջանքերի գնահատվածությունը,
– իր աշխատանքի կարևորության՝ յուրաքանչյուրի գիտակցումը,
– յուրաքանչյուրի ներգրավվածությունը կազմակերպության համար կարևոր խնդիրների լուծման գործում[25]:

Սոցիալական շարժումների համար ևս անհրաժեշտ է մոբիլիզացման մթնոլորտի ստեղծում: Թեպետ վերջինիս մեխանիզմները լիովին ուսումնասիրված չեն, սակայն կարելի է ենթադրել, որ դրանք նման են կոլեկտիվներում մոբիլիզացման մթնոլորտի ստեղծման մեխանիզմներին: Հետաքրքրական են հատկապես այն հետազոտությունները, որոնցում փորձ է արվում պարզելու համացանցի (սոցիալական ցանցերի) ունեցած դերը[26]:

Մեր ենթադրությամբ՝ հաղորդակցության նշված միջոցների գործածումը մարդկանց մեջ առաջացնում է նաև միմյանց նկատմամբ վստահություն (ըստ էության՝ դրա համար բավական են սոցիալական ցանցի օգտատիրոջ գրավոր անկեղծ խոսքն ու լուսանկարները), իրենց ջանքերի գնահատվածության պատրանք (չէ՞ որ բոլորը կարդում են տվյալ օգտատիրոջ տարա-

[23] Տես նույն տեղում:

* Փոխհարաբերություններում բարիքի (սեր, գովասանք, դրամ և այլն) փոխանակում:

[24] Տես *Т. Кочарян.* Теория мобилизации: истоки корпоративного подвижничества, «www.hrm.ru», 2011 (http://hrm.ru/db/hrm/92C3F2489E983893C32574C200513ED0/print.html):

[25] Տես նույն տեղում:

[26] Տես, օրինակ, *В. В. Желтов, М. В. Желтов*. Интернет, протестные движения и арабская весна. «Территория новых возможностей», 2014, № 1 (24) (http://cyberleninka.ru/article/n/internet-protestnye-dvizheniya-i-arabskaya-vesna):

ծած տեղեկությունը և տեղեկանում նրա ներդրած «ջանքի» մասին), միմյանց բարոյապես աջակցելու հնարավորություն (բավական է միայն հավանել *(like)* տվյալ հանրագիրը («ստատուսը»)) և ընդհանուր գործում ներգրավվելու հնարավորություն (բավական է ընդամենը տարածել տվյալ տեղեկությունը): Արդարության սկզբունքի պահպանման պատրանք կարող է ստեղծել համացանցում արտահայտվելու՝ բոլորի հավասար հնարավորությունը:

Այլ կերպ ասած՝ համացանցը, մեր կարծիքով, հնարավորություն է տալիս հեշտությամբ ձևավորելու մոբիլիզացման մթնոլորտի այն բոլոր բաղադրիչները, որոնք իրական միջանձնային փոխհարաբերություններում առանց համացանցի օգտագործման կպահանջեին շատ ավելի մեծ ջանքեր: Մասնավորապես՝ «իրական կյանքում» (կոլեկտիվում) մոբիլիզացման մթնոլորտ ստեղծելու համար անհրաժեշտ է խելամտորեն կիրառել կառավարման լծակներ[*], որոնք պայմանականորեն կարելի է բաժանել չորս խմբի.

ա) կազմակերպության առաքելություն, տեսլական, արժեքներ և խնդիրներ,

բ) աշխատանքի կազմակերպման համակարգ,

գ) անձնակազմի կառավարման քաղաքականություն և գործիքներ,

դ) առաջնորդություն (*leadership*)[27]:

Բիզնեսի ոլորտի համար մշակված այս սկզբունքները կարելի է տարածել նաև պետության վրա՝ վերջինս դիտելով որպես մեծ կազմակերպություն: Ըստ այդմ՝ պետության մեջ մոբիլիզացման մթնոլորտի ստեղծման համար պետք է գործի դրվեն կառավարման վերոնշյալ լծակները և զուգահեռաբար օգտագործվեն համացանցով (տեղեկատվական տեխնոլոգիաների) ընձեռվող հնարավորությունները:

ԱԶԳԻ ՄՈԲԻԼԻԶԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բնականաբար, ազգի մոբիլիզացումը չի կարող իրագործվել միանգամից, դա բազմափուլ պրոցես է: Ընդսմին յուրաքանչյուր փուլում անհրաժեշտ է լուծել տեղեկատվական ապահովման յուրահատուկ խնդիրներ: Այդ առումով մենք, հիմք ընդունելով ռուսաստանյան սոցիոլոգ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օ. Ն. Յանիցկու՝ «մարդու և հանրության մոբիլիզացման վիճակների դասակարգման սկզբունքը»[28], առաջարկում ենք ազգի մոբիլիզացումը բաժանել հետևյալ փուլերի՝ յուրաքանչյուր փուլի տեղեկատվական ապահովման խնդիրների նշմամբ.

[*] Մեր կարծիքով՝ մարդկանց մոբիլիզացումը տվյալ բնագավառի գիտական գիտելիքի արդյունավետ կիրառման արվեստ է:

[27] Տես *Տ. Քոչարյան*, Նշ. աշխ:

[28] Տես *О. Н. Яницкий.* Массовая мобилизация: проблемы теории. «Социологические исследования», 2012, № 6 (http://ecsocman.hse.ru/data/2012/09/28/1251348627/Yanitskiy.pdf):

1) մոբիլիզացնող տեղեկույթի (գիտելիքի) հաղորդում: Մոբիլիզացումը սովորաբար կատարվում է որպես սոցիալ-քաղաքական բնույթի մարտահրավերներին (այդ թվում՝ պատերազմի սպառնալիքին) արձագանք, իսկ մոբիլիզացնող գիտելիքը տեղեկույթն է այդ հակամարտության և հանրությանն սպառնացող վտանգի մասին,

2) մարդու (քաղաքացու) և հասարակության (խմբի, սոցիալական շարժման) մոբիլիզացման վիճակի վերածում սոցիալական նորմի: Դա նշանակում է, որ յուրաքանչյուրն իր առօրյա կյանքում դառնում է կենտրոնացած և նպատակասլաց՝ աչքի առաջ ունենալով հիմնական պրոբլեմը («ազգ–բանակի» ստեղծման պարագայում «Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել բանակին» հարցն է): Այս փուլում տեղեկատվական ապահովման հիմնական խնդիրը սոցիալական շարժմանը միանալու՝ անհատի շարժառիթների (մոբիլիզացման մթնոլորտի) ձևավորմանը նպաստելն է,

3) պատրաստություն մոբիլիզացմանը, կամ խմբային մոբիլիզացում: Այս փուլում կատարվում է մատչելի ռեսուրսների մասնակի կամ լրիվ մոբիլիզացում: Տեղեկատվական ապահովման խնդիրներն են՝ կապուղիների ստուգումը, տեղեկատվական ռեսուրսների հաշվառումը, տեղեկույթի փոխանակման օպտիմալ սխեմաների մշակումը և այլն, այսինքն՝ տեղեկատվական ռեսուրսների բերումը ակտիվ վիճակի: Կարևորագույն խնդիրը մոբիլիզացման հասցեականության ապահովումն է, այսինքն՝ հստակ պարզումը, թե ով ինչի կարիք ունի,

4) մոբիլիզացում՝ բուն մոբիլիզացման գործողություն, որն ուղղված է իրական աղետի (մեր դեպքում՝ պատերազմի, բայց նաև՝ բնապահպանական կամ տեխնածին աղետի) դեմ պայքարին: Սա մոբիլիզացված ռեսուրսների օգտագործման փուլն է: Այս փուլում տեղեկատվական ապահովման հիմնական խնդիրը հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերազանցության* ապահովումն է: Այն ներառում է հակազդում տեղեկատվական տարածության մեջ ի հայտ եկող այն երևույթներին (խուճապ, պարտվողական տրամադրությունների տարածում, ապատեղեկատվություն, հակառակորդի տեղեկատվական-հոգեբանական գործողություն և այլն), որոնք խոչընդոտում են մոբիլիզացմանը,

5) մոբիլիզացման ավարտ: Ցանկացած մոբիլիզացում պետք է ունենա գոնե փոքր արդյունք: Տվյալ դեպքում դա այն սոցիալական փոփոխություններն են, որոնք հանգեցնելու են «ազգ–բանակ» համակարգի ստեղծմանը կամ, առնվազն, այդ ուղին հասցնելու են ինչ-որ հանգրվանի, օրինակ՝ հասա-

* Ըստ ամերիկյան հետազոտողների՝ տեղեկատվական գերազանցությունը տեղեկույթի անընդհատ հոսքի ստացման, մշակման և տարածման հնարավորությունն է այն դեպքում, երբ հակառակորդը զրկված է դրանից (տես *Ա. Ն. Անտոնյան, Ա. Կ. Յալանուզյան*, Ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովման արդիական սկզբունքները, եղանակները և մեխանիզմները: «ՀԲ», 2016, հմ. 1):

ռակության վերափոխման վերաբերյալ նոր գաղափարների, նախագծերի: Այս փուլում տեղեկատվական ապահովման խնդիրը հասարակությանը արդյունքների մասին իրազեկումն է և նոր գաղափարների տարածումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդի դարաշրջանի ոչ ավանդական պատերազմներում ազգային պետությունը կարող է հաղթանակ տանել միայն ամբողջ ազգի համադասված գործողությունների շնորհիվ, ուստի դարաշրջանի հրամայականն է ազգի վերածումը համաժողովրդական աջակցության և հայրենասիրական ոգու վրա հիմնված ժողովրդավարական «ազգ–բանակի»: Հայաստանի անվտանգային միջավայրն այնպիսին է, որ նրան կարող են սպառնալ ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական պատերազմների վտանգները, հետևաբար՝ հայկական «ազգ–բանակի» ստեղծումն այլընտրանք չունի: Հայկական «ազգ–բանակի» հիմքում կարող է դրվել 1990-ական թվականների վերջին մշակված գաղափարական համակարգը, որի խտացված արտահայտությունն է «երկրապահի»՝ որպես հայրենիքի պաշտպանության համար ավանդ ներդրելու ձգտում ունեցող և իրագործող անձի հասկացությունը:

«Ազգ–բանակի» ստեղծման համար պետք է մոբիլիզացնել մշակութային, հասարակական-կազմակերպական, մարդկային և նյութական ռեսուրսները և պետության մեջ ստեղծել մոբիլիզացման մթնոլորտ՝ կառավարման լծակների, համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Ազգի մոբիլիզացումը պետք է իրագործվի փուլ առ փուլ: Մոբիլիզացման առաջին փուլում տեղեկատվական ապահովման խնդիրը մոբիլիզացնող տեղեկույթի տարածումն է, երկրորդում՝ համաժողովրդական մոբիլիզացման մթնոլորտի ստեղծումը, երրորդում՝ տեղեկատվական ռեսուրսների բերումը ակտիվ վիճակի, չորրորդում՝ հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերազանցության ապահովումը, հինգերորդում՝ մոբիլիզացման արդյունքների մասին հասարակության իրազեկումը:

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԻԲԵՌԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻԱԶԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻԱԶԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՀ ԿԻԲԵՌԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՌԱՄԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇ

Ա. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնի պետ, Կ. Ա. ԳԱԼՈՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնի ազգային անվտանգության քաղաքականության խմբի պետ

ԿԻԲԵՌԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔԻ ՎՐԱ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՆԱԿԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ԹՎԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՀ պաշտպանական-անվտանգային ոլորտի բարեփոխումների համատեքստում նախատեսվող «ազգ–բանակ» համակարգի ներդրման շրջանակներում կարևորվում է տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառմամբ նորամուծական լուծումների մշակումը: Այս համատեքստում ՀՀ-ում «ազգ–բանակ» համակարգի ձևավորմամբ էական նշանակություն են ստանում ազգային կիբեռկարողությունների զարգացումն ու մարդկային ռեսուրսների ռազմավարական կառավարումը՝ միտված հասարակության կազմակերպվածքի արդիականացմանը և պետության արդյունավետ կառավարմանը:

Պետության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառման աստիճանի ինտենսիվ աճումը նպաստում է ՀՀ պետական կառավարման համակարգի դերակատարների ու քաղաքացիների փոխգործության հարթակի ընդլայնմանն ու բազմազանեցմանը, ինչը հնարավորություն է տալիս ժողովրդավարության ապահովման և հանրային քաղաքականության իրականացման ասպարեզում կիրառելու թափանցիկ, ինտերակտիվ-տեղեկատվական և ցանցային կառավարման մեխանիզմներ:

ՀՀ-ում «ազգ–բանակ», կամ «ժողովրդական բանակ», համակարգի ներդրման համատեքստում Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ու բանակում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացման համար կարևոր է, դասական պատկերացմամբ ժողովրդավարությունից զատ, նաև ճիշտ ընկալել «թվային ժողովրդավարություն» հասկացությունն ու հաշվենկատ կերպով կիրառել դրան առնչվող թվային գործիքարանը: Թվային ժողովրդավարությունը նորամուծական տեխնոլոգիաների կիրառմամբ պետություն–քաղաքացի հարաբերությունների ամրապնդմանը, կառավարման գործընթացին քաղաքացիների մասնակցության աստիճանի մեծացմանը, պետության գործունեության նկատմամբ քաղաքացիների վերահսկողության լրացուցիչ հնարավորությունների ապահովմանը միտված՝ քաղաքացիների հասարակական-քաղաքական ակտիվության ձև է:

ՀՀ-ում «ժողովրդական բանակ» համակարգի ներդրումը ենթադրում է հասարակության և Զինված ուժերի միջև հանրային կյանքի բոլոր, այդ թվում՝ տնտեսության և հետազոտությունների ոլորտներում, որակապես նոր մակարդակի փոխգործության ձևավորում: Ըստ այդմ պաշտպանական-անվտանգային բնագավառի խնդիրները լուծելու համար ՏՀՏ ոլորտին համապատասխան պետական պատվերների ձևավորումը կարող է դառնալ բարձր տեխնոլոգիաների զարգացման կարևոր խթաններից մեկը՝ ամրապնդելով պետության և այդ ոլորտի մասնավոր հատվածի կազմակերպությունների միջև ռազմավարական համագործակցությունը: Ընդսմին հույժ կարևոր են համապատասխան ռազմավարական նախագծերի ու ծրագրերի մշակման ու իրականացման միասնականությունը և փոխհամաձայնեցվածությունը: Պետական և մասնավոր հատվածների համակողմանի համագործակցությունը կնպաստի նաև ազգային կիբեռկարողությունների զարգացման ռազմավարական խնդրի արդյունավետ լուծմանը:

Պետական և մասնավոր հատվածների արդյունավետ համագործակցությամբ ազգային կիբեռկարողությունների զարգացումը «ազգ–բանակ» համակարգի ներդրման ու ՀՀ-ում թվային ժողովրդավարության արմատավորման կարևոր գործոններից է: Այս հարցում վճռորոշ նշանակություն ունեն բարձր տեխնոլոգիաների և դրանց կիրառման համար անհրաժեշտ մասնագիտական ներուժի ստեղծումն ու ռազմավարական կառավարման արդիական մեխանիզմների ձևավորումը:

ՀՀ-ՈՒՄ ԿԻԲԵՌԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

Ներկայիս տեղեկութային դարաշրջանում ինտենսիվորեն զարգացող թվային տեխնոլոգիաները համատարած կերպով ներթափանցում են պետության, հասարակության և անհատի կենսագործունեության բոլոր ոլորտներ: Դա մի շարք առավելությունների հետ մեկտեղ (ժամանակի և ծախսերի նվազում, արտադրողականության մեծացում և այլն) առաջ է բերում նաև ազգային

անվտանգության համար նոր սպառնալիքներ: Համընդհանրացումը, որի պայմաններում տեղի է ունենում թվային տեխնոլոգիաներից հասարակական կյանքի բոլոր ոլորտների կախվածության աստիճանական աճում, հանգեցնում է այն բանին, որ պետությունների աշխարհագրական սահմանները հետզհետե կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը, իսկ դրան զուգահեռաբար՝ միջազգային հակամարտություններն ու պատերազմները, որոնք նախկինում գերազանցապես ռազմական բնույթի էին, ձեռք են բերում նոր՝ բարձր տեխնոլոգիաներով հագեցած, ձև ու բովանդակություն[1]:

Այդ իրողությունների բերումով ՀՀ-ում վերջին տարիներին աճում է պետության և հասարակության ուշադրությունը կիբեռանվտանգության ոլորտում եղած պրոբլեմների վերհանման ու լուծման մեխանիզմների մշակման նկատմամբ, ընդսմին կարևորվում են նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը և ՀՀ ազգային անվտանգության ապահովման համակարգ ներբերումը[2]: Դա ավելի արդիական է դառնում ՀՀ-ում խորհրդարանական կառավարման համակարգին անցման, «ազգ–բանակ» համակարգի ներդրման պայմաններում[3]:

Պետության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում կիբեռանվտանգության ապահովման համար առանցքային նշանակություն ունի ազգային կիբեռկարողությունների զարգացման միասնական պետական քաղաքականության և դրա իրականացման համակարգված ծրագրի մշակումը[4]: ՀՀ անվտանգային շահերի ապահովման տեսանկյունից առանձ-

[1] Տես «Cyberpower and National Security». Ed. by Franklin D. Kramer, Stuart H. Starr, Larry K. Wentz. Center for Technology and National Security Policy. National Defense University, 2009; «National Security Strategy». The White House. Washington, February 2015 (https://www.whitehouse.gov/sites/default/files/docs/2015_national_security_strategy.pdf):

[2] Տես «Կիբեռանվտանգությունը Երևանում ԵԱՀԿ աջակցությամբ կազմակերպված սեմինարի քննարկման թեմա», 24 մայիսի 2012 (http://www.osce.org/hy/yerevan/90787), «Խորհրդարանական լսումներ ՀՀ Ազգային ժողովում», 14.11.2014 (http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=7027&year=2014&month=11&day=14):

[3] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստի ընթացքում», 29 հոկտեմբերի 2016 (http://www.mil.am/hy/news/4466): Տես նաև՝ Հայկ Քոթանջյանի «Խորհրդարանական հանրապետության անվտանգությունը. Իսրայելի մոդելը» վերնագրով 2015 թ. սեպտեմբերի 7-ի հարցազրույցը «Europe Orient» պարբերականին («The Security of the Parliamentary Republic: the Model of Israel». «Europe Orient», 7 septembre 2015 (http://europeetorient.blogspot.am/2015/09/the-security-of-parliamentary-republic.html)):

[4] Տես «ITU National Cybersecurity Strategy Guide». International Telecommunication Union, September 2011 (http://www.itu.int/ITU-D/cyb/cybersecurity/docs/ITUNational CybersecurityStrategy Guide.pdf); «National Cyber Security Strategies». «European Network and Information Security Agency», May 2012 (http://www.enisa.europa.eu/activities/Resilience-and-CIIP/national-cyber-security-strategies-ncsss/ cyber-security-strategies-paper); «The Department of Defense Cyber Strategy», April 2015 (http://www.defense.gov/Portals/1/features/2015/0415_cyber-strategy/Final_2015_DoD_CYBER_STRATEGY_for_web.pdf):

նակի ուշադրության են արժանի կիբեռկարողությունների զարգացման ժամանակ պետության, հասարակության ու անհատի պաշտպանվածության ապահովման և նրանց կենսագործունեության բոլոր ոլորտներում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների, համակարգչային տեխնիկայի ու տեղեկատվական-էլեկտրոնային միջոցների կիրառմամբ նրանց կայուն զարգացման համար երաշխավորված նախադրյալների ստեղծման հարցերը:

ՀՀ-ում կիբեռանվտանգության ապահովման համակարգը ռազմավարական մակարդակում ներառում է կենսական կարևորություն ունեցող (կրիտիկական) հետևյալ ենթակառուցվածքները՝ պետական կառավարման, պաշտպանության (այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության), առևտրի, սննդի ապահովման ու ֆինանսաբանկային համակարգերը, ավիացիայի, արտակարգ իրավիճակների (ներառյալ՝ ոստիկանության, առողջապահության, հրշեջ ու փրկարար) ծառայությունները, արդյունաբերության (հատկապես՝ քիմիական), գյուղատնտեսության, տրանսպորտի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էներգետիկայի (նաև՝ միջուկային էներգետիկայի) ենթակառուցվածքները, գիտության և մշակույթի ոլորտները, որոնց բնականոն կենսագործունեության համար կարևոր է բարձր մակարդակի կիբեռանվտանգության արդյունավետ ապահովումը: Քանի որ նշված ենթակառուցվածքների գործառումն ու սպասարկումն ապահովում են հիմնականում մասնավոր կազմակերպությունները (ընկերությունները), ապա դրանց և պետական հատվածի կազմակերպությունների միջև անհրաժեշտ տեղեկույթի, գիտելիքի ու փորձի փոխանակումը կիբեռռիսկերի ճշգրիտ գնահատման ու ճգնաժամային կառավարման արդյունավետության ապահովման գրավականն է:

Կիբեռանվտանգության ապահովման և կիբեռհանցագործությունների կանխարգելման ու հայտնաբերման գործում կարևոր դեր ունի ոլորտը կարգավորող համապարփակ իրավական դաշտի առկայությունը: ՏՀՏ ոլորտում աշխարհում առաջատար դիրքեր զբաղեցնող մի շարք պետությունների իրավակարգավորումների համընդգրկուն և ճկուն բազան հնարավորություն է տալիս կենտրոնացված և համալիր կերպով արձագանքելու պետության, հասարակության և անձի դեմ ուղղված կիբեռհանցագործություններին, ինչպես նաև հետ մղելու կիբեռսպառնալիքները: Իրավակարգավորման նման մեխանիզմների շնորհիվ կիբեռանվտանգության ապահովման գործում պետական և մասնավոր հատվածների գործադրած ջանքերը համախմբվում են:

Այսպես. ԱՄՆ-ում գործող՝ կիբեռանվտանգության ոլորտի օրենսդրական փաթեթը («Կիբեռօրենսգիրքը») կարգավորում է տվյալների գաղտնիության, ամբողջականության և հասանելիության ապահովումը, սահմանում մարդու իրավունքների և անձնական տվյալների պաշտպանության իրավական շրջանակները, կարգավորում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների անվտանգ կիրառումը, համակարգչային ցանցերի պաշտպանությունը, կիբեռհանցագործությունների համար պատասխանատվություն նա-

խատեսող օրենսդրությունը և, ըստ այդմ, նշված ոլորտներում պետական գերատեսչությունների և մասնավոր ընկերությունների գործառույթները:

Միջազգային լավագույն փորձի վերլուծությունը վկայում է, որ կիբեռանվտանգության ապահովման համար, բացի իրավական կարգավորման մեխանիզմներից, անհրաժեշտ է նաև կիբեռհանցագործությունների հետաքննության կարողությունների զարգացում, ներառյալ՝ էլեկտրոնային ապացույցների ձեռքբերման, վերլուծությունների կատարման ու գնահատման մեխանիզմների, համապատասխան ընթացակարգերի և գործիքակազմի մշակում ու արդյունավետ կիրառում, ինչպես նաև տվյալ գործում առկա թերությունների հայտնաբերման, վերացման ու վնասի կանխման համար անհրաժեշտ ունակությունների զարգացում:

Այս տեսանկյունից ՀՀ-ում գործում են ոլորտը կարգավորող մի շարք ներպետական ու միջազգային իրավական ակտեր[5]: Առանձնակի կարևորվում է

[5] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն»: Ընդունված 2015 թ. դեկտեմբերի 6-ին (http://www.parliament.am/law_docs5/Sahmanadrutyun_06.12.2015.pdf), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք», 18.04.2003 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2003, հմ. 25 (260)), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք», 06.12.1985 (http://www.arlis.am/documentview.aspx?docid=73129), «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-94 օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docID=26193), «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ 2003 թ. սեպտեմբերի 23-ի հմ. ՀՕ-11-Ն օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?DocID=1372), «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ 2015 թ. մայիսի 18-ի հմ. ՀՕ-49-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2015, հմ. 35 (1124)), «Արխիվային գործի մասին» ՀՀ 2004 թ. հունիսի 8-ի հմ. ՀՕ-88-Ն օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docID=1644), «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ 2005 թ. հուլիսի 8-ի հմ. ՀՕ-176-Ն օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docid=1869), «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ 2004 թ. դեկտեմբերի 14-ի հմ. ՀՕ-40-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2005, հմ 7 (379)), «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ 2014 թ. դեկտեմբերի 17-ի հմ. ՀՕ-245-Ն օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95017), «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ 2006 թ. հունիսի 15-ի հմ. ՀՕ-142-Ն օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docid=25161), «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ 1996 թ. հոկտեմբերի 7-ի հմ. ՀՕ-80 օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=334), «Պաշտպանության մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, հմ. 73(663)), «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ 2005 թ. մարտի 22-ի հմ. ՀՕ-79-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2005, հմ. 24 (396)), «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ 2003 թ. դեկտեմբերի 13-ի հմ. ՀՕ-14 օրենքը (http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1890), «Ստանդարտացման մասին» ՀՀ 2012 թ. փետրվարի 8-ի հմ. ՀՕ-21-Ն օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docid=74337), ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» հմ. ՆԿ-97-Ն կարգադրությունը (http://www.arlis.am/documentview.aspx?docID=52559), «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման (2010–2012 թթ.) հայեցակարգ», ՀՀ Կառավարության 2010 թ. փետրվարի 25-ի նիստի հմ. 7 արձանագրային որոշման հավելված (www.mineconomy.am/up/files/el_hasarakutyun_hayecakarg-80.doc):

Բուդապեշտի «Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիան»[6], որը միջպետական առաջին պայմանագիրն է՝ նպատակաուղղված կիբեռհանցագործությունների դեմ պայքարի միասնականացման համընդհանուր քաղաքականության և օրենսդրական կարգավորումների ստեղծմանը: ՀՀ-ում գործող ներպետական իրավական ակտերից հատկապես կարևոր է «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը», որը «տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակների, խնդիրների, սկզբունքների և հիմնական ուղղությունների նկատմամբ պաշտոնական մոտեցումների համակարգ է և ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակման և իրագործման հիմք»[7]:

2010 թ. ՀՀ Կառավարությունը հաստատեց «ՀՀ էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը»[8], որի նպատակն է աշխարհի զարգացած և զարգացող երկրների լավագույն փորձի վերլուծության հիման վրա 21-րդ դարում տեղի ունեցող առավել կարևոր զարգացումների հաշվառմամբ ՀՀ-ում ձևավորել էլեկտրոնային կառավարման տեղեկատվական ենթակառուցվածք:

ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության ստեղծումը հանգեցնում է գրեթե բոլոր պետական և հասարակական ոլորտներում որակական փոփոխությունների, ինչի հետևանքով կիբեռանվտանգության ապահովմանը ներկայացվում են նոր պահանջներ: Այս համատեքստում հրատապ են դառնում ՏՀՏ և կիբեռանվտանգության ոլորտների կարգավորմանն ուղղված միասնական իրավական դաշտի ստեղծումը և համընդգրկուն քաղաքականության մշակումը:

Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ապահովման ոլորտում առկա միջազգային լավագույն փորձը վկայում է, որ վերը նշված խնդիրների համապարփակ և արդյունավետ լուծման համար կարևոր է միջգերատեսչական համագործակցությամբ մշակված կիբեռանվտանգության համապետական ռազմավարության և համապատասխան քաղաքականության, ինչպես նաև միջգերատեսչական ներուժի համախմբմամբ կիբեռանվտանգության ոլորտը կառավարող մարմնի ստեղծումը[9]:

---

[6] Տես «Convention on Cybercrime». Budapest, 23.11.2001 (http://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/185):

[7] Տես ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» հմ. ՆԿ-97-Ն կարգադրությունը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2009, հմ. 35 (701)):

[8] Տես «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման (2010–2012 թթ.) հայեցակարգ» (www.mineconomy.am/up/files/el_hasarakutyun_hayecakarg-80.doc):

[9] Տես «ITU National Cybersecurity Strategy Guide». International Telecommunication Union, September 2011 (http://www.itu.int/ITU-D/cyb/cybersecurity/docs/ITUNational

Կիբեռանվտանգության ոլորտը կարգավորող համապետական օրենսդրական և քաղաքական-ռազմավարական փաստաթղթերի մշակման և ոլորտը կառավարող կենտրոնական մարմնի ստեղծման անհրաժեշտության վկայությունն են նաև 2014 թ. նոյեմբերին ՀՀ Ազգային ժողովում կայացած «Կիբեռանվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում. սպառնալիքներ և մարտահրավերներ, արձագանքման և հակազդման մեխանիզմներ» թեմայով խորհրդարանական լսումների[10], Օքսֆորդի համալսարանի «Համաշխարհային կիբեռանվտանգության կարողությունների կենտրոնի» նախաձեռնությամբ 2015 թ. փետրվարին Երևանում կայացած՝ Հայաստանում կիբեռանվտանգության ապահովման մակարդակի գնահատմանը նվիրված հանդիպում-քննարկման[*], ինչպես նաև «Միջազգային հեռահաղորդակցության միության» և «էյԲիԱյ» հետազոտական ընկերության «Համաշխարհային կիբեռանվտանգության ինդեքս» հետազոտության[11] արդյունքները: Նշված ինդեքսի համաձայն՝ կիբեռանվտանգության ապահովման գործում և կիբեռանվտանգության կայացածության մակարդակով տարածաշրջանի երկրների ցանկում Հայաստանն զբաղեցնում է վերջին տեղը՝ զգալիորեն զիջելով հարևան Ադրբեջանին և Վրաստանին[12]:

Կիբեռանվտանգության ապահովման ուղղությամբ պետության կարողությունների զարգացման համար էական նշանակություն ունեն կիբեռանվտանգային կրթության զարգացման հեռանկարային ծրագրերի մշակումը և կիբեռանվտանգային կրթության և ուսուցման հասանելիության մեծացման նպատակով միջոցների (պետական և ոչ պետական) տրամադրումը[13]: Ուստի ՀՀ-ում կիբեռանվտանգության մասնագետներ պատրաստող բարձրակարգ բուհերի, ներպետական և միջազգային գերազանցության ապահովման կենտրոնների հիմնումը, ինչպես նաև համապատասխան ուղղվածութ-

CybersecurityStrategy Guide.pdf); «National Cyber Security Strategies». «European Network and Information Security Agency», May 2012 (http://www.enisa.europa.eu/activities/Resilience-and-CIIP/national-cyber-security-strategies-ncsss/ cyber-security-strategies-paper):

[10] Տես ««Կիբեռանվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում. սպառնալիքներ և մարտահրավերներ, արձագանքման և հակազդման մեխանիզմներ» թեմայով խորհրդարանական լսումներ ՀՀ Ազգային ժողովում», 14.11.2014 (http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=7027&year=2014&month=11&day14):

[*] Հեղինակը անձամբ է մասնակցել քննարկմանը:

[11] Տես «Global Cybersecurity Index & Cyberwellness Profiles». International Telecommunication Union and ABI Research, April 2015 (http://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-SECU-2015-PDF-E.pdf):

[12] Տես նույն տեղում:

[13] Տես *Հ. Ս. Քոթանջյան*, Պաշտպանական կրթության բարեփոխմամբ՝ ռազմավարական փոփոխությունների կառավարումը Հայաստանում «խելացի ուժի» զարգացման տեսանկյունից: «Աշխատանքային տետրեր», 2012, հմ. 4, *А. С. Аджемов.* Подготовка кадров в области обеспечения информационной безопасности в России. «Информационная безопасность», 2014 (http://federalbook.ru/files/BEZOPASNOST/soderghanie/NB%20I/IX/Adgemov.pdf):

յամբ հիմնարար կրթական ծրագրերի իրագործումը, հետբուհական կրթության և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը և այդ հարցերում պետական ու մասնավոր կազմակերպությունների (ընկերությունների) արդյունավետ համագործակցությունը ՀՀ-ում կիբեռանվտանգության ապահովման և կիբեռոլորտի զարգացման կարևոր նախադրյալներն են:

Վերը նշվածի հաշվառմամբ ՀՀ-ում կիբեռանվտանգության ապահովման և ազգային կիբեռկարողությունների զարգացման համար առանցքային նշանակություն ունեն ՀՀ կիբեռանվտանգության ազգային ռազմավարության մշակումն ու ընդունումը: Այս համատեքստում հատկապես կարևորվում է կիբեռոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի համապարփակ համակարգի ստեղծումը, ինչը ենթադրում է կիբեռանվտանգության ապահովման և կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ոլորտները կարգավորող իրավական դաշտի լրացում անհրաժեշտ ակտերով և կատարելագործում՝ միջազգային իրավական նորմերին ու կոնվենցիաների պահանջներին համապատասխանեցմամբ, ինչպես նաև բազմակողմ և երկկողմ միջազգային համագործակցությամբ կիբեռհանցագործությունների դեմ պայքարին մասնակցության արդյունավետության մեծացման նպատակով նորմատիվ իրավական բազայի կատարելագործում:

ՀՀ-ում կիբեռանվտանգության ապահովման և ազգային կիբեռկարողությունների զարգացման համար ռազմավարական նշանակություն ունի նաև ՀՀ կիբեռոլորտի հաստատութենական ապահովումը՝ արդյունավետ համակարգված կառավարումն ապահովող ռազմավարական քաղաքական փաստաթղթերի և մարմինների համալիրի ստեղծումը: Նշված խնդիրների լուծման համար նպատակահարմար է մշակել ՀՀ կիբեռանվտանգության ապահովմանն ուղղված համապետական ձեռնարկումների համակարգված ծրագիր, ստեղծել և հավաստագրել ՀՀ կիբեռոլորտում գործունեությունը համադասող մարմիններ, այդ թվում՝ համակարգչային պատահարներին արձագանքման խմբեր, ինչպես նաև կատարել կիբեռանվտանգության ենթակառուցվածքների ձևավորման ու զարգացման գործում պետական և մասնավոր հատվածների սուբյեկտների միջև կառավարչական դերերի և գործառույթների բաշխում:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կիբեռոլորտի հաստատութենական ապահովման գործում առանցքային նշանակություն ունի անհատի սոցիալականացման բոլոր փուլերում կիբեռանվտանգության ռիսկերի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը՝ ըստ մշակված հատուկ ծրագրերի, ինչպես նաև կիբեռանվտանգության ոլորտում գիտակիրառական հետազոտություններ կատարող և կրթական ծրագրեր իրականացնող հայրենական հաստատությունների ցանցի զարգացումը՝ առաջատար միջազգային կազմակերպությունների ու գերազանցության ապահովման կենտրոնների* հետ ակտիվ համագործակցությամբ:

* Ըստ Քեմբրիջի առցանց բառարանի սահմանման՝ գերազանցության ապահովման

Այս համատեքստում, հիմնվելով առաջավոր միջազգային փորձի վերլուծության և համապատասխան հայրենական գիտահետազոտական աշխատանքների արգասիքների վրա, հարկ ենք համարում նշել, որ վերը թվարկված խնդիրները ՀՀ ազգային կիբեռկարողությունների զարգացման վրա խարսխմամբ լուծելու համար հիմնական միջոցներ կարող են լինել իրավական ապահովումը, հաստատութենական ապահովումը, տեխնիկա-տեխնոլոգիական ապահովումը և համակողմանի համագործակցությունը: Նշենք նաև, որ կիբեռանվտանգության ու կիբեռոլորտի կայուն զարգացման ապահովման համար ներկայացված հիմնական միջոցների արդյունավետությունը գերազանցապես պայմանավորված է համապատասխան կիբեռկարողությունների զարգացածության մակարդակով:

ՀՀ-ՈՒՄ ՄՏԱՎՈՐ ՆԵՐՈՒԺԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԲԵՌԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կտրուկ զարգացածության արդի միջավայրում պետության և հասարակության առաջընթացի մրցակցային առավելությունը ոչ միայն ֆիզիկական ռեսուրսներն են, այլև՝ գիտահենք ակտիվները, որոնք գեներացվում, հարստացվում ու սնուցվում են սոցիալական փոխազդեցությունների միջոցով՝ հիմնարար դարձնելով և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում մարդկային ռեսուրսների կառավարման գործառույթը: Ցանկացած պետության համար երկարաժամկետ կտրվածքով ռազմավարական նշանակություն ունեն մտավոր աշխատանքի արգասիքները՝ գիտական ու տեխնոլոգիական հետազոտությունները, աշխատուժի ուսուցանումը, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և կիբեռանվտանգության ոլորտներում եղած զարգացումները, բարդ ծրագրային ապահովումը, արդյունավետ կառավարումը և այլն:

Արդյունաբերական չորրորդ հեղափոխության[14] դարաշրջանում, երբ թվայնացվում են հանրային քաղաքականության վարման գործիքները, բոլոր պետական և մասնավոր ոլորտներն ստիպված են վերանայել իրենց ռազմավարությունները՝ մրցունակությունն ապահովելու նկատառումներով նորարամուծական վերափոխումների ենթարկելով իրենց ծառայությունների ապահովման մեխանիզմները: Այս համատեքստում մարտահրավերներին մրցունակ կերպով դիմակայելու և դրանք հնարավորությունների վերածելու համար պետք է մարդկային ռեսուրսների կառավարման գործում կատարվի գիտելիքի գեներացում, նորամուծացում և կիրառություն *(knowledge*

կենտրոնը *(center of excellence)* կազմակերպություն է, որը հայտնի է որևէ տեսակի գործունեության իր մեծ հմտությամբ, այդ ոլորտում ձեռք բերած գերազանցությամբ և որոնում է այն ամրապնդելու և կատարելագործելու նոր ուղիներ (տես «Centre of excellence» (http://dictionary.cambridge.org/ru/%D1%81%D0%BB%D0%BE%D0%B2%D0%B0%D1%80%D1%8C/%D0%B0%D0%BD%D0%B3%D0%BB%D0B8%D0%B9%D1%81%D0%BA%D0%B8%D0%B/centre-of-excellence)):

[14] Տես *Klaus Schwab.* The Fourth Industrial Revolution, 12 December 2015 (https://www.foreignaffairs. com/articles/2015-12-12/fourth-industrial-revolution):

generation, innovation, and application)[15]: Ասվածի կիրառական արտացոլումն է ԱՄՆ-ի 45-րդ փոխնախագահ, Նոբելյան մրցանակակիր Ալբերտ Գորի ղեկավարությամբ իրագործված Ազգային կատարողական վերլուծությունը (*National Performance Review, NPR*), որը 1998 թ. վերանվանվեց «Կառավարության վերահայտնագործման ազգային գործընկերություն» (*National Partnership for Reinventing Government*): Փոխնախագահի հանձնաժողովը այն կարծիքին էր, որ «Դաշնային քաղաքացիական ծառայության համակարգն իր «ներքին հավասարության» քաղաքականությամբ երկար ժամանակ սահմանափակել է աշխատուժի շրջանակներում արժանավոր անձանց աշխատանքային առաջխաղացման և կառավարության կողմից աշխատողների խրախուսման հնարավորությունը»[16]: Այդ փաստաթղթում առաջարկվում էր ստեղծել մի այնպիսի պետական համակարգ, որն ավելի փոքր ծախսերով գործեր շատ ավելի արդյունավետորեն, հիմնվեր արդարության, հավասարության և մերիտոկրատիայի* սկզբունքների վրա: Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը տվյալ սկզբունքների հիմքի վրա ձևավորելու դեպքում անհրաժեշտ կլինի կատարել հետևյալ չորս ընդհանուր քայլերը.

1. ընտրություն (*selection*), այն է՝ առկա մարդկային ռեսուրսի համապատասխանեցում տվյալ աշխատանքին,
2. գնահատում (*appraisal*), այն է՝ կատարողականի գնահատում,
3. պարգևատրում (*rewards*), այն է՝ երկարաժամկետ և կարճաժամկետ ձեռքբերումների խրախուսում այն բանի հաշվառմամբ, որ ապագայում հաջողության հասնելու համար պետք է արդյունավետ կերպով գործել ներկայումս,
4. զարգացում (*development*), այն է՝ բարձրորակ աշխատողների պատրաստում[17]:

Մարդկային կապիտալի ռազմավարական կառավարման միջոցով ազգային շահերի ապահովման, կիբեռկարողությունների զարգացման և ժողովուրդ–բանակ համագործակցության սերտացման առումով առանձնապես ուշա-

[15] Տես «Strategic Approaches to Human Resources Management Practice». Ed. by V. Dermol, A. Rakowska. Bangkok, 2014, PP. 27–28:

[16] Տես *Al Gore.* From Red Tape to Results. Creating a Government that Works Better & Costs Less. Reinventing Environmental Management. Accompanying Report of the National Performance Review. Washington, September 1993, P. 12:

* Մերիտոկրատիա (*meritocracy*) - սոցիալական համակարգ, հասարակություն կամ կազմակերպություն, որտեղ մարդիկ իշխանություն ունեն ոչ թե հարստության կամ սոցիալական պատկանելության, այլ իրենց կարողությունների և հմտությունների շնորհիվ (տես «meritocracy» (http://dictionary.cambridge.org/dictionary/english/meritocracy)):

[17] Տես *M. Armstrong.* Strategic human resources management: a guide to action. Ed 3. London and Philadelphia, 2006, P. 4:

գրավ է Իսրայելի Պաշտպանության բանակի ընտրյալ Թալպիոտ (թարգմանաբար՝ ամրոց, ամրակազմ կառույց) ծրագիրը, որի գաղափարը ծագել է դեռ 1973 թ. Յոմ Կիպուրի պատերազմից քաղված դասերից: Իսրայելի բնական և մարդկային ռեսուրսների սղության պայմաններում երկրի Զինված ուժերը իրենց առավելությունը պետք է ապահովեին մտավոր և տեխնոլոգիական ոլորտներում:

Ծրագիրը մեկնարկել է 1979 թ.՝ 25 կուրսանտների մասնակցությամբ: Այն ապահովում է ազգ–բանակ–մտավորականություն գործակցային առնչությունները, քանի որ սերտ կապ ունի Երուսաղեմի համալսարանի հետ, որտեղ երիտասարդ կուրսանտները երեք տարի մասնագիտանում են ֆիզիկայի, մաթեմատիկայի և համակարգիչների տեսության բնագավառներում՝ այնուհետև անցնելով Իսրայելի Պաշտպանության բանակում վեցամյա մասնագիտացված (բարձր վարձատրվող) ծառայության[18]:

Ծրագրի բուն էությունը Զինված ուժերի և պետության առանձնահատկությունների հաշվառմամբ մարդկային կապիտալի ռազմավարական կառավարումն է՝ միտված տեխնոլոգիական նորամուծությունների և նոր գաղափարների միջոցով ուժերի կատարելագործմանը և ազգ–բանակ փոխադարձ կապի ամրապնդմանը: Հատկանշական է, որ Թալպիոտը, սերտորեն համագործակցելով Հրեական գործակալության և Արտաքին գործերի նախարարության հետ, նախատեսում է պաշտպանական-անվտանգային բնագավառում ներգրավել արտերկրում բնակվող հրեաներին՝ նպաստելով ժողովրդական բանակ–Սփյուռք յուրօրինակ համագործակցության ձևավորմանը: Ծրագրի շրջանավարտներն իրենց նորամուծական հմտությունները կիրառում են ինչպես պաշտպանական ուժերում, այնպես էլ ներպետական և համընդհանուր նախաձեռնություններում:

Մարդկային ռեսուրսների ռազմավարական կառավարման նշված մոդելները և ծրագիրը ՀՀ-ում ներդրելն ու տեղայնացնելը կարող են նպաստել մտավոր կապիտալի արդյունավետ նպատակային կիրառմանը ինչպես տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման, այնպես էլ պետության ու հասարակության կենսագործունեության համար էական նշանակություն ունեցող բոլոր ոլորտներում: Ինչպես վկայում է իսրայելական փորձը, պետություն–ազգ–բանակ եռակողմ հարաբերությունների զարգացումը միտված է ազգային շահերի ապահովման գործում մարդկային կապիտալի նպատակային օգտագործմանը, ինչը կարող է նպաստել ՀՀ Զինված ուժերի արդիականացման նկատմամբ նորամուծական մոտեցումների մշակմանը:

[18] Տես *J. L. Mizrahi.* Israel's Edge: The Story of the IDF's Most Elite Unit – Talpiot. «THE TIMES OF ISRAEL», 5 March 2016 (http://blogs.timesofisrael.com/israels-edge-the-story-of-the-idfs-most-elite-unit-talpiot-2/):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ-ում «ազգ–բանակ» համակարգի ձևավորման համատեքստում կիբեռանվտանգության ապահովման, ազգային կիբեռկարողությունների և մտավոր ներուժի զարգացման գործում էական նշանակություն ունի իրավական, հաստատութենական և տեխնիկատեխնոլոգիական ապահովմամբ ու համակողմանի համագործակցությամբ հետևյալ ռազմավարական նպատակների իրականացումը.

- ՀՀ-ում կիբեռոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի համապարփակ համակարգի ստեղծում,
- ՀՀ-ում արդյունավետ համակարգված կառավարումն ապահովող ռազմավարական քաղաքական փաստաթղթերի և մարմինների համալիրի ստեղծում, ընդսմին գործընթացի առաջին քայլը պետք է լինի կիբեռանվտանգության ազգային ռազմավարության մշակումն ու ընդունումը,
- ՀՀ-ում կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների, տեղեկատվական-էլեկտրոնային ծառայությունների մատուցման համակարգերի պաշտպանության և անխափան աշխատանքի ապահովում,
- միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ, մասնավորապես՝ իսրայելական Թալպիոտ ծրագրի օրինակով, ՀՀ-ում գիտահենք տնտեսության զարգացման, մարդկային կապիտալի ռազմավարական կառավարման մեխանիզմների մշակում՝ գերազանցապես միտված կիբեռկարողությունների զարգացման գործում ներգրավված ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆԻՉ ԳՈՐԾՈՆ

ՀՀ-ՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսական գիտությունների թեկնածու (մակրոէկոնոմիկա), ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի գիտնական-վերլուծաբան,*
Ա. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական, ՌԱՊԿ-ի ռազմատեխնիկական բաժնի պետ, Մ. Ա. ՓԱՐՎԱՆՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ֆինանսական մասի պետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ազգ–բանակ», կամ «Ժողովրդական բանակ», համակարգի ձևավորումը սերտորեն կապված է ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման գործում պետական նպատակային ծրագրերի (ՊՆԾ) մշակման և իրագործման հետ: Ընդսմին ՀՀ ռազմաարդյունաբերության, ինչպես նաև տնտեսական և գիտատեխնիկական զարգացման վրա պետական նպատակային ծրագրերի ազդեցության վերլուծության արդյունքները հիմք են տալիս պնդելու, որ ՀՀ տնտեսական քաղաքականության և խնդիրների հաշվառմամբ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման վրա ՊՆԾ խթանիչ ազդեցությունը կապված է

---

* Գիտական ստաժավորում է անցել ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Ազգային անվտանգության և ռեսուրսների ռազմավարության Դ. էյզենհաուերի անվան դպրոցում:

Ազգային անվտանգության տեսանկյունից Դ. էյզենհաուերի անվան դպրոցը կատարում է արդյունաբերական, այդ թվում՝ ռազմաարդյունաբերական, կարողությունների զարգացման, ռազմաարդյունաբերության ոլորտում ներդրումային և գնումների քաղաքականության տարբեր հայեցակարգերի մրցակցային գնահատման, ինչպես նաև ազգային անվտանգային ու տնտեսական քաղաքականությունների և գործարար միջավայրի միջև փոխկապվածությունների վերաբերյալ հետազոտություններ՝ մշակելով և առաջարկելով պաշտպանական պատվերին աջակցող *(Defense Acquisition)* անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ:

փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ների) զարգացման, ընդհանուր տեխնոլոգիական բազայի և նորամուծությունների առևտրայնացման մեխանիզմների ներդրման հետ: Բացի այդ, ՊՆԾ խթանիչ ազդեցությունը պայմանավորված է նաև ռազմաարդյունաբերական արտադրանքի պահանջարկի խթանման համակարգված քաղաքականությամբ, ծրագրային բյուջեավորման և թղթապանակային (պորտֆելային) կառավարման* մեխանիզմների ամբողջական ներդրմամբ, ինչպես նաև գիտատեխնիկական ոլորտում կորպորատիվ պատասխանատվության օրենսդրական սահմանմամբ:

1. ՀՀ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՊՆԾ-Ն

1.1 ՀՀ ՌԱՀ-ի հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները

Ռազմաարդյունաբերությունը ոչ միայն ռազմական հակամարտության մեջ գտնվող պետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն բաղկացուցիչ մասն է, այլև այդ պետության տնտեսական զարգացման հիմնաքարերից մեկը: ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրում Խորհրդային Հայաստանը գտնվում էր առաջնային դիրքերում՝ ունենալով զարգացած գիտահետազոտական ինստիտուտների ու գիտաարտադրական միավորումների ցանց[1]: Միության փլուզումից հետո ռազմական և քաղաքացիական արդյունաբերության միջև առաջացած տեխնոլոգիական ճեղքվածքի և ռազմաարդյունաբերական արտադրանքի ավանդական շուկաների հետ հայրենական ձեռնարկությունների կապերի խզման հետևանքով աստիճանաբար ի չիք դարձավ Հայաստանի տնտեսական զարգացման գործում այդ ոլորտի դերը:

Ներկայումս ՀՀ-ում ՌԱՀ-ը գտնվում է կայացման փուլում: Այդ առումով, հույժ կարևոր է կապիտալի ներգրավման մեխանիզմների մշակումը և ռացիոնալ տեղաբաշխման ապահովումը, ինչպես նաև գիտաարտադրական նախակատարվածքով գիտատեխնիկական համալիրի ստեղծումը: Այդ գործողությունները պետք է ուղղվեն հանրապետության ՌԱՀ-ի կազմակերպությունների հզորացման, սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՍՈՏ) արդիականացման ու ռազմատեխնիկական ներուժի զարգացման ծրագրերի

---

* *Թղթապանակային կառավարում* (portfolio management), կամ *նախագծերի թղթապանակային կառավարում*, ներքին և արտաքին հանգամանքների համատեքստում ձեռնարկության համար առավել մեծ տացք ապահովող նախաձեռնությունների օպտիմալ ընտրության և իրագործման ինտեգրային գործընթաց: Թղթապանակ է կոչվում կազմակերպության որոշակի գործարարական նպատակներին (բիզնես-նպատակներ) հանելուն նպատակաուղղված և միմյանց հետ թույլ կապված նախագծերի համախումբը (տես *Կ. Կ. Тихонов.* Портфельное управление. Журнал АНХ при Правительстве РФ). «Системы управления бизнес-процессами». (journal.itmane.ru/node/421)–*Խմբ.:*

[1] Տես *Հ. Ս. Քոթանջյան, Դ. Ս. Չիլինգարյան, Բ. Պ. Պողոսյան, Կ. Կ. Բաղդասարյան, Մ. Ա. Փարվանյան,* Նորամուծական մոտեցումները որպես ՀՀ ռազմաարդյունաբերական համակարգի կայացման շարժիչ ուժ: «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», հ. 3: Ե., 2014, էջ 389–391:

իրագործմանը, համալիրի արտադրանքի արտահանման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, ինչպես նաև Զինված ուժերի և մյուս զորքերի զորահավաքային պահանջմունքների բավարարմանը[2]: Այդ առումով ՀՀ ՊՆ Ռազմաարդյունաբերության պետական կոմիտեի (ՌԱՊԿ) առջև դրված այդ նպատակներին հասնելու անհրաժեշտ պայման է Հայաստանում մրցունակ գիտատեխնիկական բազայի ստեղծումը և ծրագրերում ներգրավված աշխատողների մասնագիտացման մակարդակի շարունակական բարձրացման ապահովումը: Դրանք, ինչպես նաև ՌԱՀ-ի նպատակներն ու խնդիրները ընդգրկված են ՀՀ Ռազմաարդյունաբերության համալիրի մասին օրենքի 1-ին, 3-րդ և 4-րդ հոդվածներում, ինչպես նաև ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին ցույց տրվող պետական աջակցության ձևերին ու պայմաններին վերաբերող 11-րդ հոդվածում[3]: Մյուս կողմից՝ «ՀՀ ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարության» նպատակներից է պետության աջակցությամբ գիտատեխնիկական և արտադրական տեխնոլոգիական ներուժի վերածումը գործուն համակարգաստեղծ տեխնոլոգիական նորամուծական միջոցի: Մյուս նպատակը ՀՀ տնտեսության նորամուծական զարգացման գործում ՌԱՀ-ի՝ որպես բարձր տեխնոլոգիական բազմապրոֆիլային համակարգի դերի ամրապնդումն է: Դրանով, փաստորեն, շեշտվում է տնտեսության այլ ճյուղերի զարգացման գործում ՌԱՀ-ի ունեցած կարևոր դերը:

ՌԱՀ-ի զարգացման ուղղությունները որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոլորտի առանձնահատկությունները[4], որոնցից առավել ուշագրավ են.

- ՌԱՀ-ը տնտեսական համակարգի առանձին կարևոր ենթահամակարգ է, որը, միևնույն ժամանակ, տնտեսության առանձին ճյուղերի և արտադրությունների մի ամբողջություն է: Ռուսի ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացումն անհնար է դիտարկել ընդհանուր տնտեսության համակարգից դուրս: Ներկայումս ՀՀ ՌԱՀ-ի ձևավորումն ու զարգացումը պայմանավորող այնպիսի արտադրություններ, ինչպիսին են մեքենաշինությունը, քիմիական արտադրությունը, նանոտեխնոլոգիաները, տեղեկատվական տեխնոլոգիաների ճյուղերը, 2015 թ. տվյալներով միասին ապահովել են ամբողջ արդյունաբերության մոտ 3 %-ը, ընդ որում, 2014 թ.

[2] Տես «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմաարդյունաբերության պետական կոմիտեի կանոնադրություն»: ՀՀ Կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի հմ. 1554-Ն որոշման հավելված հմ. 6.1 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101948):

[3] Ավելի հանգամանորեն տես «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ 2015 թ. մարտի 25-ի հմ. ՀՕ-16-Ն օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97154):

[4] Ավելի հանգամանորեն տես *Մ. Ա. Փարվանյան,* Ներդրումները՝ որպես ռազմաարդյունաբերության ոլորտում նորամուծությունների խթանման գործոն: «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», հ. 3, էջ 411–422:

համեմատությամբ դրանք հիմնականում ապրել են անկում[5]: Հանրապետությունում ՌԱՀ-ի զարգացումը խթանելու համար այդ ցուցանիշը պետք է կտրուկ կերպով մեծացվի, քանի որ զարգացած երկրներում այն հասնում է 50-60 %-ի[6],

- համալիրը տնտեսության առավել գիտատար ճյուղն է: Սպառազինության համաշխարհային մրցավազքում մշտապես խթանվում է տեխնոլոգիապես առավել առաջադիմական ռազմական տեխնիկայի ստեղծումը,
- ՌԱՀ-ը ծախսատար ճյուղ է, ուստի դրա զարգացումը պահանջում է թանկ ռեսուրսների և ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործում:

Հանրապետության տնտեսությունում ձևավորված հարաբերությունների, ինչպես նաև համալիրին բնորոշ նշված առանձնահատկությունների բերումով Հայաստանում ՌԱՀ-ի ստեղծումը և հետագա զարգացումը, մեր կարծիքով, սերտորեն կապված են նորամուծական պաշտպանական պատվերների գործարկման և իրագործման հետ:

1.2 ՊՆԾ ազդեցությունը ՀՀ ՌԱՀ-ի զարգացման վրա

ՀՀ ՌԱՊԿ-ի նպատակների հաշվառմամբ պետք է կարևորել ՌԱՀ-ի զարգացման վրա ՊՆԾ ազդեցությունը հետևյալ ասպարեզներում

- ***Ռազմաարդյունաբերական արտադրանքի պահանջարկի խթանման համակարգված քաղաքականություն***

ՌԱՀ-ի զարգացման վրա ՊՆԾ դրական ազդեցությունը սերտորեն առնչվում է ռազմաարդյունաբերական արտադրանքի պահանջարկի խթանման համակարգված քաղաքականության հետ: Այդ առումով պետք է կարևորել ռազմաարդյունաբերական արտադրանքի նկատմամբ ներպետական պահանջարկի ձևավորումը, որը պետք է բխի պետության զարգացման տնտեսական ծրագրերից և արտացոլվի պետական բյուջեի համապատասխան բաժնում: ՌԱՀ-ի զարգացման համար էական է ՊՆԾ առկայությունը, ինչը համալիրի գործունեության արդյունավետության անհրաժեշտ պայման է: Այս համատեքստում, անշուշտ, անհրաժեշտ է իրականացնել արտադրական կարողությունների ճիշտ գնահատում, ռազմաարդյունաբերության ոլորտում գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, արտադրական և կազմակերպական աշխատանքների գծով պետպատվերի ձևավորում և, բնականաբար, համապատասխան ֆինանսավորում[7]: Հատկանշական է, որ այդ

[5] Տես «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման. 2015 թվականի հունվար–դեկտեմբերին»: Ե., 2016 (http://www.armstat.am/file/article/5nish-12-2015.pdf):

[6] Տես «Мировая экономика: прогноз до 2020 г.». Под ред. А. А. Дынкина. М., 2008, с. 135:

[7] Առավել հանգամանորեն տես «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», հ. 3: Ե., 2014:

պահանջները արդեն իսկ ամրագրված են «Ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարության» փաստաթղթում[8]:

Դրա նպատակն է ՌԱՀ-ի զարգացման խթանումը, նորագույն տեխնոլոգիաների մշակման և ներդրման աջակցությունը, դրանց հիման վրա փոխկապված տեխնոլոգիաների զարգացումը, ինչպես նաև տեղական արտադրության կազմակերպումը: Ռազմատեխնիկական քաղաքականության մշակման և իրագործման ռազմավարության նպատակներից է նաև ռազմաարդյունաբերական արտադրանքի պահանջարկի բավարարման համար հոլդինգների և կոնցեռնների ստեղծումը՝ դրանց կազմի մեջ համապատասխան գիտահետազոտական կառույցների պարտադիր ներառմամբ: Միևնույն ժամանակ, այդ կազմակերպությունները կարող են նպաստել ռազմաարդյունաբերական արտադրանքի նկատմամբ պահանջարկի ձևավորմանը՝ կառավարությանն առաջարկելով այս կամ այն նորամուծական արտադրանքի արտադրության իրենց ծառայությունները:

ՊՆԾ-ով համալիրի մշակած և թողարկած արտադրատեսակները, անշուշտ, պետք է միջազգային շուկաներում լինեն մրցունակ: Այդ առումով զարգացման մի յուրահատուկ ուղղություն կարող է լինել ՌԴ-ի հետ ռազմական համագործակցությունը: Մասնավորապես՝ ՀՀ-ում տեղակայված 102-րդ զորակայանի՝ ռազմական տեխնիկայի և սպառազինությունների սպասարկման, նորոգման և արդիականացման նպատակով Գյումրիում հայ-ռուսաստանյան համատեղ ձեռնարկության հիմնումը կարող է սկիզբ դնել լայնածավալ հայ-ռուսաստանյան ռազմաարդյունաբերական համագործակցությանը: Բացի այդ, ՌԴ-ի համար ՀՀ-ն կարող է հետաքրքրություն ներկայացնել իր համեմատաբար էժան աշխատուժի և ռազմաարդյունաբերական արտադրանքի իրացման ծախսերի նվազեցման շնորհիվ:

- ***ՌԱՀ-ում մասնավոր հատվածի գործուն և լայնածավալ ներգրավումը***

ՌԱՀ-ի զարգացման վրա ՊՆԾ դրական ազդեցությունը պայմանավորված է նաև ՌԱՀ-ում մասնավոր հատվածի լայնածավալ ներգրավմամբ: Առանցքային նշանակություն է ստանում ՌԱՀ-ի և քաղաքացիական տնտեսության ինտեգրման աստիճանի մեծացմանը նպաստող գործարար հարաբերությունների սերտացման մեխանիզմների ներդրումը, ինչի վկայությունն է նաև միջազգային փորձը: Օրինակ՝ ԱՄՆ-ը 1933–1939 թթ. Մեծ ճգնաժամից դուրս եկավ ռազմաարդյունաբերության ոլորտում պետական պատվերների ծավալների մեծացման և դրան զուգընթաց նոր ու մրցունակ տեխնոլոգիաների

[8] Տես «В Армении утверждена стратегия военно-промышленной и военно-технической политики». «Голос Армении», 02.12.2016 (https://www.golosarmenii.am/article/47930/v-armenii-utverzhdena-strategiya-voenno-promyshlennoj-i-voenno-texnicheskoj-politiki):

ստեղծման միջոցով, ինչը ապահովվեց մասնավոր հատվածի գործուն մասնակցությամբ[9]:

ՌԱՀ-ի զարգացման ապահովման համար հույժ կարևոր է հետազոտությունների պատշաճ ֆինանսավորումը: Միևնույն ժամանակ, այդ ֆինանսավորման մեծացումը հանգեցնում է կա՛մ հարկատուների հարկային բեռի, կա՛մ պետական պարտքի աճման: Սակայն հետազոտությունների ֆինանսավորման մեծացումը կարելի է ապահովել այլ ոլորտների բյուջեի կրճատման հաշվին: Դրա հետ մեկտեղ, ինչպես ցույց է տալիս ԱՄՆ-ի փորձը, կառավարությունը պետք է սահմանի հետազոտությունների կատարման կոնկրետ նպատակներ, որպեսզի պաշտպանական հետազոտությունները դառնան ավելի արդյունավետ և նպատակաուղղված նոր ռեսուրսների ստեղծմանն ու սահմանափակ ռեսուրսների ընդլայնմանը[10]: Այս պայմաններում հետազոտությունների ֆինանսավորման արդյունավետության մեծացման համար հաճախ ներդրումներ են կատարվում մասնավոր առևտրային տեխնոլոգիաների զարգացման մեջ, քանի որ դրանք, ավելի առաջատար են, քան ռազմական հետազոտությունները[11] (հետագայում այդ տեխնոլոգիաները կծառայեն նաև պաշտպանական հետազոտություններին):

Հանրային–մասնավոր համագործակցության շրջանակներում պետությունը ապահովում է որոշակի առաջնահերթությունների և նախագծերի վրա ռեսուրսների կենտրոնացումը: Մյուս կողմից՝ մասնավոր, այդ թվում՝ օտարերկրյա, ներդրողները ներդրումներից զատ ռազմատեխնիկական ու քաղաքացիական արտադրության գծով համագործակցության ոլորտ ներբերում են առևտրային նախագծերի կառավարման նկատմամբ ժամանակակից մոտեցումներ, ինչպես նաև աջակցում են արտահանմանը: Տվյալ համատեքստում հանրային–մասնավոր համագործակցության շրջանակներում պատվերով նորամուծական պաշտպանական արտադրանքի թողարկման գործում կարևոր է սեփական և փոխառու միջոցների համախմբմամբ զարգացնել արտադրական հզորությունները և կատարված ծախսերը փոխհատուցել արտադրանքի վաճառքից ստացված եկամտով[12]:

Այնուամենայնիվ, ՊՆԾ շրջանակներում հանրային–մասնավոր համագոր-

[9] Տես *Виталий Шлыков.* Война как средство спасения американской экономики – часть II. «Военно-промышленный курьер», 9 ноября 2011 (http://vpk-news.ru/articles/8338):

[10] Տես «Fragility in the United States Weapons Industry». Industry study, Final Report. The Dwight D. Eisenhower School for National Security and Resource Strategy Washington, Spring 2016, P. 13 (http://es.ndu.edu/Portals/75/Documents/ industry-study/reports/2016/es-is-report-weapons-2016.pdf):

[11] Տես նույն տեղում, էջ 15:

[12] Տես *И. Е. Караваев.* Особенности формирования и реализации государственной промышленной политики в оборонно-промышленном комплексе на современном этапе. «Федеральный справочник», 2012, с. 190:

ծակցության կազմակերպման համար անհրաժեշտ են երկարաժամկետ ներդրումների ապահովության երաշխիքներ: Այս հանգամանքը կարևորում է նաև ՀՀ պաշտպանության նախարարությունը, մասնավորապես՝ ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի դիրքորոշման համաձայն՝ ռազմական գիտության և ռազմաարդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ է տեխնոլոգիաների ասպարեզում Հայաստանի բավարար ներուժի կիրառմամբ պաշտպանության ոլորտում ներդրել նորագույն մշակումները և ստեղծել բարենպաստ ներդրումային պայմաններ[13]:

Հատկանշական է նաև, որ բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը կհանգեցնի նաև ռազմաարդյունաբերական ոլորտում ՊՆԾ կատարման ուղղությամբ ՓՄՁ-ների գործունեության ծավալման: Այդ առումով տարբեր հզորությունների ձեռնարկություններով և բազմազանեցված մատակարարումներով պաշտպանական շուկայի նոր կառուցվածքի ձևավորման նպատակով 2003 թ. ԱՄՆ-ում ընդունված «Պաշտպանական արդյունաբերական բազայի կերպափոխման ճանապարհային քարտեզում» կարևորվել էր գլխավոր կապալառուի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող այն ՓՄՁ-ների առաջնորդումն ու աջակցումը, որոնք մասնագիտացած են պաշտպանական նորամուծական տեխնոլոգիաներում[14]: Մյուս կողմից՝ ԱՄՆ-ում դաշնային կառավարությունը նորամուծական համակարգում կատարում է ներդրումներ և վարում է տարբեր շահառուների (ձեռնարկություններ, համալսարաններ և այլ հանրային ու մասնավոր միավորներ) միջև նախամրցակցային համագործակցությանն աջակցման քաղաքականություն, որի արգասիքներից է Փոքր գործարարության նորամուծական հետազոտական ծրագիրը[15]:

Այսպիսով՝ ՊՆԾ շրջանակներում կարևորվում է նաև ՓՄՁ-ների դերը: Այս համատեքստում ԵՄ-Հայաստան պատրաստվող նոր շրջանակային համաձայնագրի ստորագրումը կնպաստի ԵՄ-ի ներդրումների աճմանն ու Հայաստանի գործարարական միջավայրի բարելավմանը, ինչպես նաև բարեփոխումների հարցում ՀՀ կառավարությանը ցուցաբերվելիք աջակցության մեծացմանը: Հայաստանում ԵՄ-ի պատվիրակության ղեկավար դեսպան Պյոտր Սվիտալսկու պնդմամբ՝ կարևորվում է պետության ՀՆԱ-ում փոքր և միջին գործարարության մասնաբաժնի աճումը (ներկայումս այն կազմում է

[13] Ավելի հանգամանորեն տես «Հայաստանի Զինված ուժերն առաջնորդվում են «ասիմետրիկ-խելացի» սպառազինման հայեցակարգով»: «Lragir.am», 16 նոյեմբերի 2016 (http://www.lragir.am/index/arm/0/country/view/142940):

[14] Տես *W. Xiaoge, Z. Wenbo.* The study on Chinese defense science and technology industry management innovation in the policy of civil-military integration. «Review of the Air Force Academy», 2014, N 1 (25):

[15] Տես «Research and development, innovation, and the science and engineering workforce». National Science Board, National Science Foundation, 2012, PP. 3–4 (https://www.nsf.gov/nsb/publications/2012/nsb1203.pdf):

30 %, և այս ցուցանիշով Հայաստանը հետ է մնում ոչ միայն Ուկրաինայից ու Մոլդովայից, այլև Վրաստանից ու Բելառուսից)[16]: Հենց այդ նպատակին է հիմնականում ուղղված համագործակցության վերաբերյալ Եվրոպական բիզնես ասոցիացիայի մշակած հուշագիրը (այն շուտով կստորագրվի ՀՀ 14 բիզնես ասոցիացիաների ներկայացուցիչների հետ[17]):

Որպեսզի ՓՄՁ-ների մասնակցությամբ ՊՆԾ-ն խաղա ՌԱՀ-ի զարգացման մղիչ ուժի դեր, կարևոր է նաև արդյունաբերական կլաստերների* ստեղծումը: Կլաստերների մեջ ՓՄՁ-ների ընդգրկման դեպքում կառավարությունը դրանց օժանդակում է հարկերի կրճատման, տարբեր հիմնադրամներից ու վարկային աղբյուրներից օգտվելու հարցերում աջակցման միջոցով: ՌԱՀ-ի կլաստերները նաև աջակցում են ՓՄՁ-երին՝ առաջարկելով գովազդների, ինչպես նաև ազգային ու միջազգային ռազմաարդյունաբերական ցուցահանդեսների կազմակերպման հնարավորություններ: Մյուս կողմից՝ ՓՄՁ-ները մասնագիտանում են կոնկրետ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման մեջ և վարում են ճկուն շուկայական քաղաքականություն: Այս առումով ՓՄՁ-ները կարող են աջակցել խոշոր ռազմաարդյունաբերական պատվեր կատարող ձեռնարկություններին՝ նրանց հետ կնքելով այս կամ այն նախագծի որոշակի մասի սպասարկման վերաբերյալ պայմանագրեր[18]: Ավելին. ՓՄՁ-ները, չտիրապետելով մեծ ֆինանսական ու մարդկային ռեսուրսների, ՌԱՀ-ի կլաստերներում հնարավորություն են ստանում պահպանելու իրենց մրցունակությունը[19]:

Վերը բերվածից ելնելով՝ կարծում ենք, որ նպատակահարմար է ՀՀ ՊՆ ՌԱՊԿ-ի համադասմամբ ձևավորել բարձր որակավորում ունեցող կառավարիչներից, ֆինանսիստներից, շուկայագետներից և մատակարարման գծով փորձագիտական խումբ՝ համապատասխան բիզնես միջավայրի տեսագործնական վերլուծության, գործարարության ներկայացուցիչներին հստակ գործնական առաջարկությունների տրամադրման և ռազմավարությունների մշակման նպատակով:

---

[16] Ավելի հանգամանորեն տես *Ա. Հովհաննիսյան,* Պյոտր Սվիտալսկի. ԵՄ-ն պատրաստ է աջակցել Հայաստանի նոր կառավարության տնտեսական քաղաքականության շրջանակներում բարեփոխումների իրականացմանը: «ARMINFO», 20 Հոկտեմբերի 2016 (http://finport.am/ full_news.php?id=26678&lang=1):

[17] Տես նույն տեղում:

* Որոշակի ոլորտում փոխկապված ընկերությունների և հաստատությունների կենտրոնացում:

[18] Տես *K. A. Demir, E. Caymaz, F. Erenel.* Assessment of Defense Industry Clusters in Turkey. The 10th International Scientific Conference «Defense resources management in the 21st century». Braşov, 13 November 2015, P. 8:

[19] Տես նույն տեղում, էջ 12:

2. ՊՆԾ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

2.1 ՊՆԾ շրջանակներում տեխնոլոգիական արտադրության և ռազմաքաղաքացիական համագործակցության ընդլայնման հնարավորությունները

ՊՆԾ-ը կնպաստի ՀՀ տնտեսության զարգացմանը տեխնոլոգիական արտադրության ընդլայնման ներդրման միջոցով: Այս առումով էական նշանակություն ունեցող ուղղություններից է բարձր տեխնոլոգիաների զարգացումը և դրա կիրառումը: Այդ է վկայում նաև 2008 թ. համաշխարհային ճգնաժամից հետո ԱՄՆ-ի փորձը: ԱՄՆ-ում, մասնավորապես, կարևորվում էր անօդաչու թռչող ապարատների, կիբեռանվտանգությանն առնչվող տեխնոլոգիաների, հետախուզական սարքավորանքի արտադրությունը: Այդ, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման տեսակետից հատկանշական է նաև ԱՄՆ-ի նորընտիր Նախագահ Դ. Թրամպի որդեգրած տնտեսական քաղաքականությունը: Դրանում կարևորվում է ամերիկյան ընկերությունների (այդ թվում՝ ռազմաարդյունաբերական) արտասահմանյան արտադրությունների տեղափոխումը ԱՄՆ-ի տարածք՝ պետական կարգավորիչ միջոցառումներ ձեռնարկելու և հարկերը 35 %-ից մինչև 15 % կրճատելու պայմանով: Ընդ որում, շատ բարձր հարկեր են սահմանվելու ԱՄՆ-ից դուրս արտադրվող ապրանքների համար[20]:

Բարձր տեխնոլոգիաները ՊՆԾ-ի միջոցով տնտեսության խթանիչ դարձնելու մասին է խոսել ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը: Նրա կարծիքով՝ պաշտպանական տեխնոլոգիաների ոլորտում առավել ակտիվ դիրքեր են զբաղեցնում նորամուծական մշակումները, որոնք հնարավորություն են տալիս նորովի լուծելու Զինված ուժերի առջև դրված խնդիրները, փոխելու մարտական գործողությունների վարման ձևերը և բարձրացնելու զինծառայողների անվտանգության մակարդակը: Այս համատեքստում բոլոր տեղական արտադրողները, գիտական ոլորտի ներկայացուցիչները, հայրենական ու միջազգային բուհերի առաջատար ուսանողները պետք է ներգրավվեն «ժողովրդական բանակի» տիրույթում[21]:

ՀՀ ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության հիմնական խնդիրներից է գոյություն ունեցող արդյունաբերական տեխնոլոգիական հիմքի վրա նոր սերնդի գիտահենք մրցունակ ռազմական և քաղաքացիական արտադրանքների թողարկումը: Ընդսմին ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացմանը ՊՆԾ նպաստումը պայմանավոր-

[20] Տես «Трамп пригрозил американским компаниям, переводящим производство за рубеж». «РИА НОВОСТИ», 01.12.2016 (https://ria.ru/world/20161201/1482662019.html):

[21] Տես «Հայաստանի ռազմաարդյունաբերությունը տնտեսության խթանիչ դառնալու մեծ ներուժ ունի. Վիգեն Սարգսյան»: «ԱՅՍՕՐ՝», 13.10.2016 (http://www.aysor.am/am/news/2016/10/13/%D5%8E%D5%AB%D5%A3%D5%A5%D5%B6-%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5% B5%D5%A1%D5%B6/1151516):

ված կլինի նոր ազգային տեխնոլոգիական բազայի ստեղծմամբ, որը կապահովի թողարկվող արտադրանքի մրցունակությունը: Մյուս կարևոր պայմանն այն է, որ գիտատեխնիկական ուղղվածությամբ բուհերի ուսանողները հնարավորություն ունենան այցելելու ռազմակրթական հաստատություններ՝ պաշտպանական ոլորտի ռազմատեխնիկական ապահովման միջոցների մասին նախնական գիտելիքներ ստանալու համար: Այդ նպատակով պետական սահմանափակ ռեսուրսները պետք է հատկացվեն ռազմա-քաղաքացիական համագործակցության հաստատմանը՝ ռազմական և քաղաքացիական նորամուծությունների փոխադարձ ներթափանցումների ապահովմամբ (պետք է նշել, որ ռազմա-քաղաքացիական համագործակցություն չլինելու դեպքում պետությունը ՊՆԾ շրջանակներում հարկադրված իր վրա է վերցնում ռազմական կիրառության տեխնոլոգիաների մշակման համար անհրաժեշտ ծախսերը)[22]:

Հայաստանում ռազմա-քաղաքացիական համագործակցության խթանմանն ուղղված քաղաքականության ներդրումը մեծապես կախված է հիմնարար ու կիրառական գիտության արգասիքների առևտրայնացման արդյունավետ կազմակերպման հետ, ինչի համար անհրաժեշտ է.

- նորամուծական ծրագրերին պետական աջակցության, այդ թվում՝ դրանց կենտրոնացված ֆինանսավորման, ինչպես նաև տվյալ գործընթացի արդյունավետ վերահսկման համընդգրկուն մեխանիզմների մշակում և ներդրում: Այդ առումով հատկանշական է ԱՄՆ-ի փորձը. այնտեղ հետազոտությունների կատարման գործում գիտահետազոտական ինստիտուտներին և նորամուծությունների առևտրայնացման գործում մասնավոր հատվածին շահագրգռելու համար ստեղծվել էին հետազոտական և կորպորատիվ հարկային վարկերի տրամադրման մեխանիզմներ[23]: Նպատակահարմար է նաև նշել ԱՄՆ-ում պետության նորամուծական մրցակցային առավելությունների պահպանման համար գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի (ԳՏՃՄ) գծով պետական ֆինանսավորմամբ ծրագրերի կարևորությունը[24],
- մրցակցային միջավայրում բոլոր մասնակիցների համար հավասար պայմանների ապահովման մեխանիզմների կատարելագործում,
- նորամուծական գործունեությունը համակարգող օրենսդրության կատարելագործում:

[22] Տես *Թ. Մանասերյան,* Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր: Ե., 2014, էջ 209–210:

[23] Տես «Electronics: Industry study». Final report. National Defense University, The Dwight D. Eisenhower School for National Security and Resource Strategy. Washington, Spring 2015, P. 14 (http://es.ndu.edu/Portals/75/Documents/industry-study/reports/2015/es-is-report-electronics-2015. pdf):

[24] Տես նույն տեղում, էջ 9:

Գիտատեխնոլոգիական ոլորտում ռազմա-քաղաքացիական համագործակցությունը կնպաստի նաև կերպափոխիչ նորամուծությունների ստեղծմանը, երբ հիմնական հետազոտություններով ապահովվում է գիտելիքի հետևողական զարգացումը և ստեղծվում է սիներգիկ էֆեկտ (գիտությունն ու տեխնոլոգիաները փոխլրացնում են միմյանց՝ ստեղծելով նոր կարողություններ)[25]:

Ինչպես այլ երկրների, այնպես էլ ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման հիմքում դրված գիտատեխնոլոգիական և նորամուծական համակարգը մի շարք փոխկապված գործոնների համակցություն է, որը ներկայացված է ստորև բերված գծապատկերում[26]:



Ինչպես երևում է գծապատկերից, անկյունաքարային դեր են խաղում գիտելիքի ստեղծումը, տարածումը և կիրառումը, որոնք ունեն իրենց գործոնային, փոխկապված բաղկացուցիչ միավորները (ձեռնարկության կարողություններ և կապեր, գիտական համակարգ, աջակցող ինստիտուտներ և այլ հետազոտական կազմակերպություններ): Միևնույն ժամանակ, գիտելիքի ստեղծումը, տարածումը և կիրառումը փոխկապված են համաշխարհային նորամուծական ցանցի, արդյունաբերական կլաստերների, ազգային և տարածաշրջանային նորամուծական համակարգերի հետ: Դրանք իրենց հերթին ձևավորում են պետության նորամուծական կարողությունը, որը կապված է երկրում մակրոտնտեսական և կարգավորիչ միջավայրի, հեռահաղորդակցային ենթակառուցվածքների, շուկայական գործոնների, ապրանքների

[25] Տես «Research & development, innovation, and the science and engineering workforce», P. 3 (https://www.nsf.gov/nsb/publications/2012/nsb1203.pdf):

[26] Տես նույն տեղում:

շուկայի և կրթական համակարգի հետ, որոնք էլ անմիջականորեն ազդում են պետության զարգացածության մակարդակի վրա:

Կարող ենք նշել, որ ՊՆԾ-ը պետք է դառնա տնտեսության արդիականացման, տեխնոլոգիական զարգացման և արտաքին գործընկերների գրավման կարևոր պայման: Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել տեխնոլոգիապես բարձր մակարդակ ունեցող «մատների վրա հաշված» ու մեծ քարշիչ ուժ ունեցող և համալիր գործառույթներ իրականացնող տնտեսական հսկաներ (ֆինանսաարդյունաբերական խմբեր), որոնք պետք է օժտեն բարձր որակավորում ու շարունակաբար վերապատրաստվող կադրային ներուժով: Ընդ որում՝ ՀՀ պայմաններում պետք է ձգտել, որպեսզի գոյություն ունեցող արտադրատեխնոլոգիական հնարավորություններ ունեցող այդ արտադրությունները ապահովեն մրցունակ արտադրանքի թողարկում:

Նշված գործոնների հաշվառմամբ տեխնոլոգիական ոլորտում հայրենական արտադրություններին աջակցման քաղաքականության իրականացման նպատակով անհրաժեշտ է գնումների օրենսդրության մեջ կատարել փոփոխություններ: Դա, օրինակ, կարող է իրականացվել հստակ չափանիշների մշակմամբ, ինչի շնորհիվ մրցութային ընթացակարգով գնումներ կատարելու դեպքում հայրենական արտադրությունների նկատմամբ կիրառվեն գնային զեղչեր: Չափանիշները կարելի է սահմանել հետևյալ ուղղություններով.

- հայրենական արտադրությանը արտադրվող համալիրի բաղադրամասերի պատկանելության նվազագույն չափ,
- աշխատատեղերի նվազագույն թիվ (այդ թվում՝ մինչև 30 տարեկան երիտասարդների թիվ),
- արտադրանքի գնի զեղչի սահմանաչափ (ընդ որում, զեղչումը կարող է արվել ինչպես գնի ուղղակի զեղչման, այնպես էլ հարկերի զեղչման միջոցով, օրինակ՝ ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատման ձևով):

Այս պայմաններում արտադրության բազմարարի (մուլտիպլիկատոր) ազդեցությունը* կլինի շատ ավելի մեծ, քան արտասահմանից ներմուծման դեպքում (տեղի է ունենում կապիտալի արտահոսք): Բերենք տեսական օրինակ: Հայրենական ձեռնարկությունը պլանշետներ է արտադրում վերը բերված չափանիշների պահպանմամբ, սակայն գնագոյացման օպտիմալ սկզբունքով դրա մեծածախ վաճառքի գինը բարձր է Չինաստանից ներմուծվող պլանշետների գնից: Նման պայմաններում պետք է հաշվի առնել, որ հայրենական արտադրության պարագայում ստեղծվում են նոր աշխատատեղեր, մեծանում են հարկային մուտքերը և աջակցություն է ստանում գործարարությունը, և այդ ամենը իր հերթին մակրոտնտեսական մակարդակով նպաստում է գործազրկության կրճատմանը, մատակարար գործարարությունների

* Ցույց է տալիս յուրաքանչյուր լրացուցիչ հիմնված արտադրության կամ ներդրված գումարի ազդեցությունը ընդհանուր տնտեսական արդյունքի վրա:

ու կառավարման զարգացմանը և այլն: Չինաստանից ներմուծման պարագայում ոչ միայն այդ դրական գործոնները վերանում են, այլև տեղի է ունենում կապիտալի արտահոսք:

2.2 ՊՆԾ դերը ՀՀ տնտեսության ոլորտում իրագործվող պետական կառավարման և տնտեսական քաղաքականության համատեքստում

ՊՆԾ շրջանակներում ռեսուրսների բաշխման վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ պետք է ապահովվի թափանցիկություն: Պաշտպանական ոլորտում ռեսուրսների բաշխումը պետք է կատարվի ծախսային արդյունավետության ապահովմամբ և Զինված ուժերի առաքելության հաշվառմամբ: Այս տեսակետից ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետության մեծացման նպատակով ՊՆԾ ձևավորման և գործարկման քաղաքականությունը պետք է իրականացվի հստակ նշված ներդրումների և դրանց կատարման ժամանակահատվածի պայմաններում (դրանից հետո տեղի կունենա բյուջետային միջոցների հետգնում): Ավելին. ՊՆԾ ձևավորման և գործարկման քաղաքականությամբ պետք է նվազագույնի հասցվեն վարչական գործառական ծախսերը, ապահովվի ամբողջ գործընթացի միասնականությունը, արդարությունը և բացությունը, ինչպես նաև բավարարվեն արտադրանքի վրա կատարվող ծախսին ու դրա որակին ներկայացվող պահանջները[27]: Մյուս կողմից՝ պատշաճ կերպով ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կառավարությունը պետք է ղեկավարման, կառավարման, աուդիտի և որակի վերահսկման նպատակով վարձի լավ պատրաստված անձնակազմ[28]:

ՊՆԾ արդյունավետության մեծացման տեսանկյունից կարևոր է պաշտպանության ոլորտի բյուջեավորման և քաղաքացիական տնտեսության միջև փոխկապվածության պարզումը: Մասնավորապես՝ ՊՆԾ ֆինանսավորման չափը ուղիղ համեմատական է դրա բազմարարի ազդեցությանը: Հենց այս հանգամանքը պետք է կարևորվի ՊՆԾ արդյունավետության մեծացման համար:

Հայաստանում ՊՆԾ ֆինանսավորման արդյունավետության մեծացման առումով կարևորվում է նաև թղթապանակային կառավարման համակարգի ներդրումը: Այն մեծացնում է տարբեր նախագծերի կառավարման արդյունավետությունը և բարելավում ռիսկերի կառավարումը գնահատելու մեխանիզմները[29]:

---

[27] Տես «Private sector support to operations». Industry study, Final Report. The Industrial College of the Armed Forces, National Defense University. Washington, Spring 2010, P. 8 (http://es.ndu.edu/Portals/75/Documents/industry-study/reports/2010/icaf-is-report-private-mil-ops-2010.pdf):

[28] Տես նույն տեղում, էջ 9:

[29] Տես *M. Keating.* Public Management Reform and Economic and Social Development. Organisation of Economic Co-operation and Development Journal on Budgeting, 2001, PP. 152–153 (https://www.oecd.org/gov/budgeting/43515306.pdf):

Մյուս կողմից՝ տնտեսության վրա ՊՆԾ դրական ազդեցությունը կախված է պետական բյուջետային միջոցների արդյունավետ կառավարման գործիքարանի ներդրումից, ընդսմին դրա առանքային տարրը ծրագրային բյուջեավորումն է: Տվյալ գործիքարանի լիակատար ներդրման դեպքում ծրագրերը ներկայացվում են չափելի նպատակների տեսքով, ուստի ծախսված միջոցները հնարավոր է ուղղակիորեն կապակցել ոլորտային ռազմավարությունների նպատակների հետ: Բացի այդ, ծրագրային բյուջեավորումը նպաստում է մատուցվող ծառայությունների և արդյունքների թափանցիկության ու հաշվետվողականության մեծացմանը[30]:

Ի տարբերություն ավանդական բյուջեավորման համակարգից, որտեղ հիմնական ուշադրությունը կենտրոնացված է ընթացակարգային և բյուջետային կանոնակարգերի հետ համապատասխանության վրա, ծրագրային բյուջեավորման համակարգի ներդրման պայմաններում պետական մարմինները դառնում են արդյունքների համար պատասխանատու, իսկ ղեկավար մակարդակում անհատները հաշվետու են դառնում բյուջետային ծրագրերից ակնկալվող ձեռքբերումների համար[31]:

Ծրագրային բյուջեավորման համակարգի ամբողջական ներդրումը կարող է նաև փոխել ՊՆԾ շրջանակում հաստատութենական հարաբերությունների և ռեսուրսների բաշխման դինամիկան[32]:

ՊՆԾ արդյունավետ կատարման համար անհրաժեշտ է տնտեսական կառավարման նկատմամբ այնպիսի մոտեցումների ներդրում, որոնք ուղղված լինեն աշխատանքի արտադրողականության մեծացմանը և տեխնոլոգիական տնտեսական աճմանը: Այդ նպատակներին հնարավոր չէ հասնել առանց կորպորատիվ կառավարման* ժամանակակից տարրերի ներդրման: Այդ առումով կարևոր է ապահովել մասնավոր հատվածի գործարարական նախագծերի իրականացնելիությունն ու ՊՆԾ կատարման համատեղելիությունը, ինչը կնպաստի և՛ գործարարության զարգացմանը, և՛ պաշտպանական կարիքների բավարարմանը:

Դրա հետ մեկտեղ կարևորվում է գիտակրթական և նորամուծական ոլորտներում կոնկրետ ծրագրերին և նորամուծությունների առևտրայնացմանը պետությունից բացի նաև խոշոր հայրենական ձեռնարկությունների ֆինանսական աջակցության օրենսդրորեն ամրագրված կորպորատիվ պարտա-

[30] Տես *Կ. Ն. Ավետիսյան,* ՀՀ Պաշտպանության նախարարությունում ծրագրային բյուջեավորման համակարգի ներդրման և զարգացման որոշ հարցեր: «ՀԲ», 2010, հմ 4:

[31] Տես «Ծրագրային բյուջետավորման բարեփոխումները Հայաստանում»: Ե., 2014 (http://www.parliament.am/committee_docs_5/FV/Brochure%201%20(10-09-2014).pdf):

[32] Տես *J. Z. Kusek, R. C. Rist.* Ten Steps to a Results-Based Monitoring and Evaluation System. A Handbook for Development Practitioners. Washington, 2004, P. 21:

* Կորպորատիվ կառավարումը մի համակարգ է, որի միջոցով ընկերությունները ղեկավարվում և վերահսկվում են:

վորության հաստատումը: Դա իր հերթին կնպաստի ՊՆԾ իրագործման համար հույժ կարևոր գիտություն–նորամուծություն–նորամուծության առևտրայնացում–արտադրություն շղթայի արդյունավետության մեծացմանը: Այս քաղաքականությունը հատկապես արդիական է բյուջետային միջոցների և օտարերկրյա ներդրումների սղության պայմաններում:

ՀՀ տնտեսական զարգացման վրա ՊՆԾ խթանիչ ազդեցությունը կարող է մեծանալ ՀՀ Կառավարությանը կից Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի ստեղծման շնորհիվ, մի հաստատության, որը գործելու է հանրային–մասնավոր գործընկերության ձևաչափով: Կենտրոնի (այն իր գործունեությունը կսկսի մինչև տարեվերջ) հիմնական գործառույթը լինելու է մասնավոր հատվածի հետ սերտ համագործակցությամբ ՀՀ Կառավարության համար երկարաժամկետ ռազմավարության և տարբեր գերակա ուղղություններով երկարաժամկետ ու կարճաժամկետ բարեփոխումների հայեցակարգերի և փաթեթների մշակումը[33]: Այս գործոնների հաշվառմամբ, մեր կարծիքով, խիստ կարևոր է այդ կենտրոնի և ՀՀ ՊՆ ՌԱՊԿ-ի միջև սերտ համագործակցության հաստատումը՝ մակրոտնտեսական պայմաններում ՊՆԾ ձևավորման, իրագործման և տնտեսական (այդ թվում՝ ռազմաարդյունաբերական) ոլորտում դրա ազդեցության գնահատման նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ազգ–ժողովուրդ», կամ «ժողովրդական բանակ», համակարգի ձևավորման համատեքստում կարևորվում է ՊՆԾ դերը ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման գործում: Այս առումով ՊՆԾ-ն ձևավորել և իրագործել նպատակահարմար է ռազմաարդյունաբերության և քաղաքացիական տնտեսության ինտեգրման գործուն մեխանիզմների ստեղծմամբ ընդհանուր տեխնոլոգիական բազայի հիմքի վրա: ՊՆԾ-ն պետք է հենվի գիտություն–նորամուծություն–նորամուծության առևտրայնացում–արտադրություն շղթայի վրա՝ նպաստելով պետության տնտեսական զարգացմանը:

Ընդհանուր առմամբ, «ազգ–բանակ» համակարգի ձևավորման համատեքստում ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման գործում ՊՆԾ դերը դրսևորվում է հետևյալ խնդիրների լուծման ձևով.

- ռազմական հակամարտության գոյության և ռեսուրսների սակավության պայմաններում դաշնակից ու գործընկեր պետությունների հետ արդյունաբերական համագործակցության առաջնահերթ ուղղությունների մշակում,
- տեղական արդյունաբերական բազայի զարգացման գործում ռազմաքաղաքացիական տեխնոլոգիաների տարածում,

[33] Տես «Մինչև տարեվերջ կիիմնադրվի ՀՀ Կառավարությանը կից Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնը», 1 դեկտեմբերի 2016 (http://gov.am/am/news/item/12713/):

- հանրային–մասնավոր համագործակցության շրջանակներում գործարարական նախագծերի մշակման գաղափարական փուլում մասնավոր հատվածի նկատմամբ պետական չափանիշների և պահանջների մեղմացում: ՌԱՀ-ում մասնավոր հատվածի ներգրավման նպատակով ՀՀ ՊՆ ՌԱՊԿ-ի համադասմամբ բարձր որակավորում ունեցող կառավարիչներից, ֆինանսիստներից, շուկայագետներից և մատակարարման գծով փորձագիտական խմբի ձևավորումը և համապատասխան բիզնես միջավայրի տեսագործնական վերլուծությունը, գործարարության ներկայացուցիչներին հստակ գործնական առաջարկությունների ներկայացումը և ռազմավարությունների մշակում,
- ՀՀ կառավարությանը կից Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի և ՀՀ ՊՆ ՌԱՊԿ-ի միջև համագործակցության մեխանիզմների հաստատում,
- շահութահարկի դրույքի նվազեցման և կորպորատիվ հարկային վարկերի տրամադրման պայմանով խոշոր ձեռնարկությունների համար՝ գիտատեխնիկական ոլորտին ֆինանսական աջակցության ցուցաբերման վերաբերյալ օրենսդրորեն ամրագրված կորպորատիվ պարտավորությունների սահմանում,
- գիտատեխնիկական ուղղվածությամբ բուհերի ուսանողներին հնարավորություն ընձեռնվի այցելելու ռազմակրթական հաստատություններ՝ պաշտպանական ոլորտի ռազմատեխնիկական ապահովման միջոցների մասին նախնական գիտելիքներ ստանալու համար,
- տեխնոլոգիական ոլորտում հայրենական արտադրություններին աջակցման քաղաքականության իրականացման նպատակով գնումների օրենսդրության մեջ փոփոխությունների կատարում,
- ծրագրային բյուջեավորման համակարգի լիարժեք ներդրում,
- ՌԱՀ-ի կլաստերի ստեղծում,
- պետական համակարգում թղթապանակային կառավարման ներդրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Տ. Տ. ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի գիտնական-վերլուծաբան,
Ս. Գ. ԿԵԳԻՇՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի խորհրդական-իրավաբան,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ասպիրանտ

Բանակը, լինելով պետության մի յուրահատուկ կառույց՝ իր ներքին օրենքներով ու օրինաչափություններով հանդերձ, արտացոլում է հասարակության վիճակը, քանի որ նրանում առավել խտացված կերպով դրսևորվում են հասարակությունում առկա և՛ դրական, և՛ բացասական միտումները: ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի առաջ քաշած «ազգ–բանակ» գաղափարը հնարավորություն է տալիս ուժեղացնելու բանակ–հասարակություն հետադարձ կապը և դրանով իսկ հայոց բանակը վերածելու հասարակության բարեփոխման շարժիչ ուժի[1]: Այս համատեքստում հարկ է նշել, որ Հայաստանի համար կենսական կարևորության հրամայական է Զինված ուժերի մարտական ներուժի հզորացումն ու զարգացումը՝ համաժողովրդական ներուժի հնարավորինս օպտիմալ օգտագործմամբ:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Հայ ժողովրդի պատմության տարբեր շրջաններում տեղի ունեցած պատերազմների ժամանակ համաժողովրդական համախմբման բազմաթիվ դրվագներ վառ կերպով ապացուցում են, որ հայի գիտակցության մեջ համազգային բանակի տեսլականն ունի պատմական արմատներ: Նման ցայտուն օրինակներից է Արցախյան ազատամարտը, որը միավորեց արցախահայությանը, ՀՀ հայությանը և սփյուռքահայությանը:

Կարևոր ենք համարում նշել, որ ազգի և բանակի միջև ամուր կապերի ստեղծման ուղղությամբ իրավական քայլեր են ձեռնարկվել նաև Հայաստանի Առաջին Հանրապետությունում: Այսպես. 1919 թ. հանրապետության խորհրդարանի ընդունած «Զինապարտների հաշվառման ու զորակոչի մասին» օրենքով պարտադիր զինվորական ծառայության ենթակա էին հանրապետության արական սեռի 16-43 տարեկան բոլոր քաղաքացիները: Նշված օրենքով սահմանվում էր, որ զինվորական ծառայության ընդհանուր ժամ-

[1] Տես «Վիգեն Սարգսյանը բացատրել է, թե ինչ է նշանակում «ազգ–բանակ» հայեցակարգը»: «Lragir.am», 20.10.2016 (http://www.lragir.am/index/arm/0/country/view/141342):

կետը 18 տարի է, ընդ որում, 3 տարին իսկական զինվորական ծառայություն, իսկ հաջորդ 15 տարին՝ պահեստազորային ծառայություն: Օրենքով սահմանված էր նաև այն քաղաքացիների շրջանը, որոնք զորակոչի ենթակա չէին: Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնություններից զորակոչի ենթակա էին միայն եզդիներն ու ասորիները, և այն էլ՝ կամավորական զորամասերում ծառայելու համար: Դա ցույց է տալիս, որ բանակը խարսխվում էր ազգային հիմքերի վրա[2]: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ դեռ Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության ընթացքում օրենսդրական մակարդակում կատարվել են քայլեր՝ ուղղված ազգի և բանակի կապի ապահովմանը ոչ միայն պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում, այլև դրանից հետո, թեպետ դրանք չեն ստացել գաղափարական-գաղափարախոսական արտացոլում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը, որոնք կազմավորվել էին ռազմական գործողությունների ընթացքում և ձևավորման հիմքում ունեին անցած մարտական ուղու փորձն ու նախկին խորհրդային բանակից ժառանգված կառուցվածքն ու մարտավարությունը, հետպատերազմյան շրջանում ընտրեցին ինքնակայացման նոր ճանապարհ: Ուժերի ու միջոցների սահմանափակության պայմաններում առաջին հերթին անհրաժեշտ էր ոչ միայն պահպանել ու զարգացնել տարածաշրջանում ամենամարտունակներից մեկը ճանաչված զինուժի համբավն ու հաղթական ավանդույթները, այլև ամրապնդվել ու ներկայանալ որպես ազգային առանձնահատկություններով օժտված և իր ուրույն արժեհամակարգի վրա հիմնված պաշտպանական կառույց:

Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության և քաղաքացիների ներգրավվածության, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա[3]: Ընդսմին հարկ է նշել, որ ՀՀ-ում պաշտպանական համակարգի զարգացման նպատակով իրագործվող բարեփոխումների արդյունավետությունը անմիջականորեն պայմանավորված է նաև իրավական հիմքի կատարելագործմամբ, որի հիմնական նպատակն է ոչ միայն առկա կոնկրետ խնդիրների լուծումը, այլև ապագայում հնարավոր բոլոր խնդրահարույց հարցերի կանխատեսումն ու կանոնակարգումը: Այդ գործունեությունը նաև կոչված է գտնելու և ամրագրելու այն հնարավոր

[2] Տես *Մ. Լ. Կարապետյան,* Հայաստանի առաջին Հանրապետության զինված ուժերի ստեղծման պատմությունից (1918-1920 թթ.), էջ 9 (http://ysu.am/files/01L_Karapetyan.pdf):

[3] Այդ մասին հանգամանորեն տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

տարբերակները, որոնք անհրաժեշտ են պետության պաշտպանության պահանջմունքների և առկա մարդկային ու սոցիալ-տնտեսական հնարավորությունների արդյունավետ համադրման համար[4]:

Հայաստանի պաշտպանության ոլորտի օրենսդրական զարգացումները կարելի է բաժանել 4 ժամանակագրական փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 1990 թվականից մինչև 1997 թվականը, երբ ԽՍՀՄ որոշ իրավական ակտեր մեխանիկորեն արտացոլվեցին նորանկախ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, ինչպես նաև առաջին անգամ փորձ արվեց կարգավորելու նորաստեղծ Զինված ուժերում ծագող իրավահարաբերությունները: Երկրորդ փուլն սկսվում է 1997 թվականին և ավարտվում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքների հիման վրա ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխությունների կատարմամբ: Երրորդ փուլը տևում է նշված Սահմանադրական փոփոխություններից մինչև 2007–2008 թվականները, երբ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների հիման վրա մշակվեցին ՀՀ պաշտպանության ոլորտի օրենսդրության զարգացման ռազմավարական ծրագրեր և ձեռնարկվեցին օրենսդրական բարեփոխումներ[5]: Որպես չորրորդ փուլ կարելի է առանձնացնել 2008 թվականից մինչ օրս ժամանակահատվածը, երբ ընդհանուր պաշտպանական բարեփոխումներին համապատասխան և պաշտպանության համակարգի ռազմավարական վերանայման ծրագրերին համահունչ կատարելագործվում է ոլորտի նորմատիվ իրավական հիմքը, զարգանում են իրավահարաբերությունների կանոնակարգման մակարդակն ու մշակույթը: Այս փուլի շարունակությամբ է, որ ներկայումս ակտիվորեն պլանավորվում և մշակվում են Հայաստանում խորհրդարանական կառավարմանն անցնելու կապակցությամբ երկրի պաշտպանական օրենսդրության արմատական վերափոխումները՝ ի կատարումն 2015 թ. ընդունված նոր Սահմանադրության համապատասխան պահանջների:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓՈՒՄ

Արդի աշխարհում ժողովրդավարական արժեքների գերակայության թելադրանքով ռազմավարական առաջնահերթություն է դարձել ազգային անվտանգության ապահովումը ժողովրդավարության ամրապնդմամբ ու զարգացմամբ: Ըստ այդմ տվյալ գործընթացն իրականացվում է սահմանադրության և ընթացիկ օրենքների մակարդակներում անվտանգության բնագավառի ու դրա պաշտպանական ոլորտի կառավարման համակարգերի վերաբերյալ դրույթների ամրագրմամբ: Ամենաընդհանուր ձևակերպմամբ՝ պաշտպա-

[4] Տես *А. В. Щукин.* Российское военное законодательство на современном этапе (итоги работы научно-практической конференции). «Право в Вооруженных Силах», военно-правовое обозрение, 2013, № 9:

[5] Տես *Ա. Ս. Նազարյան,* Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում: «Հայկական բանակ», 2008, հմ. 2–3:

նության ոլորտի կառավարումը իշխանության իրականացման գործունեություն է, հետևաբար պաշտպանության ոլորտի կառավարման համակարգի հիմնական բնութագրիչները, դրա տարրերի դերային ու գործառութային առանձնահատկությունները պայմանավորված են պետության մեջ իշխանության իրականացման մոդելով:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մակարդակում «գործառույթ–հաստատություն–լիազորություն» եռամիասնական շղթայում լիարժեք ներդաշնակության ապահովման գլխավոր հիմնավորմամբ 2015 թ. կատարվեցին սահմանադրական բարեփոխումներ, ըստ որոնց՝ Հայաստանն անցնում է խորհրդարանական հանրապետության կառավարման մոդելին: Կառավարման այդ ձևի առանձնահատկությունն այն է, որ պետության ղեկավարն իրականացնում է զուտ ներկայացուցչական գործառույթներ: Խորհրդարանական հանրապետություններում Նախագահի դերը էական չէ, և ըստ էության գործադիր իշխանությունը օրենսդիր իշխանության «շարունակությունն» է: Դրանով իսկ պետական իշխանության երկու ճյուղերի միջև հակամարտության ծագման հավանականությունը հասցվում է նվազագույնի[6]: Խորհրդարանը փաստացի քաղաքական և իրավական պատասխանատվություն է կրում իր ձևավորած կառավարության գործունեության համար:

Սահմանադրական բարեփոխումների հետևանքով փոփոխություններ են կատարվելու նաև պաշտպանության բնագավառի կառավարման մարմինների իրավաքաղաքական կարգավիճակներում և դրանց գործունեությանը վերաբերող նորմատիվ իրավական հիմքերում: Նոր Սահմանադրության 155-րդ հոդվածի համաձայն՝ Զինված ուժերը գտնվելու են կառավարության ենթակայության ներքո, դրանց կիրառման մասին որոշումը նույնպես ընդունելու է կառավարությունը, իսկ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանելու է ՀՀ ազգային անվտանգության խորհուրդը, հետևաբար՝ պաշտպանության նախարարն էլ Զինված ուժերի ղեկավարումն իրականացնելու է այդ ուղղությունների շրջանակներում: Առանձին մասով շեշտվում է, որ վարչապետը պատերազմական իրավիճակներում Զինված ուժերի Գերագույն հրամանատարն է[7]: Այստեղ հարկ է նաև նշել, որ տվյալ դրույթը (ներառված 6-րդ գլխում) ուժի մեջ է մտնելու ՀՀ նորընտիր նախագահի կողմից պաշտոնի ստանձնումից հետո (2018 թ., իսկ մինչ այդ շարունակելու են գործել 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության համապատասխան դրույթները):

Նոր Սահմանադրության ընդունումից հետո ՀՀ Կառավարությունը հաստատեց ՀՀ Սահմանադրության փոփոխություններում օրենքով կարգավորման պահանջ բովանդակող դրույթների հիման վրա այն օրենքների ցանկը,

[6] Տես «Общая теория права и государства». Под ред. В. В. Лазарева. Изд. 3, перераб. и доп. М., 2011, с. 306:

[7] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ»: Ընդունվել է 06.12.2015 (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510):

որոնք ենթակա են ընդունման, փոփոխման կամ լրացման: Դրա 36–42-րդ կետերով նախատեսվեց համապատասխան օրենսդրական փոփոխություններ ու լրացումներ կատարել պաշտպանության ոլորտի կարգավորումներին առնչվող մի շարք հիմնարար բնույթի իրավական ակտերում, ինչպիսիք են՝ «Պաշտպանության մասին», «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին», «Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք», «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին», «Զինվորական ծառայության անցնելու մասին», «Զինապարտության մասին» և «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքները[8]:

ՀՀ պաշտպանության ոլորտի օրենսդրական ակտերը ՀՀ Սահմանադրության փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով պաշտպանության նախարարության 2017 թ. միջոցառումների շրջանակներում ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով հաստատված ժամանակացույցով ստեղծվեց նշված օրենսդրական նախագծերը մշակելու համար աշխատանքային խումբ (երկու ենթախմբերով)[9]: Տվյալ ձևաչափը հնարավորություն կընձեռի խնդրահարույց հարցերի օրենսդրական կարգավորման գործում լայնորեն ներգրավելու հասարակության տարբեր հատվածների, ինչը, անշուշտ, համահունչ է «ազգ–բանակ» հայեցակարգի ոգուն:

Որպես եզրահանգում կարելի է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունում մինչև նոր Սահմանադրության համապատասխան դրույթների ուժի մեջ մտնելը անհրաժեշտ է ամբողջությամբ վերանայել պաշտպանության ոլորտի՝ դեռևս որոշակիորեն հետխորհրդային շրջանի զարգացումների ու իրավաքաղաքական մշակույթի ազդեցությունը կրող նորմատիվային հիմքերը՝ հատկապես զինվորական օրենսդրության հիմնարար ակտերի արմատական վերափոխմամբ: ԶՈՒ-ի արհեստավարժության տեսականի զարգացման և «ազգ–բանակ» հայեցակարգի իրագործման հնարավորությունների գնահատման հիման վրա (հատկապես նաև նորմատիվային ամրագրումների միջոցով խուսափելով հասարակության ռազմականացման հետ այդ հայեցակարգի հնարավոր թյուրիմաց նույնականացումից) ձևավորվում է մի ուղենիշ, որով պետության պաշտպանության ոլորտի օրենսդրական հիմքերը պետք է ստանան ավելի համակարգված բնույթ, մասնավորապես՝ դիտարկել դրանք զինվորական օրենսգրքի շրջանակներում համապարփակելու կամ այդ իրավական ակտերի բնույթի բերումով դրանք համախմբել՝

[8] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկ»: ՀՀ Կառավարության 2016 թվականի մարտի 10-ի հմ. 245-Ա որոշման հավելված, կետ 36–42 (https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2016/03/16_0245.pdf):

[9] Տես ՀՀ Պաշտպանության նախարարի 2016 թվականի նոյեմբերի 23-ի «ՀՀ պաշտպանության ոլորտի օրենսդրական ակտերը ՀՀ Սահմանադրության փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով մշակման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» հմ. 1298 հրամանը:

համընդգրկունությունն ապահովելու նպատակով (օրինակ՝ միավորել «Պաշտպանության մասին» ու «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» օրենքները, կամ՝ «Զինվորական ծառայության անցնելու մասին», «Զինապարտության մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքները):

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Զինծառայողների սոցիալական պաշտպանության համակարգը զինված ուժերի մարտունակության ապահովման կարևոր բաղադրիչ է, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում դրանց արդյունավետ կառավարման համար: Արտասահմանյան երկրների առաջավոր փորձը վկայում է, որ զինված ուժերի սոցիալական պաշտպանության բարձր մակարդակը նպաստում է, որ քաղաքացիները կամավոր հիմունքներով ընդունվեն պայմանագրային զինվորական ծառայության և պատրաստակամորեն ու անձնվիրաբար կատարեն իրենց ծառայողական պարտականությունները: ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և մի շարք այլ պետությունների զինված ուժերում գործում են սոցիալական ապահովման արդյունավետ և գործուն մեխանիզմներ, որոնց շնորհիվ զինծառայողների դրամական բավարարումները, բնակարանային ու առողջական սոցիալական երաշխիքները, կենսաթոշակային ապահովումը հետևողականորեն բարելավվող և ըստ զարգացումների լրացվող խթաններ են[10]:

ՀՀ Զինված ուժերի զարգացման արդի փուլում պաշտպանության ոլորտի ղեկավարության վարած հետևողական քաղաքականության շնորհիվ մեծ ուշադրություն է դարձվում սոցիալական զարգացման հարցերին, զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների, զինծառայությունից արձակված քաղաքացիների, զինվորական հաշմանդամների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը: Ներկայումս ՀՀ պաշտպանության ոլորտում սոցիալական պաշտպանության և դրա շրջանակներում իրագործվող ծրագրային միջոցառումների հիմքը «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքն է[11], որը, սակայն, ճանաչվել է բովանդակային առումով մեծապես ուժը կորցրած, իսկ գործող դրույթներն էլ նպատակահարմար է համարվել ներառել ոլորտի այլ համակարգված ակտերում: Բացի այդ, ռազմասոցիալական ոլորտում դեռևս առկա են զգալի թվով չլուծված խնդիրներ, որոնք պայմանավորված են և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ գործոններով:

[10] Տես *В. Н. Старцун.* Зарубежный опыт социальной защиты военнослужащих и граждан, уволенных с военной службы, - проблемы использования в Российской Федерации. «Право и политика», 2005, № 9:

[11] Տես «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ 1993 թ. հունվարի 7-ի հմ. ՀՕ-49 օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docid=119):

Զինվորական ծառայության նկատմամբ հասարակության վերաբերմունքը զգալիորեն պայմանավորված է զինծառայողների նյութական-կենցաղային պայմաններով, սոցիալական և իրավական պաշտպանվածությամբ: Սոցիալական ապահովվածությունը կարելի է ներկայացնել ըստ հետևյալ ուղղությունների. զինծառայողների դրամական ապահովում, կենսաթոշակային ապահովում, բնակարանային ապահովում, կյանքի և առողջության ապահովագրություն, նախկին զինծառայողների սոցիալական հարմարեցում և զբաղվածության ապահովում, ինչպես նաև մի շարք այլ երաշխիքներ: Նշված բաղադրիչների կատարելագործման արդյունք պետք է լինի ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների այն մակարդակի սոցիալական ապահովումը, որը համապատասխանի պետության պաշտպանունակության ապահովման ոլորտում իրականացվող տվյալ տեսակի աշխատանքային գործունեության բարդությանը և կարևորությանը, ինչը աշխատանքի շուկայում զինվորական ծառայությունը կդարձնի շատ ավելի մրցունակ ու գրավիչ:

Պաշտպանության համակարգում սոցիալական քաղաքականության դրույթները ենթակա են ճշգրտման ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական իրադրության, սոցիալական խնդիրների բնույթի, ծավալի և բովանդակության, բանակաշինության զարգացման ընթացքի փոփոխությունների դեպքում, որոնք պետք է արտացոլվեն ՀՀ ռազմական ոլորտի սոցիալական զարգացման վերաբերյալ իրավական ակտերում: Այդ նորմատիվային կարգավորումները հիմք են Զինված ուժերի սոցիալական զարգացման խնդիրների համակողմանի լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների, անհատ ձեռներեցների, բարերարների հետ կառուցողական համագործակցության ծավալման համար:

Կարևոր ուղղություն է ծառայությունից սահմանված կարգով արձակված նախկին զինծառայողների սոցիալական վիճակի հարցը, որն ավելի է բարդացնում քաղաքացիական կյանքին նրանց հարմարման գործընթացը[12], քանի որ պետության առջև ծառացած լուրջ սոցիալական խնդիր լինելուց բացի, անդառնալի ազդեցություն է գործում հասարակությունում զինծառայողի մասնագիտության գրավչության վրա, ինչպես նաև կարող է էական սպառնալիք դառնալ Զինված ուժերի համալրման համար:

Սոցիալական աջակցության գործում կարևոր դեր ունեն բնույթով հասարակական հաստատությունները: Այսպես. Գերմանիայում այդ առաքելությունն իրականացնում է «Բունդեսվերի զինծառայողների միություն» հա-

[12] Տես *С. Леонидов.* Трудоустройство бывших американских военнослужащих. «Зарубежное военное обозрение», 1990, № 5:

սարակական կազմակերպությունը[13], իսկ Ֆրանսիայում գործում են միասնական ծրագրեր իրականացնող բազմաթիվ նմանատիպ կառույցներ՝ «Զինծառայողների փոխօգնության ասոցիացիան», «Զինծառայողների ընտանիքների ասոցիացիան», «Զինվորական դպրոցների (իմա՝ ուսումնական հաստատությունների – *հեղ.*) նախկին շրջանավարտների ասոցիացիան»[14] և այլն: Համեմատական վերլուծության արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ ՀՀ Զինված ուժերում զինծառայողների սոցիալական պաշտպանության գործող համակարգը համարժեք չէ զինվորական ծառայության հետ կապված ռիսկայնությանը:

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻԱՎԱՅՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

Ռազմական արդյունաբերությունն այն հիմքային ուղղությունն է, որի շնորհիվ հնարավոր է ոչ միայն որոշակիորեն փոխհատուցել երկրի պաշտպանության համակարգում կատարված ծախսային ներդրումները, այլև պաշտպանական ենթակառուցվածքները դարձնել տնտեսության համար եկամտաբեր հատված: Հենց այդ տեսլականի հիման վրա ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը շեշտում է, որ «ազգ–բանակի» ներդրմամբ բանակը պետք է դառնա ոչ թե ծանր բեռ, այլ պետության ու տնտեսության շոգեքարշը[15]:

Ռազմաարդյունաբերական ոլորտի զարգացումը կարևոր է Զինված ուժերի մարտունակության մեծացման համար, քանի որ հնարավորություն է տալիս սպառազինության և ռազմական տեխնիկայի նորոգման, արդիականացման, նոր նմուշների մշակման գործում հնարավորինս զերծ մնալու այլ երկրների կամայականություններից և փոխարենը խթանելու հայրենական արդյունաբերական-արտադրական հնարավորությունների զարգացումը: Ըստ այդմ կարևոր է ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրն ապահովել այնպիսի իրավական դաշտով, որը հիմք կստեղծի սպառազինության և ռազմական տեխնիկայի ու ռազմատեխնիկական ունեցվածքի նոր նմուշների մշակումն ու թողարկումը խթանող կայուն ու համակարգված իրավական, տնտեսական, սոցիալական, ինչպես նաև գիտական ու տեխնիկական կադրային քաղաքականության և խիզախ ծրագրերի իրագործման համար: «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ապահովվեց ռազմաարդյունաբերության ոլորտը համակարգող միասնական նորմատիվ իրավական կարգավորումը: Դրանով ռազմաարդյունաբերական համալիրում կարգավորվում են պետական ռազմաարդյունաբերական քա-

[13] Տես «Federal German Armed Forces Association. Documents of Self - concention». Bonn, 1994, PP. 21–39:

[14] Տես «Белая книга по вопросам обороны». Париж, 1994, с. 107:

[15] Տես «Մեր խնդիրն է բանակաշինությունից անցում կատարել դեպի ազգ–բանակի կառուցումը. Վիգեն Սարգսյան»: «armtimes.com», 05.10.2016 (http://armtimes.com/hy/article/94495):

ղաքականության ձևավորման ու իրականացման հարցերում իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, ՀՀ գործադիր մարմինների միջև հարաբերությունները, ինչպես նաև պետության տնտեսական ու ֆինանսական հնարավորությունների շրջանակներում ներհանրապետական արտադրության տեսականու ընդլայնումը՝ ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով պաշտպանական համակարգի ապահովման նպատակով[16]:

Օրենսդրական մակարդակով ռազմաարդյունաբերական համալիրի կայացման հիմքերի ամրագրմամբ հետագա նորմատիվ ենթաօրենսդրական ակտերով հստակեցվեցին օրենքից բխող ու ռազմավարության տեսլականին համապատասխանող ծրագրերն ու կատարվելիքը: Մասնավորապես՝ ՀՀ Նախագահի հրամանագրով հաստատվեցին ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողովի կազմը և կանոնադրությունը, մի մարմնի, որը մշակելու և կառավարություն է ներկայացնելու ՀՀ ռազմաարդյունաբերական քաղաքականության իրագործման և ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ու գործունեության վերաբերյալ առաջարկություններ[17]:

ՀՀ Կառավարությունը հաստատեց ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրի կազմակերպությունների գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման ու վարման կարգը, նրա սուբյեկտների գործունեության վերաբերյալ ամփոփ ցուցակի մշակման և վարման՝ քարտագրման համակարգի ներդրման, ինչպես նաև ռազմաարդյունաբերական համալիրի ամփոփ ցուցակում այդ սուբյեկտների գրանցման և ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող կազմակերպությանը բազայինի կարգավիճակ տալու կարգը[18], ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրի սուբյեկտներին երկա-

[16] Տես «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ 2015 թ. մարտի 25-ի հմ. ՀՕ-16-Ն օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97154):

[17] Տես ՀՀ Նախագահի 2015 թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի կանոնադրությունը և կազմը հաստատելու մասին» հմ. ՆՀ-893-Ն հրամանագիրը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102900):

[18] Տես ՀՀ Կառավարության 2016 թ. սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության ռազմաարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտների վերաբերյալ ամփոփ ցուցակի մշակման և վարման՝ քարտագրման համակարգի ներդրման, ինչպես նաև ռազմաարդյունաբերական համալիրի ամփոփ ցուցակում ռազմաարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտների գրանցման և ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող կազմակերպությանը բազայինի կարգավիճակ տալու կարգը հաստատելու մասին» հմ. 920-Ն որոշումը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=108080), ՀՀ Կառավարության 2016 թ. սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության ռազմաարդյունաբերական համալիրի կազմակերպությունների գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման ու վարման կարգը հաստատելու մասին» հմ. 921-Ն որոշումը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=108083):

րաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պետական աջակցության առաջնահերթությունները և աջակցության ձևերը[19], իսկ ՀՀ վարչապետը հաստատեց ՀՀ ռազմաարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի կանոնադրությունն ու կազմը[20]:

Այս համատեքստում հույժ կարևոր է առաջավոր արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը և տեղայնացման հնարավորությունների պարզումը, քանի որ նպատակ է դրվել, որպեսզի ՌԱՀ-ը, պաշտպանական պատվերի բավարարումից բացի, դառնա հայտնի արտասահմանյան կազմակերպությունների հետ մրցունակ: Ըստ այդմ մեր ռազմավարական ծրագրերը պետք է հետևողականորեն համադասվեն զարգացած երկրների քաղաքականության հետ, բանակցությունների և փորձի փոխանակման բազմապիսի միջոցառումների գործիքարանով ապահովվի համապատասխան ձեռքբերումների ներբերումը հայրենական ռազմական արդյունաբերության ոլորտ: ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության փորձի հաշվառմամբ[21] հարկավոր է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում կազմավորված ռազմաարդյունաբերական կոմիտեի աշխատանքներին զուգահեռաբար զարգացնել ոլորտի գործակալությունների, ձեռնարկությունների գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքները, ինչպես նաև պաշտպանական պատվերի շրջանակներում փոքր և միջին բիզնեսային ծրագրերը:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Զինված ուժերը մշտապես զարգացնելու, ինչպես նաև ՀՀ պետական սահմանի հուսալի պաշտպանությունը կազմակերպելու, ղեկավարումը համակարգելու, մարտական պատրաստականության մակարդակը բարձրացնելու նպատակով բանակաշինության սկզբնական փուլում ձևավորվեց և մինչ օրս շարունակում է զարգանալ պետության պաշտպանական ներուժը: Համաժողովրդական բանակի տեսլականի իրականացման գործում կարևոր նշանակություն ունի նաև ՀՀ պաշտպանության կազմակերպման նկատմամբ

[19] Տես ՀՀ Կառավարության 2016 թ. հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության ռազմաարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտներին երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պետական աջակցության առաջնահերթությունները և աջակցության ձևերը հաստատելու մասին» հմ. 1033-Ն որոշումը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=108708):

[20] Տես ՀՀ Վարչապետի 2016 թ. մարտի 23-ի «Հայաստանի Հանրապետության ռազմաարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի կանոնադրությունը և կազմը հաստատելու մասին» հմ. 199-Ա որոշումը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=104447):

[21] Տես *Д. А. Дегтерев, Е. А. Дегтерева.* Механизмы поддержки малого бизнеса в ВПК: опыт США. «Центр военно-полотических исследований» (http://www.eurasian-defence.ru/?q=node/6520):

քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների կատարելագործման ուղենիշների մշակումը: Դրա հիմնական նպատակը բանակում ժողովրդավարական արժեհամակարգի՝ համապատասխան իրավահարաբերությունների, մարդու իրավունքների պաշտպանության, բարձր իրավագիտակցության ապահովման մեխանիզմների ներդրումն է:

Զինվորական ծառայության բնույթը և պայմանները կանխորոշում են զինծառայողների իրավական կարգավիճակի բովանդակությունը, որը ներառում է զինծառայողների իրավունքները, պարտականությունները, իրավաբանական պատասխանատվությունը, իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման երաշխիքները՝ ՀՀ Սահմանադրության և այլ իրավական ակտերին համապատասխան: Զինծառայողների իրավունքների շարքում հատկապես կարևորվում է ծառայության ընթացքում նրանց անձնական իրավունքների պաշտպանությունը: Թեև անձնական իրավունքները ենթադրում են էական սահմանափակումներ, սակայն այդ իրավունքների իրավական կարգավորման և դրանց իրականացման պրակտիկայի միջև դիտվում է որոշակի անհամապատասխանություն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զինծառայողի անձնական իրավունքների խախտման հիմնական գործոններից են զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրական կանոնների խախտումը, այդ թվում՝ պաշտոնատար անձանց կողմից:

ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի համաձայն՝ հրամանատարը պարտավոր է ապահովել իրեն վստահված զորամասի/ստորաբաժանման զինվորական կարգապահությունը, բարոյահոգեբանական վիճակը և զինվորական ծառայության անվտանգությունը, ներքին կարգուկանոնը, բժշկական, սոցիալ-իրավական և կենցաղային պայմանները[22]: Հետևաբար՝ ոչ կանոնադրական հարաբերությունները զինված ուժերում անձնակազմի նկատմամբ հրամանատարների/պետերի անբավարար հսկողության, հրամանատարների ոչ պատասխանատու վերաբերմունքի, անպատժելիության մթնոլորտի հետևանք են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ազգ–բանակ» գաղափարախոսության շրջանակներում Զինված ուժերում մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության առանձնակի կարևորմամբ պահանջվում է մեթոդական աշխատանքով, բոլոր շահագրգիռ կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ ակտիվ փոխգործության միջոցով ձևավորել այնպիսի միջավայր, որում քաղաքացին քաջ գիտակցի, որ Զինված ուժերում ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կամ ծառայության անցնելու դեպ-

[22] Այդ մասին լրացուցիչ տես «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ 1997 թ. հունվարի 7-ի հմ. ՀՕ-99 օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=364):

քում հնարավորություն կունենա լիարժեք կերպով պաշտպանելու իր իրավունքները և ազատությունները այնպես, ինչպես որ դրանք ամրագրված են միջազգային և ազգային կարևոր իրավաքաղաքական փաստաթղթերում[23]: Բացի այդ, բանակի վարկանիշի և զինվորական ծառայության գրավչության տեսանկյունից կարևորվում է այն հանգամանքը, որ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունը եղել և մնում է Զինված ուժերին առաջադրված խնդիրների հաջողությամբ լուծման անհրաժեշտ նախապայմաններից մեկը: Միայն սոցիալապես ապահով, կրթական-մասնագիտական բարձր որակներ ունեցող, լավ ծառայության համար առաջխաղացման հեռանկարում շահագրգռված, վիրավորվելու կամ զոհվելու պարագայում պետության խնամակալության նկատմամբ վստահություն տածող զինծառայողը կարող է լինել պարտաճանաչ ու կարգապահ, հոգեբանորեն կայուն և մարտունակ:

Պետության պաշտպանության ու նրա Զինված ուժերի մարտունակության պատշաճ մակարդակի ապահովման, ինչպես նաև շուկայական տնտեսության պայմաններում բանակի ամրապնդման կարևոր գրավական է ռազմաարդյունաբերական համալիրի հետևողական զարգացումը՝ թե՛ ՀՀ պաշտպանական պետական պատվերների, թե՛ արտաքին շուկայում մրցունակ լինելու հիմքի վրա:

«Ազգ–բանակ» հայեցակարգի տեսակետից բանակի անցած ճանապարհի ու կայացման փորձի վերաարժեքավորման, աշխարհի առաջատար բանակների չափանիշների հետ նորամշակ չափանիշների բաղդատման, հայրենասիրական գաղափարների շեշտադրման համատեքստում, մեր կարծիքով, օգտակար կլիներ նաև քննարկել հետևյալ առաջարկությունները. *նպատակահարմար է՝*

– նոր Սահմանադրությամբ խորհրդարանական կառավարման մոդելին անցնելու պայմաններում պետության պաշտպանությունը, հետևաբար նաև պաշտպանական-անվտանգային ներուժի ամրապնդումը, որոնք ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիրներ են, կազմակերպել միասնական նորմատիվ-ռազմավարական հիմքի վրա՝ պաշտպանության ոլորտի ժողովրդավարացման և օրենսդրության համակարգման ուղենիշների համադրմամբ (առավելագույնս համակարգված դարձնելով ոլորտի համար հիմնարար նշանակություն ունեցող օրենսդրական ակտերը),

– ծրագրել թե՛ պարտադիր, թե՛ պայմանագրային զինծառայողների շրջանում ծառայության շարժառիթավորումն ապահովող ու խթանող, ինչպես նաև նրանց մասնագիտական աճը և դրա նկատմամբ հետաքրքրությունն ապահովող միջոցառումներ: Տվյալ համատեքստում կարևորվում է նաև կարգապահական քաղաքականության պատշաճ գործնական իրականա-

[23] Տես «Վիգեն Սարգսյան. Բանակին, իրոք, պետք են գործընկերներ»: «Verelq News & Analysis», 21.11.2016 (http://verelq.am/hy/node/13045):

ցումը՝ տույժերի նշանակման լիարժեք հիմնավորվածությամբ ու խրախուսման ու պատժման հստակ չափանիշների ու մեխանիզմների ներդրմամբ, օրինականությամբ, քանի որ դրանք ուղղակիորեն ազդում են ծառայողական առաջխաղացման հնարավորությունների վրա,

– մշակել և հանդես բերել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը միտված պետահիրավական նախաձեռնություններ՝ նպատակաուղղված զինվորական ծառայության բարոյահոգեբանական ու սոցիալ-տնտեսական գրավչության, զինծառայության պատվաբերության և, ըստ այդմ, շարժառիթավորման մեծացմանը,

– մշակել երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքով Զինված ուժերից արձակված քաղաքացիների և զինվորական հաշմանդամների՝ քաղաքացիական կյանքին սոցիալական հարմարման, զբաղվածությանն աջակցման, արտագաղթի կասեցման խնդիրների լուծման համար իրավական և հաստատութենական լուծումներ (օրենսդրական նախաձեռնություններ, պետական ծրագրեր, համապատասխան հիմնարկների ստեղծում, նման ուղղվածությամբ գործող հասարակական կազմակերպությունների ներգրավում և այլն),

– ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման նպատակով նորմատիվային հենքով կանոնակարգել ոլորտում ներդրումային և վարկային ֆոնդերի ստեղծումը, ապահովել հայրենական և արտասահմանյան ներդրողների շահերի պաշտպանությունը, ընդունել տեղական արտադրողների շահերը պաշտպանող և միջազգային իրավական նորմերին չհակասող նորմատիվ իրավական ակտեր, որոնք նաև կնպաստեն արտաքին շուկայում նրա մրցունակության ապահովմանը,

– պետական կառավարման համակարգի մակարդակում փոփոխություններով պայմանավորված՝ ապահովել զինծառայողների քաղաքացիական գիտակցության, մասնավորապես՝ իրավագիտակցության մակարդակի բարձրացում՝ այդ նպատակով մշակված միջոցառումների կազմակերպմամբ: Առանձնակի ուշադրություն դարձնել նրանց ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպման, ծառայության ընթացքում լրացուցիչ հմտությունների ձեռքբերման, հասարակական առումով օգտակար նախասիրությունների ձևավորման և դրանց բավարարման համար հնարավորությունների ստեղծման հարցերին,

– առանձնակի ուշադրություն դարձնել այնպիսի մեխանիզմների ստեղծմանն ու արդյունավետ կիրառմանը, որոնք նպաստեն բանակի հանրային հեղինակության մեծացմանը, արդիականացմանը, ավելի «գրավիչ» դառնալուն, ինչի համար միայն սոցիալական գովազդները, բանակի կարևորությունը բարձրաձայնող կարգախոսները բավարար չեն, և պետք են համապատասխան իրավահաստատութենական մեխանիզմներ: Ըստ այդմ՝ կարևոր

գործոն է ծնողների հետ տարվող աշխատանքի տարածումը ոչ միայն զավակների ծառայության ընթացքում, այլև մինչզորակոչային փուլում:

Որպես ամփոփում կարելի է նշել, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության զարգացման համատեքստում առաջարկվում է պետության և հասարակության կազմակերպման ու կառավարման նոր հայեցակարգ՝ «ազգ–բանակ» համակարգը, որը անհրաժեշտաբար պետք է ստանա իրավական ամրագրում: Նախատեսվող իրավական փոփոխությունները ենթակա են ճշգրտումների ու շտկումների՝ հայեցակարգի մշակման համեմատ: Ըստ այդմ՝ 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների հետևողական իրագործումից բխող՝ պաշտպանության ոլորտի նորմատիվ-իրավական հենքային փոփոխությունների շրջանակներում իրենց ուրույն տեղը պետք է ունենան համաժողովրդական բանակի տեսլականի իրագործմանը միտված ռազմավարական քայլերը, որոնք իրենց արտացոլումն ստանան ոլորտի համար հիմնարար նշանակություն ունեցող նոր, ավելի համակարգված բնույթի իրավական ակտերի կամ գործող օրենսդրական ակտերում կատարվող փոփոխությունների ձևով:

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ, փոխգնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Գիտահետազոտական կենտրոնի ռազմագիտական խմբագրման բաժնի պետ–գլխավոր խմբագրի տեղակալ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայրենիքի պաշտպանության արդյունավետությունն անհամեմատ մեծ է լինում, երբ բնակչությունը վստահում է իր բանակին և համախմբված է երկրի պաշտպանության գաղափարի շուրջ: Բանակի նկատմամբ բնակչության լիարժեք վստահությունն ու աջակցությունը փոխադարձ պատասխանատվության մի յուրահատուկ խթան են դառնում զինծառայողների մարտական պատրաստության մակարդակի բարձրացման և վտանգի դեպքում համախմբման, անձնազոհության դիմելու պատրաստակամության առումով: Տվյալ հանգամանքն ավելի է կարևորվում փոքր տարածք ու բնակչություն ունեցող պետությունների համար:

ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը 2016 թ. հոկտեմբերին Ազգային ժողովում կայացած ելույթում նշել է, որ Կառավարության ծրագրի պաշտպանական հատվածի հիմքում դրված են «ազգ–բանակ» գաղափարը և «հասանելի ռեսուրսներով առավելագույն արդյունք» ռազմավարական սկզբունքը: «Ազգ–բանակ գաղափարախոսությունը ենթադրում է, որ կառավարման բոլոր մարմինները, քաղաքացիական ու հասարակական ուժերը, յուրաքանչյուր ոք պետք է հստակ պատկերացնեն, թե ինչպես են հարաբերվում պաշտպանության գործին: Մեր խնդիրը այս գաղափարախոսությունը ոչ միայն պետական կառավարման հիմքում դնելն է, այլև Հայաստանում և Սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայորդու հասցնելը»[1]: Ըստ այդմ «ազգ–բանակի», այսինքն՝ ժողովրդական բանակի, գաղափարի իրականացումը հնարավորություն կտա ամբողջ հայությանը համախմբելու հայրենիքի պաշտպանության գաղափարի շուրջ:

«Ազգ–բանակ» համակարգը ենթադրում է հայրենիքի համազգային պաշտպանության նպատակով ազգի և բանակի սերտաճում՝ ամբողջ ազգի մշտական պատրաստություն զինվորագրվելու հայրենիքի անկախության ապահովմանը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է դաստիարակվի որպես հայրենիքի զինվոր, այսինքն՝ նրա հետ տարվող բարոյա-

[1] Տես «Պաշտպանական համակարգի հիմքում դրվել է ազգ-բանակ գաղափարը. Վիգեն Սարգսյան»: «ARMENPRESS», 20 հոկտեմբերի 2016 (http://armenpress.am/arm/news/864687/pashtpanakan-hamakargi-himqum-drvel-e-azg-banak-gaxapary.html):

հոգեբանական աշխատանքը պետք է մոտ լինի բանակում իրագործվող համապատասխան աշխատանքին: Այս նկատառումից ելնելով՝ մենք ստորև կուսումնասիրենք բանակում անհրաժեշտ մակարդակով բարոյահոգեբանական վիճակի ապահովման որոշ սկզբունքային հարցեր՝ աչքի առաջ ունենալով «ազգ–բանակ» հայեցակարգի յուրահատկությունները:

2. «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ռազմական պատմությանը հայտնի են շատ օրինակներ, երբ մարտի ելքի վրա վճռորոշ ազդեցություն են ունեցել ոչ թե կենդանի ուժի կամ ռազմական տեխնիկայի քանակական գերակշռությունը, այլ անձնակազմի բարձր մակարդակի ռազմահայրենասիրությունը և բարոյահոգեբանական պատրաստությունը: Նման օրինակներից են Արցախի ազատագրական պայքարը (1988–1994 թթ.), 2016 թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած Չորսօրյա պատերազմը:

Հայտնի է, որ մարտական գործողություններն ուղեկցվում են մարտիկների բացասական հոգեկան ապրումներով՝ տագնապներով, ստրեսներով, վախերով և այլն: Այդ հոգեխոցիչ գործոնների ազդեցության հաղթահարման կամային որակները ձևավորվում են բարձր մակարդակի մարտական պատրաստության և ռազմահայրենասիրական դաստիարակության շնորհիվ:

Ն. Ն. Գոլովինը նշում է, որ մարտում զորքը ֆիզիկական կորուստների հետ կրում է նաև զգալի հոգեծին կորուստներ, որոնք կարող են հանգեցնել մարտիկների հոգեկանի գործունեության խանգարումների, մարտունակության լրիվ կամ մասնակի կորստի: Անգամ ռազմական տեխնիկայի զարգացումը, որը մարտիկին հեռացնում է պայքարից, նրան չի ազատում հոգեկան լարվածությունից, քանի որ վտանգի հոգեխոցիչ ազդեցությունը հանգեցնում է վախի առաջացմանը և, ի վերջո, մարտական գործողություններից խուսափմանը: Վախի զգացումը սահմանափակում է մարդու բանականությունն ու կամքը՝ նրա ամբողջ գործունեությունն ուղղելով իրեն փրկելուն: Ըստ այդմ նրա գիտակցությունը ճնշվում է, և նրա գործունեության շարժառիթները փոխադրվում են անգիտակցականի (բնազդի) ոլորտ[2]:

Մարդկության հազարամյա պատմությունը ապացուցել է, որ մարտիկների՝ վտանգի հաղթահարման, հաղթանակի ձգտման հիմքը հայրենիքի պաշտպանության գաղափարին նվիրվածությունն է: Դրա միշտ արդիական օրինակն է Ավարայրի ճակատամարտը, որում հայ ժողովուրդը վառ կերպով դրսևորեց հանուն հայրենիքի և ինքնության պաշտպանության անձնազոհության դիմելու իր պատրաստակամությունը[3]: Մեր օրերում հայ զինվորի և

[2] Տես *Ն. Ն. Գոլովին,* Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 1–2, 3, 1998, հմ. 1:

[3] Տես «Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին»: Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասյան: Ե., 1957:

ամբողջ ժողովրդի համար հաղթանակի կերտման ու ամբողջ հայության համախմբման առումով յուրահատուկ հոգեբանական խթան էր արցախահայության ֆիզիկական գոյության և ազգային ինքնության պաշտպանությունը:

Հայրենիքի պաշտպանության համար անհրաժեշտ է ոչ միայն ԶՈՒ-ի անձնակազմի մասնագիտական և հոգեբանական պատրաստում զինվորական գործունեությանը, այլև հայրենիքի պաշտպանության շուրջ ամբողջ հասարակության համախմբում: Հենց այդ է ժողովրդական բանակի էությունը, զինծառայողների հաղթանակի ձգտման հիմքը, իսկ դա հնարավոր է, եթե հասարակության մեջ հայրենիքի նկատմամբ սերը և նրա պաշտպանությունը գերակա արժեքներ են: Հայրենասիրական դաստիարակությունն ու կրթությունը հասարակության մեջ հետևողականորեն իրականացվում են բոլոր ժամանակներում: Գարեգին Նժդեհը նշում է, որ հայրենասիրությունը մարդկային առաքինությունների թագն ու պսակն է: Բարոյական հատկությունները միավորող այդ գերագույն առաքինությունն է ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը և նրանց ուժի ու մեծության անսպառ աղբյուրը: Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում՝ դրա պակասի պատճառով[4]:

Հայրենիքի պաշտպանության գաղափարը հիմնված է հայրենասիրության վրա: Դա պետական նշանակություն ունեցող գործ է, որի պատշաճ կազմակերպումը ապահովում է պետության շարունակական զարգացումը և պաշտպանության գաղափարի շուրջ բնակչության համախմբումը՝ նրա մեջ ձևավորելով կայուն բարոյական դիրքորոշումներ: Այսպես. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» մեջ որպես ներքին սպառնալիք նշվում է «բարոյահոգեբանական ու հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը», որի շտկման համար «հասարակության և անհատի բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի ընտանիքում և շարունակվի կրթության բոլոր մակարդակներում»[5]:

ՀՀ-ի դեմ ուղղված սպառնալիքների և մարտահրավերների հաշվառմամբ՝ դրական արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է, որ պետությունը ապահովի ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի շարունակական զարգացումը: Ընդսմին կարևոր են մեր ժողովրդի էթնոհոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ միջազգային փորձի ուսումնասիրումն ու ներբերումը: Այսպես, Հ. Ս. Քոթանջյանը, հիմնվելով հրեա ժողովրդի փորձի ուսումնասիրության վրա, առաջարկում է հայ զինվորի մարտական ոգու ձևավորման մի ամբողջական համակարգ՝ բաղկացած հետևյալ բաղադրիչներից. *գիտական՝* հետազոտություններ և մշակումներ, *մշակութային՝* հայրենասիրական ստեղծագործությունների ստեղծում ու քարոզում, *ուսումնական՝* դասագրքերի ու ձեռնարկների ստեղծում, *զինվորական ծիսական ու հերալդիկ՝* արշավներ մարտական փառքի վայրեր, զինվո-

[4] Տես *Գարեգին Նժդեհ,* Հատընտիր: Ե., 2006, էջ 28–29:

[5] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 21:

րական երդումներ հերոսների արծանների ու ճակատամարտերի հուշահամալիրների մոտ, ներկայիս հերոսների հանդիսավոր պարգևատրումներ, լավագույն զինվորական ստորաբաժանումներին ու երիտասարդական հայրենասիրական կազմակերպություններին հերոսների անունների շնորհում՝ համապատասխան տեղեկատվական ապահովմամբ[6]:

Ինչպես տեսնում ենք, հայրենասիրական դաստիարակության կազմակերպումը շարունակական գործ է և մի քանի սերունդների աշխատանքի արդյունք, ինչի շնորհիվ քաղաքացիները ձեռք են բերում պետականության արժեքների նկատմամբ հիմնականում կայուն դիրքորոշումներ: Դրանք որպես ազդակներ փոխանցվելու են բանակին՝ ձևավորելով նաև հայրենիքի պաշտպանության գաղափարի նկատմամբ կայուն դիրքորոշումներ և հաղթանակի ձգտման մեջ անձնազոհության պատրաստակամություն, հետևաբար նաև՝ ԶՈՒ-ում պատշաճ մակարդակի մարտական պատրաստություն:

Արցախում Չորսօրյա պատերազմը մեր ժողովրդի ռազմահայրենասիրական դաստիարակության շտեմարանը հարստացրեց անձնազոհության, քաջագործության այնպիսի օրինակներով, որոնք հոգեբանական լուրջ խթան են դարձել «ազգ–բանակ» կապի ամրապնդման առումով: Հատկանշական է հերոս կապիտան Արմենակ Ուրֆանյանի անձնական օրինակը. նա այն սպան էր, որի հրամանատարությամբ գործող թե՛ դասակը, թե՛ վաշտը համարվում էին իրենց օրինակելիությամբ լավագույնը: Ուրֆանյանը զինվորներին համարում էր իր տղաները: Հերոս զինվոր Քյարամ Սլոյանի տարեդարձը նշել էին Ուրֆանյանի միջոցներով և մարտական դիրքերում նրա անմիջական մասնակցությամբ[7]: Այնքան մեծ էին զինվոր–սպա փոխադարձ հարգանքն ու սերը, որ հայ սպան իր կյանքի գնով ծածկապաշտպանեց նահանջող զինվորներին, իսկ Քյարամ Սլոյանը՝ չենթարկվելով վիրավոր հրամանատարի հրամանին, մինչև վերջ մնաց նրա կողքին[*]:

3. ԶՈՒ-ՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ, ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԶՈՒ-ի մարտունակության և բարձր մակարդակի մարտական պատրաստության ապահովման համար կարևոր նախապայմաններից մեկը բարձր մակարդակի զինվորական կարգապահությունն է: ԶՈՒ-ում զինծառայողների կարգապահական խախտումները պայմանավորված են ինչպես արտաքին

[6] Ավելի հանգամանորեն տես *Հ. Ս. Քոթանջյան,* Իսրայելի պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքո: «ՀԲ», 2009, հմ. 1–2:

[7] Տես «Քառօրյա պատերազմի հերոսների ապրելու բանաձևը»: «Ա1+», 4 հուլիսի 2016 (http://www.a1plus.am/1469163.html):

[*] 2016 թ. մայիսի 28-ին կապիտան Արմենակ Ուրֆանյանը և շարքային Քյարամ Սլոյանը հետմահու պարգևատրվել են ՀՀ Մարտական խաչ 1-ին աստիճանի շքանշաններով:

գործոններով, այնպես էլ անձնային առանձնահատկություններով: Մասնավորապես՝ զինվորական ծառայությանը բնորոշ են խիստ ենթակարգությունն ու գործողությունների կանոնակարգվածությունը, ամենօրյա մեծ ֆիզիկական և հոգեկան ծանրաբեռնվածությունը, սոցիալական դերերի ընտրության սահմանափակությունը և այլն: Դրանք՝ որպես գործոններ, տարբեր կերպ են ազդում զինծառայողների վարքի վրա. մի զինծառայողի համար դառնում են կարգապահական խախտման պատճառ, իսկ մյուսների համար՝ ո՛չ:

Պարբերաբար նորակոչիկներով համալրվող բանակը երբեմն գործ է ունենում ցածր կրթական մակարդակ ունեցող անձանց հետ, ուստի սպաներից պահանջվում են հոգեբանական և մանկավարժական կայուն գիտելիքներ՝ կարգապահությունը ապահովելու, կարգազանց անձանց հետ անհատական դաստիարակչական աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ ժամկետային զինծառայողների կատարած կարգապահական խախտումների պատճառահետևանքային կապը հասկանալու և ճիշտ հետևություններ անելու համար անհրաժեշտ է վերլուծել նաև մանկության և դեռահասության տարիքում սոցիալականացման ժամանակ բացասական ազդեցություն ունեցած գործոնները, դաստիարակության ընթացքը և ձևը[8]: Մանկապատանեկան տարիքը բնութագրվում է առավել ինտենսիվ սոցիալականացմամբ, բուռն ճանաչողական պրոցեսներով: Այդ ժամանակ է երեխան հիմնականում յուրացնում բարոյական նորմերի համակարգը: Ոչ ճիշտ դաստիարակության դեպքում դեռահասները ձեռք են բերում հակահասարակական գծեր, ինչի համար հիմնական նպաստավոր պայմաններ են համարվում սոցիալապես բարձիթողի վիճակը, ծնողազրկությունը, երեխայի ուսման գործընթացը չվերահսկելը և այլն: Ուստի անհրաժեշտ է դեռահասների և նախազորակոչային տարիքի անձանց շրջանում ուժեղացնել դաստիարակչական աշխատանքը, նրանց ավելի լավ նախապատրաստել զինված ուժերում ծառայությանը, ինչպես նաև զորամասերում կարգազանց վարք ունեցող զինծառայողների նկատմամբ սահմանել հատուկ հրամանատարական հսկողություն:

Անշուշտ, զինվորական կարգապահության ամրապնդման գործում մեծ է հրամանատարի դերը: Մասնագիտական գործունեության մեջ որոշակի անձնային որակների առկայությունը հրամանատարին հնարավորություն է տալիս կոլեկտիվում ձեռք բերելու բացարձակ հեղինակություն և վճռական դեր ունենալու կարգապահության ամրապնդման գործում: Ենթակաների հետ հրամանատարի աշխատանքը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ նա զինվորների շրջանում հեղինակություն է վայելում: Առանց դրա անհնար է ստորադասների անվերապահ ենթարկումը:

[8] Տես *Վ. Ֆ. Кулаков.* Военная психология и педагогика. М., 1998; *Ա. Գ. Караяни, И. В. Сыромятников.* Прикладная военная психология. М., 2006; *Ю. А. Клейберг.* Психология девиантного поведения. М., 2003; *Զ. Դ. Ասատրյան,* Նախազորակոչային տարիքի անձանց հանցավորության որոշ հոգեբանական առումներ: «ՀԲ», 2006, հմ. 1:

Հրամանատարի հեղինակությունը կախված է նաև ենթակաների հետ հարաբերությունները կառուցելու ունակությունից: Հուզականությանը տիրապետել չկարողացող հրամանատարը, որպես կանոն, չի կարող պատշաճ կերպով կազմակերպել իր աշխատանքը: Հրամանատարը պետք է լինի արդարամիտ և ընդգծված հարգանքով վերաբերվի զինվորներին: Այդպիսի մարդիկ կարողանում են օբյեկտիվորեն գնահատել ենթակայի գործողությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև խրախուսել կամ դիտողություն անել: Եվ անգամ ամենափոքր անարդարությունը, որը թույլ է տվել հրամանատարը, հանգեցնում է նրա հեղինակության կորստին:

Կարևոր գործոն է նաև զրուցակցին լսելու հրամանատարի ունակությունը: Պետք է հարգել մյուսների կարծիքը: Եթե հրամանատարը չի տիրապետում խոսքի արվեստին, ապա նա չի կարող կոլեկտիվում ձեռք բերել հեղինակություն: «Մարդս իր խոսքի մեջ դրսևորում է իր հոգու բովանդակությունը: Ոչինչ այնքան հեշտությամբ չի մատնում մեր ապրումները, մտածումները, մեր նկարագիրը, որքան խոսքը: Դա միաժամանակ մեր բարոյական շունչն է»[9]:

Ժողովրդական բանակի կայացումն իր յուրահատուկ պահանջներով, սկզբունքներով ենթադրում է անձնավորության մեջ որակական փոփոխություններ: Այդ նպատակով անհրաժեշտ է ռազմաուսումնական պարապմունքները, հոգեբանամանկավարժական ներգործությունը կազմակերպել ենթակաների սոցիալ-հոգեբանական և անհատական-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ: Հետևաբար զինվորական ստորաբաժանումներում կարգապահական մակարդակի ապահովումը, ստորաբաժանման ներսում կարգազանց վարքի դեմ արդյունավետ պայքարը սպաներից պահանջում են հոգեբանական և մանկավարժական գիտելիքներ:

Զարգացած պետությունների ԶՈՒ-երի կազմակերպական կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ զինվորական առօրյայի ճիշտ կազմակերպման, կարգապահական խախտումների կանխարգելման գործում իրենց ուրույն տեղն ու դերն ունեն զինվորական հոգեբանները, որոնք կարող են հրամանատարական կազմին ցուցաբերել լուրջ աջակցություն ոչ միայն մասնագիտական հոգեբանական ընտրազատման, այլև զինծառայողների շրջանում կարգազանց վարքի կանխարգելման առումով:

Հայտնի է, որ ԶՈՒ-ում բարձր մակարդակի մարտական պատրաստության հասնելու կարևոր գործոններից է անձնակազմի բարոյահոգեբանական ապահովումը (ԲՀԱ): Այն սերտորեն կապված է այլ տեսակների ապահովումների հետ (օպերատիվ, տեխնիկական, թիկունքային, ռազմաբժշկական): ԲՀԱ-ն զորքերի գործունեության այնպիսի միջոցառումների համալիր է, որոնք ուղղված են անձնակազմի մարտական ոգու, կայուն բարոյահոգեբանական վիճակի և բարձր մակարդակի կարգապահության, զինվորական իրավակար-

[9] Տես *Գարեգին Նժդեհ,* Որդիների պայքարը հայրերի դեմ: Ե., 2015, էջ 46 (http://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2012-2015/vordineripayqar_2015.pdf):

գի անվերապահ պահպանմանը, զինվորական կոլեկտիվների ներդաշնակմանը և հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությանը հակազդեցությանը[10]: ԲՀԱ-ի շրջանակներում կատարվող աշխատանքների նպատակն է զինվորական ստորաբաժանումներում անձնակազմի այնպիսի բարոյահոգեբանական վիճակի ստեղծումը, որը դրանց հնարավորություն տա հաջողությամբ կատարելու առաջադրված խնդիրները:

ՁՈՒ-ում ԲՀԱ-ի աշխատանքներն իրականացվում են մի քանի, այդ թվում՝ տեղեկատվական-դաստիարակչական, սոցիալ-իրավական, մշակութաժամանցային ուղղություններով[11]:

Տեղեկատվական-դաստիարակչական աշխատանքները ներառում են դաստիարակության գրեթե բոլոր ուղղությունները, մասնավորապես՝ ռազմամասնագիտական, հայրենասիրական, հոգևոր-բարոյական, իրավական, գեղագիտական, ֆիզիկական: Պատերազմի ժամանակ տեղեկատվական-դաստիարակչական աշխատանքները կրում են ավելի կոնկրետ բնույթ: Դրանցում կարևորվում է մարտական առաջադրանքներ արհեստավարժորեն կատարելու համար ներքին ռեսուրսները մոբիլիզացնելու հմտությունը:

Սոցիալ-իրավական աշխատանքների ոլորտում կարևորվում են այն աշխատանքները, որոնք տարվում են ինչպես զինծառայողների, այնպես էլ նրանց ընտանիքների սոցիալական և իրավական ապահովման ուղղությամբ: Ժողովուրդ-բանակ կապի ամրապնդման շրջանակներում ՀՀ-ում սկսվել է սոցիալական և իրավական երաշխիքների ձևավորման նոր գործընթաց: Մասնավորապես՝ ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը հանրապետության Նախագահին ներկայացրել է ՀՀ Կենտրոնական բանկի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագիրը, որով նախատեսվում է մարտական գործողությունների ընթացքում և մարտական հերթապահություն իրականացնող զինծառայողների զոհվելու կամ հաշմանդամություն ստանալու դեպքում պետական ապահովագրական (ինչպես միանվագ, այնպես էլ ամսական) վճարի զգալի ավելացում[12]:

Խորհրդարանի քննարկմանն է ներկայացվել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում լրացումներ

[10] Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, сс. 807–808:

[11] Այս մասին ավելի հանգամանորեն տես նույն տեղում, *նաև՝ Ա. Զ. Ալեքսանյան,* Զինվորական ստորաբաժանումներում ԲՀԱ-ի գործընթացի կատարելագործումը՝ մարտական կարողությունների զարգացման համատեքստում: «ՀԲ», 2015, հմ. 4:

[12] Տես «Պաշտպանության նախարարը հանրապետության Նախագահին զեկուցել է զոհված և հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցության նոր ծրագրի մեկնարկի մասին», 08.11.2016 (http://www.president.am/hy/press-release/item/2016/11/08/President-Serzh-Sargsyan-meeting-with-Minister-of-Difence-08-11/):

և փոփոխություն կատարելու մասին և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենսդրական նախաձեռնությունը, որն Ազգային ժողովն ընդունել է առաջին ընթերցմամբ[13]:

Մշակութաժամանցային աշխատանքները դիտվում են որպես ԲՀԱ-ի ուրույն բաղադրիչ. կազմակերպվում են տարբեր մշակութային միջոցառումներ (համերգների ունկնդրում, ֆիլմերի դիտում, թանգարանների, հուշահամալիրների այցելություններ, հանդիպումներ մշակութային գործիչների, Արցախյան ազատագրական պայքարի ավագ սերնդի կամավորականների հետ և այլն), ինչը զինծառայողներին ոչ միայն հաղորդակից է դարձնում ազգային մշակութային արժեքներին, հաղթանակների կերտման պատմությանը, այլև նոր ոգևորիչ լիցք է հաղորդում նրանց: Ռուստի հայրենիքի պաշտպանության գաղափարի շուրջ մշակութային գործիչների ու զինծառայողների համախմբումը կարևոր է «ժողովրդական բանակ» գաղափարի կայացման առումով:

Այսպիսով՝ բանակում ԲՀԱ-ի աշխատանքների արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն ԶՈՒ-ի հրամանատարական կազմի համադասված գործունեությամբ, այլև պետական գերատեսչությունների՝ ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված նպատակային աշխատանքներով, ինչի շնորհիվ զինվորի մեջ ձևավորվում ու արմատավորվում են հայրենիքին նվիրվածության, պետության ու նրա ատրիբուտների նկատմամբ հարգալից վերաբերմունքի համար ճիշտ արժեքային կողմնորոշումներ՝ զինծառայողների բարձր մակարդակի մարտական ոգու և վարպետության սերմանման, պատշաճ բարոյահոգեբանական վիճակի ապահովման և, վերջապես, զինվորի՝ որպես լիարժեք քաղաքացու ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմամբ[14]:

Զինծառայողների վրա մարտական իրավիճակի բացասական ազդեցությունը և դրա հաղթահարումը պայմանավորված են ոչ միայն կյանքին անմիջական վտանգ պարունակող առաջադրված խնդիրների բնույթով, այլև զինծառայողի շարժառիթներով, փորձով, գիտելիքների մակարդակով, հմտություններով, նյարդային համակարգի հիմնական հատկություններով, ֆիզիոլոգիական ու հոգեկան կայունությամբ, ռազմաուսումնական պարապմունքների ընթացքում ձեռք բերված հոգեբանական պատրաստությամբ:

Ռազմաուսումնական պարապմունքների միջոցով զինծառայողների շրջանում պետք է սերմանել համերաշխության, կարգապահության, ընկերասիրության, զինվորականին բնորոշ պատվախնդրության գաղափարներ,

[13] Տես «Մեկնարկել է ՀՀ Ազգային ժողովի հերթական քառօրյա նիստերի աշխատանքը», 14.11.2016 (http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=8852&year=2016&month=11&day=14&lang=arm), *նաև՝* «Ազգային ժողովն ավարտել է քառօրյա նիստերի աշխատանքը», 17.11.2016 (http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=8867&year=2016&month=11&day=17&lang=arm):

[14] Տես *Վ. Հ. Մարգարյան,* Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009, էջ 202–219:

նրանք պետք է տիրապետեն վտանգի հաղթահարմանն ուղղված հոգեբանական հնարների և հմտությունների, ձեռք բերեն ինքնուրույն գործունեության ունակություններ և այլն: Այդ ամենը հնարավոր է, եթե զինվորին աջակցում է ոչ միայն հրամանատարը, այլև ամբողջ հասարակությունը:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ազգ–բանակ» համակարգի գործարկման շնորհիվ ոչ միայն հասարակությունն իր ամբողջ մարդկային ու նյութական ռեսուրսներով լիարժեք կերպով կմասնակցի հայրենիքի պաշտպանության գործին, այլև բանակը կդառնա բանիմաց և հայրենասեր քաղաքացու դաստիարակության մի յուրահատուկ դպրոց: Նման համակարգի ներդրումը հնարավորություն կտա հանրային իրազեկման, բանակ-հասարակություն սերտ բազմուղի կապերի և նոր մեխանիզմների ձևավորմամբ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ընդլայնման, կոռուպցիայի և հովանավորչության բացառման միջոցով լուծելու արդարության և թափանցիկության մթնոլորտի ապահովման խնդիրները՝ պաշտպանության ոլորտը դարձնելով պետական կառավարման նկատմամբ նոր մոտեցումների ձևավորման հարթակ[15]:

Այսպիսով՝ «ազգ–բանակ» համակարգի ձևավորման աշխատանքները պետք է համադասի պաշտպանության նախարարությունը՝ որպես գլխավոր ռազմաքաղաքական կառույց, և դրանք պետք է կրեն համապետական հայեցակարգային բնույթ:

Ըստ այդմ առաջարկում ենք.

1. «Ազգ–բանակ» համակարգի ներդրման ընթացքում խորացնել համագործակցությունը կրթական հաստատությունների հետ՝ ԶՈՒ-ի մարտունակության ամրապնդմանն ուղղված աշխատանքներում բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջատար մասնագետների ներգրավմամբ: Նպատակահարմար է մշակել կրթական ծրագիր և հրամանատարական կազմի հետ անցկացնել գժտությունների հոգեբանական կանխարգելման, վախի հաղթահարման, հոգեբանական հնարներին տիրապետման վերաբերյալ ուսումնական պարապմունքներ: Այսօր համացանցը հնարավորություն է տալիս հեռավորության վրա կազմակերպելու դասընթացներ:

2. Ռազմական կրթության բնագավառում միջազգային առաջատար փորձի ներբերումը վճռորոշ նշանակություն ունի ԶՈՒ-ի մարտունակության ամրապնդման առումով: Սպայական կադրերով է մեծապես պայմանավորված ստորաբաժանումներում բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման հաջողությունը: Աշխատանքների կազմակերպման գործում մեծ է հարուստ

[15] Տես «Պաշտպանական համակարգի հիմքում դրվել է ազգ-բանակ գաղափարը. Վիգեն Սարգսյան» (http://armenpress.am/arm/news/864687/pashtpanakan-hamakargi-himqum-drvel-e-azg-banak-gaxapary.html):

գիտելիքներ ունեցող սպաների դերը: Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառում Բոլոնիայի գործընթացին համապատասխանությամբ իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են ՌՈՒՀ-երում արդի մարտահրավերներին համարժեք ժամանակակից կրթական համակարգերի ձևավորմանը[16]: Այսօր մեր խնդիրն է, հետ չմնալով ռազմավարական նշանակություն ունեցող միջազգային գործընթացներից, պահպանել մեր էթնոսին բնորոշ արժեքներն ու ձեռքբերումները, որոնք անցել են ժամանակով փորձություն, միաձուլվել մեր ժողովրդի կյանքի և էության հետ:

3. «Ազգ–բանակ» համակարգի ներդրման և ամրապնդման համատեքստում ՁՈՒ-ում մարտունակության պահպանման և հետագայում դրա մեծացման համար կարևոր է մինչև զորակոչը նախազորակոչիկների հետ ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպումը: Այդ նպատակով պետք է շարունակել բանակ–դպրոց արդեն ձևավորված կապի ամրապնդումը: Կարծում ենք՝ կարևոր է ստեղծել ռազմահայրենասիրական թեմաներով դպրոցների և զորամասերի համատեղ միջոցառումների կազմակերպման ավանդույթ: Գաղտնիք չէ, որ դպրոցներում անհրաժեշտ է բարելավել նախնական զինվորական պատրաստման որակը: Եվ այդ բացը նպատակահարմար է լրացնել բանակ–դպրոց ձևավորվող կապի սերտացման միջոցով՝ զորամասերում աշակերտների մասնակցությամբ որոշ դասընթացներ կազմակերպելու առումով: Նման միջոցառումները զորակոչիկներին ծառայության մասին հետաքրքրող տեղեկություններ տրամադրելու լավագույն առիթը կդառնան, ինչը նպաստավոր կլինի նաև զինվորական ծառայության մասին կայուն դիրքորոշումների ձևավորման առումով:

Կարծում ենք, «ազգ–բանակ» համակարգը պետք է դառնա ազգային գաղափարախոսության ստեղծման հիմնաքարը, քանի որ այն հայրենասիրության, ազգասիրության, հայրենիքի պաշտպանության գաղափարների ամբողջություն է: Այդ գաղափարը կենսական նշանակություն ունի հատկապես ցեղասպանություն ապրած և դրա կրկնության վտանգից դեռ լիովին չձերբազատված հայ ժողովրդի համար: «Հայաստանը իրավունք չունի պարտվելու և ոչ մի պատերազմում. այլևս երբե՛ք Ցեղասպանություն հայ ժողովրդի նկատմամբ»: Այս արտահայտությունը պետք է դառնա հայ զինվորի մարտական ոգու ձևավորման նպատակն ու կարգախոսը[17]:

[16] Այս մասին ավելի հանգամանորեն տես «Կադրային քաղաքականության և ռազմական կրթության կատարելագործում»: «ՀԲ», 2012, հմ. 3:

[17] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* Նշ. աշխ.:

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ

Ա. Գ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան,
Գ. Վ. ԱՂԱՋԱՆՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետությունում «ազգ–բանակ» համակարգի ներդրման գործում էական նշանակություն ունեն տվյալ խնդրի առնչությամբ ՀՀ դաշնակից ու գործընկեր պետությունների դիրքորոշումների գնահատումը և դրա հաշվառմամբ նրանց հետ քննարկումներն ու խորհրդակցումները՝ համապատասխան աջակցություն ստանալու նպատակով: Ընդսմին ռազմավարական նշանակություն ունի արտաքին գործընկերների հետ շփումներում ՀՀ արտաքին քաղաքականության առանցքային սկզբունքի՝ հավասարակշռության պահպանումը:

Բանակաշինության արտաքին քաղաքական չափման տեսական դրույթները ձևակերպված են Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում: Ըստ դոկտրինի՝ ՀՀ ԶՈՒ-ի Միջազգային ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության առաջնահերթ ուղղություններն են ՌԴ-ի, ՀԱՊԿ-ի, ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ ռազմավարական համագործակցությունները[1]: Ռազմատնտեսական և ռազմատեխնիկական ապահովման առնչությամբ դոկտրինը կարևորում է «սեփական գիտատեխնիկական, տեխնոլոգիական և արտադրական հենքով ռազմական արտադրության կազմակերպումը» և «ռազմական նշանակության արտադրանքի առանձին տեսակների մշակման, արտադրության և արտաքին շուկաներ դուրս գալու համար նյութատեխնիկական, տեխնոլոգիական, տեղեկատվական հիմքերի ստեղծումը»[2]: «Ազգ–բանակ» հայեցակարգի ներդրման հիմնական ուղենիշները հարկ է դիտարկել երկու չափումներում՝ «ազգ–բանակը» որպես բանակի ժողովրդավարացում[3] և բանակը որպես տնտեսության լոկոմոտիվ[4]:

---

[1] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 40–41:

[2] Տես նույն տեղում, էջ 40:

[3] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստի ընթացքում», 29 հոկտեմբերի 2016 (http://www.mil.am/hy/news/4466):

ԲԱՆԱԿ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ. ԲԱՆԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՈՒՄ, ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ազգ–բանակ» հայեցակարգի էական ուղղություններից մեկը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի որակական բարձրացումն է, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և դրանց գործունեության թափանցիկության լիարժեք ապահովումը: Այս ոլորտներում ՀՀ հիմնական արտաքին գործընկերներն են Ամերիկայի Միացյալ Նահանգները, ինչպես նաև ՆԱՏՕ-ն, Եվրամիությունը և ԵԱՀԿ-ն:

Ռուսաստանի հետ պահպանելով և զարգացնելով ռազմավարական-դաշնակցային հարաբերություններ՝ Հայաստանը, միևնույն ժամանակ, ռազմավարական գործընկեր է Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որը Հայաստանին մարդասիրական և տեխնիկական օգնություն տրամադրող խոշորագույն դոնորն է[5]: ԱՄՆ-ը էական աջակցություն է ցուցաբերում ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումներին, այդ թվում՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացման, ռազմական կրթության համակարգի բարեփոխումների[6], խաղաղապահական կարողությունների զարգացման ուղղությամբ: ԱՄՆ-ի կառավարության ջանքերով իրականացվում են մի շարք գիտակրթական ծրագրեր[7]: Քանի որ «ազգ–բանակ» հայեցակարգի ներդրումը ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների արտահայտություններից է, նպատակահարմար է ԱՄՆ-ի հետ քննարկել այս հարցում ՀՀ-ին ցուցաբերվելիք նրա հնարավոր աջակցության խնդիրները: Աջակցության կոնկրետ ուղղություններ կարող են լինել մարդու իրավունքների պաշտպանությունը, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մակարդակի բարձրացումը, հասարակությանն սպաների վերաինտեգրման գործընթացին աջակցությունը:

Նշված ոլորտում ՀՀ-ն սերտ համագործակցություն է ծավալել նաև ՆԱՏՕ-ի հետ: Վերջին տասնամյակում ՀՀ–ՆԱՏՕ հարաբերությունները զարգացել են Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում (ԱԳԳԾ)[8]: Հայաստան–ՆԱՏՕ համագործակցության կարևոր առաջ-

[4] Տես «Բանակը պետք է դառնա պետության և տնտեսության շոգեքարշը. Վիգեն Սարգսյան»: «ARMENPRESS», 5 հոկտեմբերի 2016 (https://www.armenpress.am/arm/news/862717/banaky-petq-e-darna-petutyan-ev-tntesutyan-shogeqarshy.html):

[5] Տես «Երկկողմ հարաբերություններ. ԱՄՆ» (http://www.mfa.am/hy/country-by-country/us/):

[6] Տես «Office of Defense Cooperation. About ODC» (https://armenia.usembassy.gov/odc.html):

[7] Տես «Educational exchange» (https://armenia.usembassy.gov/educational_exchange.html):

[8] Տես «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր 2014-2016. Հայաստան» (http://www.mfa.am/u_files/file/NATO/%D4%B1%D5%86%D5%80%D4%B1%D5%8F%

նահերթություններից է՝ աջակցումը պաշտպանության ոլորտում բարեփոխումների անցկացմանը, ՀՀ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ապահովումը և ամրապնդումը[9]: «Ազգ–բանակ» համակարգի ներդրման համատեքստում կարևոր է 2014–2016 թթ. ԱԳԳԾ-ի այն կետը, որով նախատեսվում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և համապատասխան ՀԿ-ների մասնակցությունը պաշտպանության կազմակերպման, անվտանգության ապահովման և բարեփոխումների իրականացման գործին[10]:

ՆԱՏՕ-ի հետ համագործակցության համատեքստում էական նշանակություն ունի ՀՀ–ՆԱՏՕ հաջորդ ԱԳԳԾ-ներում «ազգ–բանակ» համակարգի ներդրմամբ պայմանավորված՝ համագործակցության նոր ծրագրերի ներառումը: «Ազգ-բանակ» հայեցակարգի ներկայացման ժամանակ որպես նորույթ կարելի է օրենսդիրի վերահսկողություն ենթադրող «ժողովրդավարական վերահսկողություն» *(democratic control)*[11] և ոչ զինվորական պաշտոնյաների վերահսկողություն ենթադրող «քաղաքացիական վերահսկողություն» *(civilian control)*[12] տերմիններին զուգահեռաբար օգտագործել «հասարակական վերահսկողություն» *(control by wider society)* տերմինը:

Այս համատեքստում կարևոր քայլ կլինի Զինծառայողների ընտանիքներին աջակցության հիմնադրամի ստեղծումը: Զինված ուժերին վերաբերող խնդիրները մեր հասարակության համար ունեն հատուկ նշանակություն, և բանակն առհասարակ շատ կարևոր ու զգայուն թեմա է, ուստի զինվորի և նրա ընտանիքի համար գումար վճարելու դեպքում հասարակությունը պատասխանատվությամբ կմոտենա խնդրին և կփորձի հետևողական լինել գումարների արդյունավետ ու նպատակային ծախսման համար, ինչն էլ իր հեր-

D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%20%D4%B3%D5%88%D5%90%D4%BE%D4%B8%D5%86%D4%BF%D4%B5%D5%90%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D4%B1%D5%86%20%D4%B3%D5%88%D5%90%D4%BE%D5%88%D5%82%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86%D5%86%D4%B5%D5%90%D4%BB%20%D4%BE%D5%90%D4%B1%D4%B3%D4%BB%D5%90%202014-2016.pdf):

[9] Տես *Hayk Kotanjian.* Seminar on NATO's partnership policy: «Enhancing cooperative security: the added value of NATO'S new Partnership Policy. Key note speech on «Armenia-NATO: new partnership based on cooperative security enhancement». Co-organized by the Ministry of Foreign Affairs of Armenia and NATO International Staff 5-6 November 2012, Yerevan (http://www.elections-ices.org/files/publications/ 288.pdf):

[10] Տես «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր 2014-2016. Հայաստան»:

[11] Տես «What is meant by «democratic control of armed forces»?». Geneva Centre for the Democratic Control of Armed Forces, 2008 (https://www.files.ethz.ch/isn/55845/17_bg_dem_control_armed_forces.pdf):

[12] Տես *Marian Kowalewski.* An Organisational Model of Civilian Control over the Army in Polish Circumstances. Warsaw, 10 June 1997 (http://www.nato.int/acad/ fellow/95-97/kowalews.pdf):

թին կիանգեցնի հասարակական վերահսկողության աստիճանական ուժեղացմանը:

Հայաստանը ակտիվ համագործակցություն է ծավալում նաև ԵԱՀԿ-ի ու ԵՄ-ի հետ:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակն աշխատանքներ է տանում ԵԱՀԿ գործունեության բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, բնապահպանական/տնտեսական և հումանիտար[13]: ԵԱՀԿ-ի հետ համագործակցության և «ազգ–բանակ» համակարգի ներդրման տեսանկյունից կարևոր է 2011 թ. ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի համատեղ ջանքերով «Հայաստանը և ժողովրդավարական վերահսկողությունը զինված ուժերի նկատմամբ. վերլուծություն և հեռանկարներ» ժողովածուի լույսընծայումը: Ժողովածուն ներառում է վերլուծական հոդվածներ անվտանգության ռազմաքաղաքական կողմերի վերաբերյալ ԵԱՀԿ վարքագծի կանոնագրքի, դրա պատմության, դրույթների իրագործման ուղղությամբ Հայաստանի և միջազգային փորձի վերաբերյալ, ինչպես նաև գործնական առաջարկություններ:

Եվրոպական Միության հետ հարաբերությունների զարգացումը ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից է. ներկայումս ավարտին են մոտենում ՀՀ–ԵՄ նոր շրջանակային պայմանագրի ստորագրման հարցով 2015 թ. դեկտեմբերին մեկնարկած բանակցությունները: ԵՄ-ը Հայաստանի հետ հարաբերություններում շեշտը դնում է հիմնականում տնտեսության, արդարադատության, պետական կառավարման ոլորտներում բարեփոխումների իրականացման, ժողովրդավարական հասարակության կայացման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությամբ զբաղվող հաստատությունների ամրապնդման վրա[14]: Լինելով ԵԱՏՄ անդամ պետություն՝ Հայաստանը իր վարած արտաքին քաղաքականությունում առաջնորդվելով փոխլրացման սկզբունքով, շարունակում է Եվրամիության հետ իրականացնել տնտեսական նախաձեռնությունների մշակման ծրագրեր[15]:

ԵՄ-ի ու ԵԱՀԿ-ի հետ հնարավոր համագործակցության շրջանակներում կարելի է նախատեսել ՀՀ ՁՈՒ-ում կանանց դերի կարևորումը: ԵՄ-ի հետ հնարավոր է նախաձեռնել հատուկ համագործակցություն Եվրոպական

[13] Տես «Mandate». «OSCE office in Yerevan» (http://www.osce.org/yerevan/ 105992):

[14] Տես «Armenia and the EU», 11.05.2016 (http://eeas.europa.eu/delegations/armenia/896/armenia-and-the-eu_en):

[15] Տես «Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության հետ քննարկվել են տնտեսական ոլորտում համագործակցության հեռանկարները», 17 նոյեմբերի 2016 (http://www.mineconomy.am/arm/1082/1/news.more.html):

պաշտպանական գործակալության ծրագրի (*Pooling and Sharing*)[16] շրջանակներում, նման ծրագիր ունի նաև ՆԱՏՕ-ն՝ Խելացի պաշտպանության (*Smart Defence*)[17] հայեցակարգը, որի իմաստը փորձի փոխանակումն է:

2015 թ. Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության հռչակագրում նախատեսվում է անվտանգության բնագավառի բարենորոգումների ասպարեզում Արևելյան գործընկերության պետություններին աջակցության հնարավորություն. ‹‹ԵՄ-ը մտադիր է նախաձեռնել անվտանգության հարցերում աջակցություն գործընկեր երկրների իշխանություններին: Աջակցություն ցույց կտրվի քաղաքացիական ու ռազմական ոլորտներում: Այսպիսի համագործակցությունը կարող է ներառել ռազմավարական ու քաղաքական խորհրդատվություններ, հաստատությունների և կարողությունների կայացում, քաղաքացիական հասարակության հետ երկխոսություն ու աջակցություն համայնքային անվտանգության ծրագրերին››[18]: Նման ռազմավարական փաստաթղթում տվյալ կետի առկայությունը ՀՀ-ին հնարավորություն է ընձեռում ԵՄ-ի հետ նոր շրջանակային փաստաթղթի ստորագրման հարցով վարվող բանակցություններում բարձրացնելու «ազգ–բանակ» համակարգի ներդրման համատեքստում փորձագիտական և խորհրդատվական աջակցություն ստանալու հարցը:

ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԼՈԿՈՄՈՏԻՎԻ ՈՒ ԴՐԱ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ

«Ազգ–բանակ» համակարգի էական բաղկացուցիչներից մեկը բանակի՝ որպես տնտեսության լոկոմոտիվի գաղափարն է ու դրա իրականացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը: Այս համատեքստում առաջնային նշանակություն է ստանում ՀՀ-ում ռազմաարդյունաբերության ինտենսիվ զարգացումը:

Ռազմատեխնիկական համագործակցության առումով ՀՀ կարևորագույն արտաքին գործընկերը Ռուսաստանի Դաշնությունն է: ՌԴ-ն ՀՀ-ի հիմնական գործընկերն է ինչպես սպառազինությունների և ռազմական տեխնիկայի արդիականացման, այնպես էլ միջին և բարձր օղակի սպայական կազմի համար մասնագիտական կրթության ապահովման առումով: Դրա հաշվառմամբ նպատակահարմար է ՌԴ-ի հետ խորացնել համագործակցությունը ռազ-

[16] Տես «Pooling & Sharing». «EUROPEAN DEFENCE AGENCY» (https://www.eda.europa.eu/what-we-do/eda-priorities/pooling-and-sharing):

[17] Տես «Smart Defence». «NATO REVIEW magazine» (http://www.nato.int/docu/review/topics/en/Smart-Defence.htm):

[18] Տես «Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions» (SWD(2015) 500 final). Review of the European Neighbourhood Policy. Brussels, 18.11.2015, P. 13 (https://eeas.europa.eu/enp/documents/2015/151118_joint-communication_review-of-the-enp_en.pdf):

մաարդյունաբերական ոլորտում: Որպես նախնական քայլ կարելի է դիտարկել ՀՀ-ում տեղակայված ռուսաստանյան զորակայանի տեխնիկայի վերանորոգման և արդիականացման նպատակով համատեղ ձեռնարկությունների հիմնումը: Զորակայանի տեղակայման վայրում՝ Գյումրի քաղաքում, նման ձեռնարկությունների ստեղծումը հնարավորություն կտա ամրապնդելու զորակայանի և քաղաքի բնակչության սոցիալական կապերը, ինչպես նաև լուծելու Գյումրու և ընդհանրապես Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների մի մասը: Իրանի հետ ՀՀ սահմանի առկայության և խորհրդային/ ռուսաստանյան զենքի սպառման ավանդական շուկաներին՝ արաբական պետություններին, Հայաստանի աշխարհագրական մոտիկության հանգամանքների հաշվառմամբ կարելի է միջնաժամկետ հեռանկարում ՌԴ-ի հետ քննարկել արտահանմանը միտված հայ-ռուսաստանյան համատեղ ռազմաարդյունաբերական ձեռնարկություններ հիմնելու հնարավորությունը: ՌԴ-ի հետ այդ երկկողմ համագործակցությունը կարող է լրացվել նաև ՀԱՊԿ-ի շրջանակներում իրականացվող բազմակողմ համագործակցությամբ: Այս համատեքստում հնարավոր է ըստ անհրաժեշտության կազմակերպության համապատասխան մարմիններում, առաջին հերթին՝ պաշտպանության նախարարների և արտաքին գործերի նախարարների խորհուրդներում, տվյալ հայեցակարգի ներդրման վերաբերյալ քննարկումների ծավալումը:

Հայաստանի ԶՈՒ-ն կարող է դառնալ պետության և հասարակության արդիականացման մոդել՝ բանակում ժամանակակից գիտատար ճյուղերի, հատկապես՝ կիբեռանվտանգության, նորագույն տեխնոլոգիական միջոցների ներդրման դեպքում: Նորամուծությունների սերտ շաղկապումը բանակի հետ, որը նաև «ազգ–բանակ» հայեցակարգի կետերից է, աստիճանաբար պետք է հայ հասարակության մեջ սերմանի բանակի ընկալումը՝ որպես արդիականացման հենասյունի: Այսպիսով՝ «ազգ–բանակ» համակարգի ներդրման տեսանկյունից կարևոր է «բանակը որպես պետության ու հասարակության արդիականացման հենասյուն» կարգախոսի առաջքաշումը: Այս առումով բանակն արտացոլելու է երկրի արդիականացումն ինչպես գիտատեխնիկական զարգացման, այնպես էլ հասարակական նորմերի՝ կանանց իրավունքների, իրավահավասարության պաշտպանության առումով:

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի Հանրապետությունը «ազգ–բանակ» համակարգի ներդրումը կարող է դիտարկել որպես հնարավորություն՝ ՌԴ-ի, ՀԱՊԿ-ի, ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի, ինչպես նաև ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի հետ Հայաստանի միջազգային ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության նոր ձևաչափեր ու մեխանիզմներ մշակելու համար: Միևնույն ժամանակ, ՀՀ հարևան պետությունները կարևոր նշանակություն ունեն ՀՀ անվտանգային միջավայրի ձևավորման համար: Մասնավորապես՝ ՀՀ-ն հարևան Թուրքիայի ու Ադրբեջանի դաշինքը, ինչպես նշված է դոկտրինում,

դիտում է որպես ռազմական անվտանգության համար արտաքին սպառնալիք[19]:

Թուրքիայի Հանրապետությունում բանակն ավանդաբար եղել է արևմտականության ու երկրի արդիականացման հենասյուներից մեկը: 1990-ական թթ., արտաքին ու ներքին վտանգների պայմաններում, խոսվում էր նաև ՁՈՒ-ի վարած «արտաքին քաղաքականության» մասին[20]: 2000-ական թթ. ԵՄ-ին անդամակցության գործընթացում Թուրքիայի ՁՈՒ-ն ենթարկվեց զգալի բարենորոգումների, այսպես ասած՝ «քաղաքացիացվեց»: Այսպես. 2004 թ. ԱԱԽ-ի քարտուղարը և անձնակազմի մեծ մասը դարձան քաղաքացիական[21]: Թեև Հայաստանի ու Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ չկան, սակայն երկու պետություններն էլ ունեն միմյանց ռազմական կարողությունների նկատմամբ հասկանալի հետաքրքրություն: Այս առումով «ազգ–բանակ» համակարգի ներդրումը հետաքրքրություն կներկայացնի նաև Անկարայի համար: Վերջին տասնամյակում այս պետությունում ՁՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական հսկողության մակարդակի բարձրացման և զինվորականների ինքնուրույնության առնչությամբ իշխող կուսակցության անհանգստության հաշվառմամբ նպատակահարմար է Թուրքիային խնդիրը ներկայացնել հենց բանակի քաղաքացիացման տեսանկյունից:

Ադրբեջանի Հանրապետությունը հռչակումից սկսած անընդհատ զինված ու քաղաքական առճակատման մեջ է հայկական երկու պետությունների հետ: Այս համատեքստում հասկանալի է, որ ՀՀ-ում «ազգ–բանակ» համակարգի ներդրումը պետք է առաջ բերի պաշտոնական Բաքվի հետաքրքրությունը և ծնի դրան հակազդեցության պլաններ: Հատկապես սպասելի են միջազգային կառույցներում այս հայեցակարգի վարկաբեկմանն ուղղված Ադրբեջանի քայլերը: Ուստի այս առումով նպատակահարմար է, որ Հայաստանի ՊՆ-ն, ԱԳՆ-ն, ԱԺ-ի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը արտերկրյա գործընկերների շրջանում տանեն բացատրական աշխատանք:

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության հարաբերությունները բարեկամական են, սակայն ռազմական համագործակցությունը սահմանափակ բնույթի է: «Ազգ–բանակ» հայեցակարգի առումով հիշատակման են արժանի Իրանի Բասիջ կոչվող աշխարհազորայինները[22]: Բասիջը կազմված է երիտասարդներից, որոնք կամավորներ են

[19] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», էջ 32:

[20] Տես *Ilhan Uzgel.* Between Praetorianism and Democracy: the Role of the Military in Turkish Foreign Policy (http://dergiler.ankara.edu.tr/dergiler/44/674/8590. pdf):

[21] *Տես Çağrı Yıldırım.* The Role of the Military in Turkish Politics and European Union Membership Negotiations. «Balkanalysis.com» (http://www.balkanalysis.com/turkey/2010/12/02/the-role-of-the-military-in-turkish-politics-and-european-union-membership-negotiations):

[22] Տես *Ali Alfoneh.* Iran Primer: The Basij Resistance Force. «FRONTLINE», 21

դարձել որոշակի պետական ու սոցիալական արտոնությունների դիմաց: Նրանք մասնակցում են ներքին անվտանգության ապահովմանը, սոցիալական ծառայությունների մատուցմանը[23]: Այս առումով հայկական «ազգ–բանակի» հայեցակարգը: Այդուհանդերձ, Իրանի հետ հարաբերություններում հարկ է հաշվի առնել Բասիջ աշխարհազորի իրողությունը՝ ավելորդ ընդհանրացումից խուսափելու և, միևնույն ժամանակ, «ազգ–բանակ» համագործակցության գաղափարը ճիշտ մատուցելու համար:

Հայաստանն ու Վրաստանը տարբեր ինտեգրումային գործընթացներում են և ունեն տարբեր ռազմավարական գերակայություններ: Վրաստանը շարժվում է ՆԱՏՕ-ին ու ԵՄ-ին անդամակցելու ուղիով և իր բանակաշինության համար ընտրել է արևմտյան մոդելը: Այս առումով Վրաստանի համար ընկալելի կլինի «ազգ–բանակ» համակարգի ներդրումը՝ որպես բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ամրապնդման եղանակի: «Ազգ–բանակ» համակարգի ներդրման հարցում, մի կողմից, կարելի է փոխառել վրացական բանակի տարածքային պաշտպանության ռեզերվի ստեղծման փորձը, մյուս կողմից՝ հայկական բանակաշինության մոդելը կարող է դառնալ Հայաստանի ու Վրաստանի միջև պաշտպանության բնագավառում համագործակցության նոր միջոց, հատկապես եթե հաշվի առնենք, որ Վրաստանը կարիք ունի իր բանակի նկատմամբ հասարակական վստահության, որն առկա է Հայաստանում:

Այսպիսով՝ ՀՀ-ում «ազգ–բանակ» համակարգի ներդրումը համահունչ է նրա հավասարակշիռ արտաքին քաղաքականության տրամաբանությանը: Այս համակարգի ներդրմամբ Հայաստանը հնարավորություն կունենա իր դաշնակից և գործընկեր պետությունների հետ հարաբերությունները բարձրացնելու նոր համագործակցային մակարդակի: Տարածաշրջանային անվտանգային դինամիկայի տեսանկյունից «ազգ–բանակ» համակարգը, մեծացնելով ՀՀ պաշտպանունակությունը, հարևան պետությունների հետ հարաբերություններում չի հարուցի լրացուցիչ խոչընդոտներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- «Ազգ–բանակ» համակարգի ներդրումը պահանջում է ՀՀ դաշնակից և գործընկեր պետությունների, ինչպես նաև համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ ակտիվ աշխատանք՝ հայեցակարգի ներդրման հիմնական ուղղությունները ճիշտ ներկայացնելու, ինչպես նաև երկկողմ ու բազմակողմ համագործակցության ձևաչափերով հայեցակարգի ներդրումից բխող գործողություններ ձեռնարկելու համար: Այս համատեքստում լայն հնարավորություններ են ստեղծվում ՀՀ ռազ-

October 2010 (http://www.pbs.org/wgbh/pages/frontline/tehranbureau/2010/10/iran-primer-the-basij-resistance-force.html#ixzz4OvhRgj6k):

[23] Տես նույն տեղում:

մավարական դաշնակից ՌԴ-ի, ՀՀ ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ի, ինչպես նաև ՀԱՊԿ-ի, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի հետ համագործակցության ասպարեզում: Ավելին. «ազգ–բանակ» հայեցակարգը կարող է ստեղծել միջազգային գործընկերների հետ համագործակցության նոր հնարավորություններ:

- Բանակ-հասարակություն կապի ամրապնդման, բանակի ժողովրդավարացման, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մակարդակի բարձրացման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում առկա է ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ երկկողմ և բազմակողմ ձևաչափերում ինտենսիվ համագործակցության ծավալման հնարավորություն:
- «Ազգ–բանակ» համակարգի կերտման համատեքստում ԵՄ-ի ու ԵԱՀԿ-ի հետ համագործակցությամբ կարելի է խթանել ՁՈՒ-ում կանանց դերի մեծացումը, ինչը նաև կծառայի որպես հասարակությունում կնոջ դերի մեծացման օրինակ, ինչը կնպաստի բանակի՝ որպես հասարակության ու պետության արդիականացման հենասյան ընկալման արմատավորմանը:
- Բանակի՝ որպես ՀՀ տնտեսության լոկոմոտիվի գաղափարի իրականացման համատեքստում ստեղծվում է ՀՀ ռազմավարական դաշնակից ՌԴ-ի հետ ռազմատեխնիկական համագործակցություն ծավալելու և որակապես նոր մակարդակի հասցնելու հնարավորություն: Այս առումով նպատակահարմար է շրջանառության մեջ դնել «**բանակը որպես պետության ու հասարակության արդիականացման հենասյուն**» գաղափարը:
- Տարածաշրջանային անվտանգային դինամիկայի տեսանկյունից «ազգ–բանակ» համակարգը, մեծացնելով ՀՀ պաշտպանունակությունը, հարևան պետությունների հետ հարաբերություններում չի հարուցի լրացուցիչ խոչընդոտներ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՆԱԿԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Վ. ԱԹԱՆԵՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան

«Ազգ–բանակը այն վստահությունն է,
որ հասարակությունն ունի դեպի իր զինված ուժերը
և դեպի իր սպայական անձնակազմը»[1]*:*

Պետության կողմից իրականացվող ցանկացած խոշոր քաղաքական նախագիծ կամ անվտանգային քաղաքականություն ունի ներանձնային չափում՝ մարդու կողմից այդ քաղաքականության ըմբռնման, դրան համաձայնելու կամ չհամաձայնելու, աջակցելու, վստահելու կամ չվստահելու մակարդակը[2]: Սա հատկապես վերաբերում է պետության զինված ուժերին, որոնց կողմից իրականացվող առանձնահատուկ անվտանգային գործառույթների արդյունավետության համար անհրաժեշտ է ուղղակիորեն և անուղղակիորեն ներգրավված մարդկային ներուժի համարժեք ընկալումն ու աջակցությունը:

Ազգ–բանակ հարաբերությունների տիրույթում հատկապես կարևորվում է բանակ–հասարակություն արդյունավետ փոխհարաբերությունների ամբողջությունը, ներառյալ՝ բնակչության և, հատկապես՝ թիրախային խմբերի կողմից բանակի գործառույթների համարժեք ընկալումը, ազգային անվտանգության և պետության պաշտպանության գործում մասնակցության անհրաժեշտության գիտակցումն ու բանակաշինությանը մասնակցելու կարողությունը: Բանակ–հասարակություն համագործակցությունը նշանակում է նաև բնակչության լիարժեք տեղեկացվածությունը բանակի՝ որպես սոցիալական ինստիտուտի կողմից իրականացվող գործառույթների մասին, բանակի և զինծառայողների հանդեպ վստահությունն ու մշտական աջակցությունը:

---

[1] «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստի ընթացքում»: ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, 29.10.2016 (http://www.mil.am/hy/news/4466):

[2] Այդ մասին տես, օրինակ, *B. Buzan, O. Weaver, J. de Wilde.* Security: A New Framework for Analysis. London, 1998; *A. Atanesyan.* Human security and securitization: the role of international media in accumulation of public expectations and public protest. «Digest of World Politics of the XXI Century». Annual Review. St. Petersburg State University, School of International Relations, 2014, Vol. 7, PP. 527–542:

Բանակը փակ կառույց է. Ազգ–բանակ հարաբերությունների սերտացմամբ այն չպետք է դառնա բաց և համապատասխանաբար խոցելի, հատկապես հանրային տեղեկատվահաղորդակցական դաշտում: Բանակի՝ որպես սոցիալական ինստիտուտի մասին տեղեկատվության հանրայնացումն ու բանակ–հասարակություն մշտական երկխոսությունը պետք է բխի առկա անվտանգային միջավայրի առանձնահատկություններից, բանակի կողմից իրականացվող գործառույթների բնույթից, Պետական և ծառայողական գաղտնիքի մասին ՀՀ օրենքից և համապատասխան այլ կանոնակարգերից:

Միևնույն ժամանակ, բանակի մասին տեղեկատվությունը պետք է նպաստի բանակի հեղինակության ամրապնդմանն ու զարգացմանը բնակչության տարբեր շերտերի աչքերում, խթանի հասարակության մեջ բանակի հետ կապված դրական սպասումները, ապահովի ազգային ներուժի մշտական հավաքագրվածությունը պետության պաշտպանության համար: Սա ենթադրում է բանակի՝ որպես պետության ենթահամակարգի, ինչպես նաև զինծառայողների հեղինակության ապահովումը, պետության, բանակի և զինծառայողների դրական նպաստավոր կերպարը (իմիջը)* հասարակության լայն շերտերի և հատկապես թիրախային խմբերի (զորակոչային տարիքի երիտասարդներ, զինվորներ և պայմանագրային զինծառայողներ, սպաներ, իրենց ընտանիքների անդամներ, լրագրողներ, և այլն) ընկալումներում:

Պետության կերպարը, իմիջը ներառում է.

1. Քաղաքական համակարգ՝ իշխանության ինստիտուտներով,
2. Քաղաքական առաջնորդներ՝ իրենց անհատական իմիջով,
3. Տնտեսական համակարգ,
4. Մշակութային անցյալ[3]:

Զինված ուժերի հեղինակությունը պետության իմիջի կարևորագույն բաղադրատարրերից է: «Զինված ուժերի իմիջը սահմանվում է որպես զանգվածային գիտակցությունում (ամբողջ հասարակության կամ դրա առանձին մասերի՝ քաղաքացիների առանձին խմբերի՝ թիրախային լսարանների, այդ թվում նաև զինծառայողների) ձևավորված կերպար, որը բնութագրում է դրա արտաքին և ներքին բովանդակությունն ու ձևը, դրա համապատասխանությունը կամ անհամապատասխանությունն իր առաքելությանը, հասարակության և իրավիճակի պահանջներին: ԶՈՒ-ի իմիջը արտացոլում է երեք կերպարներ՝ անցյալի, ընթացիկ և հեռանկարային: **Անցյալի կերպարում** արտացոլվում են այդ պետության և բանակի հերոսական դրվագները, օրինակ է դառնում պատմական ռազմարվեստը, բանակի բարոյահոգեբանական մթնոլորտը ձևավորվում է ռազմական և ազգային որևէ գաղափարախոսության

* Անգլերեն *image*՝ «պատկեր», «կերպար»:

[3] Տես *Ն. Ա. Մելքոնյան,* Երկրի իմիջի կառուցակցման հիմքերը: «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2011, հմ. 133.5:

հիման վրա: Այս իմիջը հաստատուն է և կարծրատիպային: **Ընթացիկ կերպարն** արտացոլում է բանակի ներկա գործունեությունը, մարտունակությունը, զինտեխնիկայով հագեցվածությունը, ընթացող բարեփոխումները: Բանակի ընթացիկ կերպարը միշտ ենթակա է դրականից-բացասական և հակառակ անցմանը, քանի որ այս իմիջը կախված է բանակում տեղի ունեցող իրադարձություններից: Ուստի դրական ընթացիկ իմիջ ձևավորելու և պահպանելու համար պետք է ընդգծվեն կոնկրետ հաղթանակներ և բանակի էֆեկտիվ գործողությունները: **Հեռանկարային իմիջը** զինված ուժերի այն կերպարն է, որն ակնկալվում է սոցիումի կողմից: Հեռանկարային կերպարի կերտումը հիմնվում է բանակի՝ ապագայում հնարավոր կամ պոտենցիալ թշնամուն հաղթելու կարողությունը ցույց տալու միջոցով»[4]:

Բանակի հեղինակությունը ձևավորող հետևյալ հիմնական գործոններն են.

1. **Բանակի գործառութային առանձնահատկություններն ու արդյունավետությունը**, արդի պայմաններում զինված ուժերի կողմից իրականացվող մարտական խնդիրների լուծման մակարդակը:
2. **Տվյալ ազգի անվտանգության պատմության մեջ բանակի ներգրավվածության աստիճանն ու առանձնահատկությունները**, **ժողովրդի ռազմական ավանդույթները,** այդ թվում՝ հերոսական անցյալը, պատմական հիշողության մեջ բանակի տեղը և դերը: Ազգային պատմական հիշողության մեջ բանակի բարձր կարգավիճակի, դրական իմիջի ապահովմանն են նպաստում անցյալի և ներկայի զինվորականներին և ճակատամարտերին նվիրված հուշարձանները, հուշամեդալները, գրքերը, հայրենասիրական երգերը, արվեստի այլ ստեղծագործություններ:
3. **Զինված ուժերի ներկայացուցիչների՝ որպես բանակայինների և քաղաքացիների ինքնընկալման առանձնահատկությունները**: Բանակի իմիջի այս բաղադրիչը ենթադրում է բանակայինների կողմից իրենց ռազմական մասնագիտության մասին ընկալումները, իրենց տեսակետը զինծառայության արդյունավետության, պատվաբերության, վտանգավորության աստիճանի, հեռանկարային և այլ մասնագիտությունների շարքում մրցունակ լինելու մասին: Բացի այդ, բանակի իմիջի վրա էապես անդրադառնում է զինծառայողների սոցիալական ապահովվածության մակարդակը, իրենց և ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանվածությունը:
4. **Զինված ուժերի ներկայացուցիչների մասին հասարակական ընկալումները**, ներառյալ՝ զինվորականների մասնագիտական և բարոյահոգեբանական որակները, համազգեստը, պահելաձևը հանրային

[4] Տես *Ն. Մելքոնյան, Վ. Հոբոսյան,* ԶԼՄ-ների դերը ՀՀ ԶՈՒ-ի իմիջի ձևավորման գործընթացում: «Բանակ և հասարակություն. փողոցային արատավոր բարքերի հետ պայքարի արդիական հիմնախնդիրները», հոդվածների ժողովածու: Խմբ. Գ. Հարությունյան, Ա. Աթանեսյան, Ա. Մկրտիչյան: Ե., 2014, էջ 83–84:

վայրերում: Բանակի իմիջը էապես կախված է այն տեղեկատվությունից, որը բանակի և զինծառայության վերաբերյալ փոխանցում են զինվորականները (այդ թվում՝ զորացրվածները): Այսպես, զորացրվածների մասնակցությունը ամենօրյա կենցաղային հաղորդակցմանը փողոցի, բակի, ընկերական շրջապատի մակարդակում որոշ դեպքերում ասեկոսեների, բամբասանքների, թյուրընկալման տեղիք է տալիս և սխալ տպավորություն է ստեղծում բանակի իրական պատկերի վերաբերյալ, ինչը հետագայում բացասաբար է անդրադառնում զորակոչային տարիքի երիտասարդների և իրենց հարազատների վարքի վրա՝ բանակի հետ իրենց առնչությունների հետ կապված:

5. **Զինված ուժերի հրամկազմի ներկայացուցիչները**, որոնց անհրաժեշտ է բանակի իմիջը պայմանավորելու տեսանկյունից առանձնացնել մյուս զինծառայողներից՝ հաշվի առնելով իրենց, այդ թվում, առաջին հերթին՝ գերագույն գլխավոր հրամանատարի՝ հրապարակային գործիչ լինելը: Տվյալ անձանց մասնակցությունը պետության քաղաքական և տնտեսական կյանքին արդյունավետ լինելու դեպքում նպաստում է բանակի բարձր վարկանիշի ապահովմանն ու, մյուս կողմից, այդ անձանց ներգրավումը տարաբնույթ երկիմաստ գործարքներում, անարդյունավետ լինելը քաղաքական ասպարեզում կարող է բացասաբար անդրադառնալ բանակի իմիջի վրա:
6. **ԶՈՒ-ում զինծառայության կազմակերպման որակը՝** կարգապահության, կանոնակարգվածության, միասնականության, արդյունավետության, առաջնորդության և զարգացման ապահովումը, տարաբնույթ շեղումների կանխումն ու ծագող հիմնախնդիրների արդյունավետ հաղթահարումը:
7. **Ռազմական տեխնիկան**, դրա արդյունավետ կիրառումը մարտական խնդիրների լուծման գործում, տեխնիկայի պարբերական արդիականացումն ու ցուցադրումը շքերթներին:

Հաշվի առնելով ՀՀ և ԼՂՀ առանձնահատուկ անվտանգային միջավայրը, որում մշտապես առկա են ռազմական, ինչպես նաև հարակից բնույթի սպառնալիքներ, պետք է մշտապես պատրաստ լինել ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից սերնդի պատերազմներին, որոնք ենթադրում են մարդկային ներուժի և կամային հատկությունների կարևորումը: Ինչպես ցույց տվեցին 2016 թ. ապրիլի 2-5-ը ԼՂՀ-ի հանդեպ Ադրբեջանի ռազմական ոտնձգությունների դեմն առած հայկական զինված ուժերի և կամավորականների գործողությունները, կամային հատկությունները, հերոսությունն ու մարդկային ներուժը առանձին դեպքերում անգամ փոխհատուցել է տեխնիկական խնդիրների առկայությունը և ապահովել պաշտպանության արդյունավետությունը: 2016 թ. «Քառօրյա պատերազմի» դասերը վկայում են բանակաշինության գործում դեռևս առկա բացթողումների, այդ թվում՝ բանակում առկա կոռուպցիոն ռիսկերի, պաշտպանական նպատակների համար անհրաժեշտ ռեսուրսների սակավության և, հնարավոր է՝ պաշտոնական դիրքի չարաշահմամբ դրանց անտեղի օգտագործման մասին:

Բոլոր պետությունների **զինված ուժերի իմիջի կարևորագույն տարրն է սպայի կերպարը**, որի ամրապնդումը նպաստում է ԶՈՒ-ի համարժեք ընկալմանն ինչպես հասարակության, այնպես էլ իրենց՝ զինծառայողների կողմից: Ինչպես նշել է, բնութագրելով «Ազգ–բանակ» հայեցակարգային ուղենիշները, ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը, «Դա այն հասարակությունն է, որում սպան ամենահարգված և մեծարված քաղաքացին է: Բայց նաև այն սպան է, ով բանիմացության, առաջնորդության, ինքնավստահության, բայց երբեք ոչ ինքնագոհության մարմնացում է»[5]: Սպան մշտապես դրսևորել է բանակի գործառութային հատկությունների մեծ մասը՝ մարտունակությունը, արիությունը, ազնվությունը, կազմակերպական ձիրքը: Սպան իր բարոյահոգեբանական որակներով և արտաքին կերպարով ներկայացրել է բանակը, եղել ԶՈՒ-ի հավաքական կերպարը:

Սպայի կերպարը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝

1. **Տվյալ հասարակության մեջ տարածված և իշխող արժեքներով և բարքերով**, այդ թվում՝ հակաարժեքներով, որոնք բացասաբար են ազդում հերոսական մղման, զինակիցների հետ փոխհարաբերությունների, մարտական պատրաստվածության, զինվորական կոլեկտիվի ղեկավարման հնարավորությունների վրա, և այլն:
2. **Սոցիալ-տնտեսական պայմաններով**: Պետության և հասարակության կողմից բանակին ցուցադրվող աջակցության որակը պայմանավորված է պետության տնտեսական վիճակով, ներուժով և ռեսուրսներով, այդ թվում՝ ֆինանսական, որոնք հատկացվում են զինվորականների և իրենց ընտանիքների սոցիալ-տնտեսական ապահովվածությանը:
3. **Ռազմական կրթության մակարդակով և հնարավորություններով**: Սպաների համապատասխան որակյալ կրթության և վերապատրաստումների իրականացման, զինծառայության ընթացքում ինքնակրթության խթանման, զորավարժությունների պարբերական իրականացման միջոցով ապահովվում է սպայական անձնակազմի մարտունակությունն ու պատրաստվածությունը: Մինչդեռ, տարբեր պետությունների քաղաքական և ռազմական ղեկավարության կողմից սպայական անձնակազմի կրթության և մշտապես մարտունակ վիճակում լինելու համար համապատասխան պայմանների ապահովման հիմնախնդիրը տարբեր կերպ է ընկալվում և լուծվում, ինչն ուղղակիորեն պայմանավորում է բանակների ակնհայտ տարբերությունը:
4. **Ռազմական ավանդույթներով և պատմական հիշողությամբ**: Տվյալ ժողովրդի մարտական անցյալը, պատերազմների հետ կապված պատմական իրողությունները, հատկապես հաղթանակները և այդ մասին հավաքական (կոլեկտիվ) հիշողությունը սպայի ձևավորման կարևորագույն գործոններից են, որոնց շնորհիվ սպայի զինծառայությունը

[5] «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստի ընթացքում» (http://www.mil.am/hy/news/4466):

դառնում է նպատակադրված, իմաստավորված, ազգանպաստ և արդյունավետ:

ԽՍՀՄ փլուզումից հետո ազգային բանակների ձևավորման գործընթացը տեղի է ունեցել հետխորհրդային անցումային հասարակություններում նոր արժեհամակարգի, սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների ձևավորման պայմաններում, որոնք հենված էին շուկայական տնտեսության, կապիտալիզմի, ռացիոնալության, սպառողականության մշակույթների տարրերի ներարկման և դրանց յուրովի ընկալման վրա: Որպես հետևանք, սպայի կերպարն այսօր կապակցվում է ոչ միայն բարձր արժեքների, այլ նաև առանձին դեպքերում՝ հակաարժեքների հետ*:

Բանակի իմիջի փոխակերպման վրա ազդում են ոչ միայն ներկա, այլ նաև նախկին զինծառայողները, որոնք այս կամ այն չափով ներգրավված են քաղաքացիական պաշտոններում և հարմարված քաղաքացիական կյանքին: Նախկին զինծառայողների սոցիալական հարմարման և պաշտպանվածության հիմնախնդիրները բազմիցս սոցիալական քաղաքականության, ինչպես նաև բանակի բարեփոխումների առարկան են դարձել: Միևնույն ժամանակ, զորացրվելուց հետո նախկին զինծառայողներն օբյեկտիվորեն շարունակում են բախվել հասարակության մեջ հարմարվելու, նոր աշխատատեղեր փնտրելու, նոր սոցիալական կապեր և հարաբերություններ հաստատելու հիմնախնդիրներին**:

---

* Ինչպես, օրինակ, նշում են ռուսաստանցի մասնագետները, «Գլխավոր դատախազության տվյալներով, այսօր յուրաքանչյուր չորրորդ հանցագործությունը Ռուսաստանի Դաշնության զինված ուժերում կատարվում է սպաների կողմից: Սա վերջին հինգ տարիների ամենաբարձր ցուցանիշն է: Ընդ որում, ավագ սպաները՝ գնդապետներն ու գեներալները, հիմնականում մասնակցում էին կոռուպցիոն հանցագործություններին: Միայն 2008 թ. կոռուպցիոն հանցագործությունների համար քրեական պատասխանատվության է ենթարկվել ավելի քան 500 սպա, այդ թվում՝ 350-ից ավելի ավագ սպա, որոնցից 117-ը՝ զորամասի հրամանատար և 20-ը՝ գեներալ: Սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների վերլուծության համաձայն՝ արդի պայմաններում զորամասերի հրամանատար-սպաների էական մասի համար բնութագրական է զինվորական կոլեկտիվներում իրենց հեղինակությունը չապահովող իմիջը: Սպաների քանակը, որոնք ունեն առավելագույն գործառնական պահանջված իմիջը («օպտիմալ»), զորակոչային սկզբունքով համալրվող զորամասերում հետազոտության իրականացման պահին անբավարար էր՝ մոտ 50 %: Սա զգալիորեն նվազեցնում է զինվորական ստորաբաժանման կառավարման արդյունավետությունը: Այս հանգամանքը պայմանավորում է ժամանակակից սպա-ղեկավարների իմիջի կատարելագործմանն ուղղված կառավարչական որոշումների մշակման և իրացման անհրաժեշտությունը» (տես *Д. С. Крутилин.* Имидж офицера-руководителя современных Вооруженных Сил Российской Федерации. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата социологических наук. М., 2011 (http://www.dissercat.com/content/imidzh-ofitsera-rukovoditelya-sovremennykh-vooruzhennykh-sil-rossiiskoi-federatsii)):

** Անգամ Ղարաբաղյան պատերազմի ազատամարտիկներից ոմանք, լինելով հաղթող կողմի ներկայացուցիչներ, իրենց հետպատերազմյան կյանքում բախվել են գործազրկության, սոցիալական անապահով կյանքի, մոռացվածության հիմնախնդիրներին (տես «ՀՀ ՊՆ հայտարարությունը՝ ազատամարտիկների բողոքի ելույթների վերաբերյալ»: «ՌԱԶՄ.info», 31 հուլիսի 2013 (http://razm.info/16768)):

Նախկին զինծառայողների, վետերանների կերպարը, դերը և հեղինակությունը հասարակության մեջ վկայում են պետության և հասարակության վերաբերմունքի մասին նրանց հանդեպ, ովքեր ծառայել են հայրենիքին: Համապատասխանաբար, սոցիալական այս խմբի անապահով վիճակը, արտաքին անբարվոք տեսքն ու կարիքները ի ցույց են դնում բանակի հանդեպ պետության և հասարակության անփույթ, անշնորհակալ վերաբերմունքը՝ խոչընդոտելով գալիք սերունդների պատրաստակամությունն ու ցանկությունը՝ ծառայելու իրենց պետության զինված ուժերում:

Կարելի է առանձնացնել բանակի և զինծառայողների իմիջի ձևավորման և փոփոխման վրա ազդող հետևյալ տեղեկատվահաղորդակցական գործոնները.

- **Բանակի կողմից սեփական նախաձեռնությամբ և միջոցներով (նաև՝ բանակի հետ պաշտոնապես համագործակցող լրատվամիջոցներով) տարածվող տեղեկատվությունը**: Որպես ռազմական իրադարձությունների և զինծառայության հետ առնչվող գործընթացների առաջնային աղբյուր՝ պաշտպանական ոլորտի համապատասխան գերատեսչություններն իրենց տեղեկատվական միջոցներով այս կամ այն չափով իրականացնում են հասարակայնության հետ կապերն ու համագործակցությունը հասարակության լայն շերտերի, հատկապես՝ թիրախային խմբերի (զորակոչային տարիքի երիտասարդներ, զինծառայողների ընտանիքներ, հարազատներ) հետ[6]: ՀՀ-ում բանակի կողմից իրականացվող տեղեկատվահաղորդակցական գործառույթը առաջնորդվում է ՀՀ ՊՆ Հանրային իրազեկման հայեցակարգով[7]: Անշուշտ, բանակի կողմից սեփական իմիջի ապահովման համար տեղեկատվական գործընթացներ իրականացնելուց զատ անհրաժեշտ է պետական և հասարակական այլ մարմինների աջակցող գործունեությունը, հատկապես՝ պատերազմական պայմաններում, երբ հակառակորդի կողմից ներդրվող տեղեկատվական պատերազմի գործիքարանին անհրաժեշտ է հակադրել սեփական զինված ուժերին աջակցող, համապարփակ, բազմաբնույթ և տարբեր աղբյուրներից իրականացվող տեղեկատվաքարոզչական համակարգը:
- **Բանակի (այդ թվում՝ առանձին ստորաբաժանումների, կառուցվածքային օղակների, առանձին զինծառայողների) հետ ուղղակի և անուղղակի առնչության անհատական փորձը:** Այսպես, զորակոչված և զինծառայությունն անցնող երիտասարդը ծառայության ընթացքում մասնակ-

[6] Տես, օրինակ, «Զինուժ» լրատվական-տեղեկատվական հաղորդաշարը (http://www.1tv.am/hy/program/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%B8%D6%82%D5%AA/9), ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը (http://www.mil.am/hy/institutions/60/p/journal_66), «Հայ զինվոր» ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնաթերթը (http://www.hayzinvor.am/):

[7] Տես «ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգ», 9 դեկտեմբերի 2010: ՀՀ ՊՆ պաշտոնական կայք (http://www.mil.am/hy/68/70/165):

ցում է բանակի առօրյային, զինվորական կոլեկտիվի գործունեությանը, կենցաղին, ծառայողական և մարտական խնդիրների լուծմանը, ձեռք է բերում նոր արժեքներ և սկզբունքներ: Արձակուրդների ժամանակ և ապա՝ զորացրվելուց հետո նա, վերադառնալով տուն, պատմում է իր սոցիալական միջավայրում (ընտանիք, բակ, դասընկերներ, հարազատներ, և այլն) բանակի և զինծառայության մասին, մասամբ՝ օբյեկտիվ փորձի, մասամբ՝ սուբյեկտիվ-անհատական ապրումների հիման վրա՝ դրանով իսկ ձևավորելով բանակի և զինծառայության վերաբերյալ պատկերացումներ և գնահատականներ իր միջավայրում, այսինքն՝ ազդելով բանակի իմիջի վրա: Բանակի իմիջի վերաբերյալ ձևավորվող անհատական պատկերացումներն ու ընկալումները ժամանակի ընթացքում դառնում են բանակի իմիջի բաղկացուցիչ մասը:

- **Ընտանեկան պատմություններ բանակի, պատերազմի, զինծառայողների մասին**: Գրեթե յուրաքանչյուր ընտանիք իր պատմության մեջ ունի հիշողություններ իր նախնիների կամ ներկաների պատերազմական փորձի, ռազմական գործողություններին մասնակցության, զինվորական լինելու վերաբերյալ: Ընտանեկան պատմությունները կարևորագույն գործոններից են՝ երեխաների և պատանիների սոցիալականացման, այն է՝ հասարակության մեջ կողմնորոշվելու, հարմարվելու, հիմնարար արժեքների յուրացման և կրկնօրինակման համար:

- **Կրթական համակարգը**: Բացի վերոնշյալ գործոններից, բանակի մասին մարդկանց, հատկապես՝ երիտասարդների պատկերացումները ձևավորվում են նաև ուսման ընթացքում: Բուհական և հատկապես դպրոցական ուսումնական ծրագրերում ազգային կրթության ապահովումը, ազգային արժեքների տարածումը, հայրենասիրության, փոխաջակցության, միասնականության և այլ արժեքների սերմանումը կարևորագույն խնդիրներից են, որոնց բացակայությունը կամ վիճարկումը ուղղակի կամ աննուղղակի կերպով անդրադառնում է բանակի մարտունակության, դրանով իսկ՝ պետության և ժողովրդի անվտանգության վրա: Միևնույն ժամանակ, **դպրոցական լիարժեք կրթության և «Ազգ–բանակ» համատեքստում ակտիվ և կարող քաղաքացիների դաստիարակության կարևորումը կրթական ոլորտում դեռևս գրեթե բացակայում է**: Արդի Հայաստանում, ի տարբերություն կրթյալ ազգ լինելու մեր ավանդույթներին, դպրոցական կրթությունը գրեթե չի ապահովում առողջ ապրելակերպ ունեցող, ակտիվ և լավատես քաղաքացիների պատրաստումը: Հայրենասիրության քարոզումը դպրոցներում միշտ չէ, որ բացատրվում է և արմատավորվում աշակերտների մեջ, այն հաճախ ունենում է պաթետիկ և չփաստարկված բնույթ: Նման մարդկային ռեսուրսը գրեթե չի համապատասխանում «Ազգ–բանակ» միասնական մարտունակ և ակտիվ համակարգի արդյունավետությանը: Մինչդեռ, հասարակության ենթակառույցները և սոցիալական բոլոր ինստիտուտները այս կամ այն

չափով պարտավոր են աջակցել պետության զինված ուժերին՝ ապահովելու սեփական գործունեության հնարավորությունը խաղաղության և հնարավոր սպառնալիքների պայմաններում:

- **Բանակին և զինծառայողներին նվիրված պետական տոները, միջոցառումները**: Յուրաքանչյուր ազգ իր պատմության մեջ ունի հաղթանակներ և պարտություններ, սակայն հենց հաղթանակի օրերի մասին կոլեկտիվ հիշողությունն է նպաստում ազգային ներուժի միավորմանն ու սեփական դրական իմիջի ձևավորմանը: Այս կամ այն ռազմական հաղթանակի օրվա՝ որպես պետական տոնի առկայությունն օրացույցում նպաստում է բանակի դրական իմիջի կայացմանն ու փոխանցմանը սերնդե սերունդ:
- **Բանակի և զինծառայողների մասին տեղեկատվությունը ԶԼՄ-ներում:** ԶԼՄ-ների կողմից բանակի և զինծառայողների իմիջի ձևավորման և արտահայտման գործոնը կարող է նպաստել բանակի գործառնական արդյունավետության ու հասարակության կողմից բանակի համարժեք ընկալմանն ու, հակառակը՝ ԶԼՄ-ների կողմից բանակի վերաբերյալ տեղեկատվության մատուցումը կարող է վնասել զինծառայողների կողմից իրենց պարտականությունների լիարժեք կատարմանը, թյուր պատկերացում ստեղծել բանակի՝ որպես սոցիալական ինստիտուտի մասին: Պետության անվտանգային ոլորտի վերաբերյալ յուրաքանչյուր տեղեկատվություն ԶԼՄ-ներում պետք է համապատասխանի տվյալ պետության օրենսդրությանը, ազգային շահերին և լրագրողական էթիկայի կանոններին:
- **Բանակի մասին տեղեկատվությունն ու քննարկումները համացանցում:** Համացանցը, լինելով հարաբերականորեն ազատ և քիչ վերահսկվող տեղեկատվական հարթակ, համակրելի է հատկապես երիտասարդության և միջին տարիքի լսարանի համար: Ինչ վերաբերում է բանակին և զինծառայողներին, ապա նրանց կերպարը համացանցում ձևավորվում է սոցիալական ցանցերի, on-line մամուլի, բանակին ուղղակի և անուղղակի կերպով նվիրված կայքէջերի, համացանցային քննարկումների և այլնի միջոցով: Համացանցային տեղեկատվահաղորդակցական գործընթացների օգտագործումը բանակի և զինծառայողների դրական իմիջի ձևավորման և տարածման համար հեռանկարային է:
- **Բանակի և զինծառայության սոցիալական գովազդը:** Սոցիալական գովազդը սոցիալական ինստիտուտների և հարաբերությունների գովազդ է՝ ուղղված հասարակության մեջ այս կամ այն վարքային նորմի, սոցիալական վարքագծի, սոցիալական հարաբերությունները կարգավորող ինստիտուտի մասին տեղեկատվության տարածմանն ու դրական վարքի խրախուսմանը: Սոցիալական գովազդի մասին խոսելիս հիմնականում կարևորվում է դրական արժեքների քարոզումը, որոնք կնպաստեն սոցիալական հարաբերությունների արդյունավետության բարձրաց-

մանը[8]: Բանակի և զինծառայության սոցիալական գովազդն անհրաժեշտ է ոչ միայն պատերազմի և ճգնաժամային իրավիճակների ժամանակ, երբ առավել հրատապ են դառնում բանակի և հասարակության սերտաճումն ու հասարակության բոլոր ուժերի ուղղումը բանակի գործառույթներին աջակցելուն, այլև խաղաղ պայմաններում[9]:

ՀՀ ժամանակակից պատմության ընթացքում հայոց բանակը մշտապես ունեցել է կարևորագույն գործառնական նշանակություն, ուստի և ապահովել է իր բարձր վարկանիշն ու դրական համբավն առաջին հերթին իր գործառույթների իրականացման արդյունավետության շնորհիվ: Ինչպես վկայում են սոցիոլոգիական հարցումները, Հայոց բանակի վարկանիշը պետական մարմինների համակարգում մշտապես եղել է ամենաբարձրերից մեկը և զիջել միայն եկեղեցուն[10], իսկ 2015 թ-ի դրությամբ անգամ գերազանցել է եկեղեցու հեղինակությանը (տես գծապատկեր 1):

Գծապատկեր 1

ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՔ ՎՍՏԱՀՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (2015)[11]



[8] Տես, օրինակ, *А. Ковалёва.* Социальная реклама как объект социологического анализа. «Ученые записки ЗабГГПУ», 2012, № 4; *А. Р. Деревянко, О. С. Зыбин.* Социальная реклама как вид коммуникационной деятельности в современных условиях. «Современные исследования социальных проблем» (электронный научный журнал), 2012, № 7(15) (http://sisp.nkras.ru/e-ru/issues/2012/7/zybin.pdf):

[9] Այդ մասին առավել հանգամանորեն տես *Ա. Վ. Աթանեսյան, Ա. Ե. Մկրտիչյան, Ա. Ռ. Ավետիսյան, Ա. Ռ. Սահակյան, Վ. Հ. Մարգարյան, Մ. Ա. Մախալկինա,* Բանակ և հասարակություն. ժամանակակից հիմնախնդիրներ: Ուսումնական ձեռնարկ բուհերի և ռազմական ուսումնական հաստատությունների համար: Ե., 2013 էջ 280–281:

[10] Տես, օրինակ, «Caucasus Barometer (CB). Public Perceptions on Political, Social, and Economic issues in South Caucasus Countries. Some findings from the CRRC 2013 data». CRRC Armenia. Yerevan, 18 April 2014 (http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2013/CB2013_public%20presentation_English.pdf):

[11] Տես «Կովկասյան Բարոմետր (ԿԲ) 2015: Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը (2015 թ. Նոյեմբերի դրությամբ)»: Ե., 15 ապրիլի 2016 (http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2015/CRRC-Armenia_CB2015_Presentation.pdf):

Միևնույն ժամանակ, տարբեր տարիներին բանակի հեղինակության տատանումները հիմնականում բանակում ժամանակ առ ժամանակ ծագող միջանձնային կոնֆլիկտների, զինվորների կողմից կատարվող սպանությունների և ինքնասպանությունների միջադեպերի, ինչպես նաև բանակային կյանքի մասին հասարակության մեջ շրջանառվող և հաճախ իրականությանը չհամապատասխանող ասեկոսեների հետևանք են (տես գծապատկեր 2).

Գծապատկեր 2

ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՔ ՎՍՏԱՀՈՒՄ ԲԱՆԱԿԻՆ (2010-2015)[12]



Կարելի է նկատել պետական, հատկապես իշխանության ինստիտուտների հեղինակության ցածր լինելը, ինչն ուղղակիորեն և բացասաբար է անդրադառնում ամբողջ պետության հեղինակության վրա և հարվածում նաև բանակի գործառնմանը: Պետության անվտանգության, այդ թվում՝ ռազմական անվտանգության ոլորտում ընդունվող որոշումների էական մասը քաղաքական բնույթի է, կապված է հասարակության մեջ ցածր վստահություն վայելող անձանց և օղակների հետ և համապատասխանաբար կարող է բացասաբար ընկալվել ինչպես բանակի անձնակազմի, այնպես էլ հասարակության այլ խմբերի և խավերի կողմից՝ բացասաբար անդրադառնալով բանակի մարտունակության վրա:

Բանակի բարձր հեղինակությունը, մի կողմից, և իշխանության երեք ճյուղերի մարմինների և ներկայացուցիչների ցածր համբավը՝ մյուս, վկայում են նաև այն մասին, որ «Հայոց բանակ» ասելով՝ բնակչությունը հասկանում է հենց հասարակության այն շերտերին, որոնք ուղղակիորեն ներգրավված են զինծառայության մեջ՝ իրենց բարեկամ, հարազատ և ընկեր զինվորներին և սպաներին: Բացի այդ, հենց «էլիտար» կենսառճ ունեցողներն են հաճախ բնակչության կողմից մատնանշվում իբրև հայաստանյան հասարակության մեջ արմատավորված անհավասարության ապացույց և պատճառ՝ զինծառայությունից խուսափելու, տվյալ հեղինակազուրկ էլիտաներին չպաշտպանելու և իրենց շահերին չծառայելու: Մինչդեռ «Ազգ–բանակ» հայեցակարգային ուղենիշերի առումով անհրաժեշտ է բանակի մարտունակության և հեղինակության ապահովումը հասարակության բոլոր շերտերի և պետության բոլոր մարմինների միասնական ջանքերի միջոցով, այդ թվում և, հատ-

[12] Տես նույն տեղում:

կապես՝ պետական իշխանության ինստիտուտների արդյունավետ գործառման և հասարակության աչքերում հեղինակության ապահովման շնորհիվ:

Այսպես. 2015 թ. մայիս–սեպտեմբեր ամիսներին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի մասնագետների կողմից իրականացված հետազոտության արդյունքների համաձայն՝ հարցվողների կողմից նշվել են բանակում ծառայել չցանկանալու հետևյալ պատճառները* (գծապատկեր 3).

Գծապատկեր 3



Բանակի հեղինակության վրա բանակում կոռուպցիոն դրսևորումների ազդեցության մասին բնակչության ընկալումները պարզելու համար տրվել է հարց, թե ինչպես է փոփոխվել կոռուպցիայի հետ կապված իրավիճակը բանակում վերջին 5 տարիների ընթացքում: Ստացվել են հետևյալ արդյունքները (գծապատկեր 4).

Տվյալների համաձայն՝ չնայած բավականին մեծ տոկոս են կազմում այն քաղաքացիները, որոնք լավատես են Հայոց բանակում վերջին տարիներին կոռուպցիայի նվազման վերաբերյալ, այնուամենայնիվ, քիչ չեն նաև նրանք, ովքեր գտնում են, որ կոռուպցիան բանակում կա՛մ մնացել է նույնը, կա՛մ ավելացել է: Այս հանգամանքը ավելի է կարևորում բանակի իմիջի ապահովման գործընթացներում բանակում հակակոռուպցիոն պայքարի իրականացումն ու դրա լուսաբանումը հասարակայնության լայն շերտերի, հատկապես թիրախային խմբերի համար:

* Հետազոտության ընթացքում իրականացվել է հարցաթերթիկային հարցման Երևանի, ինչպես նաև համեմատության համար՝ Արարատի և Վայոց Ձորի մարզերի սահմանամերձ գյուղական համայնքների բնակչություն, ընդհանուր առմամբ 940 հոգի:

Գծապատկեր 4

ԻՆՉՊԵ՞Ս Է ՓՈՓՈԽՎԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՆԱԿՈՒՄ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



Զինծառայողների սոցիալական ապահովվածությունը զինծառայողի մասնագիտության հեղինակության կարևոր բաղկացուցիչներից է: Համապատասխանաբար, նշված հետազոտության ընթացքում փորձ է արվել պարզել, թե ինչպես են հարցվողները գնահատում զինծառայողի հեղինակությունը՝ ըստ իր և իր ընտանիքի սոցիալական ապահովվածության հեռանկարների (գծապատկեր 5).

Գծապատկեր 5

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ



Կարելի է նկատել, որ **զինծառայողի կերպարը բնակչության շրջանում դեռևս ասոցացվում է ցածր աշխատավարձ ստացող, ընտանիքի անդամներին դժվարությամբ սոցիալապես ապահովող, մասնագիտական որոշ սահմանափակ աճի հնարավորություն ունեցող, սակայն հեղինակություն վայելող անձի հետ**:

Ինչպես արդեն նշվել է, բանակի և զինծառայության հեղինակության ապահովման վրա ուղղակի և անուղղակի ազդեցություն ունի տեղեկատվահաղորդակցական համակարգն ու հասարակության մեջ մշտապես շրջանառ-

վող պաշտոնական և ոչ պաշտոնական տեղեկատվությունը կարևոր երևույթների և իրադարձությունների վերաբերյալ: Կարելի է տեսնել, որ բանակի և զինծառայության մասին քաղաքացիների տեղեկացվածությունը առաջին հերթին պայմանավորված է հարազատների և ծանոթների կողմից իրենց զինծառայության մասին պատմություններով, ապա՝ պաշտոնական լրատվությամբ (գծապատկեր 6).

Գծապատկեր 6

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՆ

Վստահության մակարդակը հայոց բանակի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրներին, %



Այսպիսով՝ բանակի և զինծառայողների իմիջը համալիր երևույթ է, որը պայմանավորված է ոչ միայն գործառնական արդյունավետությամբ, այլև բազմաթիվ սոցիալ-մշակութային գործոններով, ինչպես նաև այդ իմիջն ապահովող տեղեկատվահաղորդակցական գործընթացներով:

Բանակի և զինծառայողների վերաբերյալ համարժեք ընկալումն ինչպես իրենց իսկ զինծառայողների, այնպես էլ ամբողջ հասարակության կողմից էապես նպաստում է բանակում առողջ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ձևավորմանն ու համագործակցային մշակույթի սերմանմանը, արդյունքում՝ զինված ուժերի առջև դրված խնդիրների արդյունավետ լուծմանը:

Համապատասխանաբար, ՀՀ ԶՈՒ-ի արդի բարեփոխումների համակարգում միջազգային համարժեք փորձի հաշվառմամբ բանակի արդյունավետության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է ներդրել բանակի և զինծառայողների կերպարի մշտական բարելավմանն ուղղված նորարարական մեթոդներ: Սա ենթադրում է համալիր մոտեցում, որը կներառի.

- բանակի իմիջի վրա ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցող գործոնների (սոցիալ-հոգեբանական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական) հաշվարկում, վերահսկում, բարելավում,

- հասարակության մեջ բանակի և զինծառայության հեղինակության քարոզում՝ հաշվի առնելով թիրախային լսարանների հոգեբանության առանձնահատկությունները և արժեհամակարգը: Այդ նպատակով ինչպես բանակի ներսում սոցիալ-հոգեբանական աշխատանք իրականացնող, այնպես էլ հասարակայնության հետ կապերն ապահովող ՊՆ կառույցներում ներգրավել տարիքային հոգեբանության, սոցիոլոգիայի, հասարակայնության հետ կապերի, սոցիալական աշխատանքի ոլորտների ժամանակակից մասնագետներին,
- բանակում զինծառայության հետ կապված ռիսկերի նվազեցում, առկա ներքին հիմնախնդիրների և հակասությունների կարգավորում, թիրախային լսարանին զինծառայության վերաբերյալ ամբողջական և մշտական տեղեկացվածության ապահովում,
- հասարակության մեջ ձևավորված՝ սպաների ոչ միանշանակ ընկալումների պատճառների բացահայտում, հայ սպայի դրական-կառուցողական կերպարի խրախուսում և հանրայնացում,
- ռազմասոցիոլոգիական հետազոտությունների շարունակական իրականացում հասարակության՝ բանակի և զինծառայողների մասին ընկալումների վերաբերյալ, ինչպես նաև զինվորական կոլեկտիվներում՝ կոնֆլիկտային իրավիճակների աղբյուրների և ռիսկերի մշտական բացահայտման և շտկման նպատակով,
- բանակում բարեվարքության մշակույթի տարածմանն ուղղված միջոցառումների մշտական իրականացում,
- բանակ–ԶԼՄ համագործակցային փոխհարաբերությունների ամրապնդում, «ներդրված լրագրողների» համակարգի ամրապնդում, այդ թվում՝ բանակային իրադարձություններն ու հակամարտությունը լուսաբանող լրագրողների մասնագիտական վերապատրաստում:

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

«ազգ–բանակ» հայեցակարգ – концепция «нация–армия»; "nation–army" concept

ամրոց – крепость; 1. castle, 2. fortress

աշխարհազոր – ополчение; home guard, voluntary military forces, militia

արհեստավարժություն – профессионализм; professionalism

բազմարար – мультипликатор; multiplier, booster

գործիքարան – инструментарий; instruments, tools

ենթակառուցվածքի թվայնացում – диджитализация инфраструктуры; digitalization of infrastructure

զորակայան – 1. военная база, база, 2. стоянка; 1. base, military base, 2. station

էլեկտրոնային կառավարում – электронное правительство; e-government

էվոլյուցիա – эволюция; evolution

ինքնակազմակերպում – самоорганизация; self-organization

ինքնության պահպանում – сохранение самости; maintenance of identity

իրավազրկություն – 1. бесправие, 2. лишение прав; 1. violation of smb's rights, 2. deprivation of rights

լախտ – 1. булава, 2. кнут; 1. mace, 2. whip

կիբեռանվտանգություն – кибербезопасность; cybersecurity

կիբեռթվային դիվանագիտություն – цифровая дипломатия; digital diplomacy

կիբեռթվային ժողովրդավարություն – цифровая демократия; digital democracy

կիբեռհանցագործություն – киберпреступление; cybercrime

հաղթաթուղթ – козырь; trump

համադրում – синтез, синтезирование; synthesis

համընդգրկունություն – всеобъемлемость; inclusiveness

համընդհանրացում – глобализация; globalization

հանրագիր – петиция; petition

հաստատութենական ապահովում – институциональное обеспечение; institutional support

հոգեբանական ընտրազատում – психологический отбор; psychologic selection

հոգեծին կորուստ – психогенная потеря; psychogenic loss

հոլովույթ – տես *էվոլյուցիա*

հրամայական – императив; imperative

նախակատարվածք – задел; groundwork

նորամուծություն – инновация; innovation

շարժառիթավորում – мотивация; motivation

պատրիարքարան – резиденция пат-

риарха; patriarchate
պատրիարքություն – патриаршество; patriarchate
պետութենաշինություն – строительство государства; state building
սղնախ – տես *ամրոց*
ուղենիշ – ориентир, веха; guideline, landmark,
քաղաքացիացում – гражданизация; civilianization

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

база—см. *военная база*
бесправие – իրավազրկություն
булава – լախտ
веха – см. *ориентир*
военная база—զորակայան
всеобъемлемость – համընդգրկունություն
глобализация – համընդհանրացում
гражданизация – քաղաքացիացում
диджитализация инфраструктуры – ենթակառուցվածքի թվայնացում
задел – նախակատարվածք
императив – հրամայական
инновация – նորամուծություն
институциональное обеспечение – հաստատութենական ապահովում
инструментарий – գործիքարան
кибербезопасность–կիբեռանվտանգություն
киберпреступление – կիբեռհանցագործություն
кнут – լախտ
козырь – հաղթաթուղթ
концепция «нация–армия» – «ազգ–բանակ» հայեցակարգ
крепость – ամրոց, սղնախ
лишение прав – իրավազրկություն
мотивация – շարժառիթավորում
мультипликатор – բազմարար
ополчение – աշխարհազոր
ориентир – ուղենիշ
патриаршество – պատրիարքություն
петиция – հանրագիր
профессионализм – արհեստավարժություն
психогенная потеря – հոգեծին կորուստ
психологический отбор – հոգեբանական ընտրազատում
резиденция патриарха – պատրիարքարան
самоорганизация – ինքնակազմակերպում
синтез – համադրում
синтезирование – см. *синтез*
сохранение самости – ինքնության պահպանում
стоянка—զորակայան
строительство государства – պետութենաշինություն
цифровая демократия – կիբեռթվային ժողովրդավարություն
цифровая дипломатия – կիբեռթվային դիվանագիտություն
эволюция – էվոլյուցիա, հոլովույթ
электронное правительство–էլեկտրոնային կառավարում

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

base – զորակայան
booster – see *multiplier*
castle – ամրոց, սղնախ
civilianization – քաղաքացիացում
cybercrime – կիբեռհանցագործություն
cybersecurity – կիբեռանվտանգություն
deprivation of rights–իրավազրկություն

digital democracy – կիբեռթվային ժողովրդավարություն
digital diplomacy – կիբեռթվային դիվանագիտություն
digitalization of infrastructure – ենթակառուցվածքի թվայնացում
e-government – էլեկտրոնային կառավարում
evolution – էվոլյուցիա, հոլովույթ
fortress – ամրոց, սղնախ
globalization – համընդհանրացում
groundwork – նախակատարվածք
guideline – ուղենիշ
home guard – աշխարհազոր
imperative – հրամայական
inclusiveness – համընդգրկունություն
innovation – նորամուծություն
institutional support – հաստատութենական ապահովում
instruments – գործիքարան
landmark – see *guideline*
mace – լախտ
maintenance of identity – ինքնության պահպանում
military base – see *base*
militia – see *home guard*
motivation – շարժառիթավորում
multiplier – բազմարար
"nation–army" concept – «ազգ–բանակ» հայեցակարգ
patriarchate – 1. պատրիարքություն, 2. պատրիարքարան
petition – հանրագիր
professionalism – արհեստավարժություն
psychogenic loss – հոգեծին կորուստ
psychologic selection – հոգեբանական ընտրազատում
self-organization – ինքնակազմակերպում
state building – պետութենաշինություն
station – զորակայան
synthesis – համադրում
tools – see *instruments*
trump – հաղթաթուղթ
violation of smb's rights – իրավազրկություն
voluntary military forces – see *home guard*
whip – լախտ

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Նախագծի գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), քաղաքագիտության պրոֆեսոր,
ԱՄՆ-ի ՊԱՀ-ի հրավիրված առաջատար պրոֆեսոր և հակաահաբեկչության գծով
գիտնական-փորձագետ, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված
իսկական անդամ, գեներալ-լեյտենանտ *Հ. Ս. Քոքանջյան*

Գիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայաստանի գիտության
վաստակավոր գործիչ *Ն. Հ. Հովհաննիսյան*

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անտոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*
Թարգմանչության խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Մ. Ս. Ավետիսյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի,*
Դ. Ս. Չիլինգարյանի

Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագրումը՝ *Մ. Ս. Ավետիսյանի,*
Ա. Ա. Մարտիրոսյանի, Թ. Դ. Չիլինգարյանի

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի,*
Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի*
և ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2016 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 140 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,25 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,
«Russian Baltica», «Times» և «Times New Roman»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԷՅՋԻ ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում

Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը
և ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը
մարտական հենակետերից մեկում

2016 թ. դեկտեմբերի 10

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 4 (90). 2016